


ԱՆԻ ՈՒԹՈՒԳՅԱՆ

**ՄԻՔԱՅԵԼ ԶԱՄԳՅԱՆ
ԿՅԱՆՔԸ, ԳՈՐԾԸ**



ԵՐԵՎԱՆ 2019



ՀՀԲ: 942 925 Գրքեր

1619 #50



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆԻ ՈՒԹՈՒԶՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ԶԱՄՉՅԱՆ
ԿՅԱՆՔԸ, ԳՈՐԾԸ

Handwritten signature

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱԼ
ՄԱՏԵԼԱԵԱՐ
190



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
190

Handwritten signature



ԵՐԵՎԱՆ - 2019

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Ը)

Ու 270

**Աշխատությունը հրատարակության է երաշխավորել
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը**

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր **Հայրապետ Մարգարյան**

Գրախոս՝ պ.գ.թ. **Արթակ Մաղայան**

Ութուցյան Ա.Ա.

Ու 270 Միքայել Չամչյան. կյանքը, գործը/ Ա. Ա. Ութուցյան.- Եր.:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2019.- 112 էջ:

Սույն աշխատությունը ընթերցող լայն հասարակությանն է ներկայացնում հայ ականավոր պատմաբան, լեզվաբան, քերականագետ, կրոնական-հասարակական գործիչ, մանկավարժ Միքայել Չամչյանի կյանքի և հայագիտական գործունեության նկարագիրը: Պատմա-քննական վերլուծության է ենթարկվում Մ. Չամչյանի «Պատուիին Հայոց» երկասիրությունը, բացահայտվում է նրա դերը հայ պատմագիտության զարգացման գործում, մատնաշնվում է հեղինակի տեղը հայ բազմադարյան պատմության անընդմեջ շղթայում:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Ը)

ISBN 978-9939-860-77-0

© ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2019

© Ութուցյան Ա.Ա., 2019

//
//

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասական հայագիտության նշանավոր ներկայացուցիչների առաջին շարքում առանձին տեղ է գրավում ականավոր պատմաբան և քերականագետ, մանկավարժ, հասարակական-մշակութային գործիչ և աստվածաբան Միքայել Չամչյանը: Նա պատկանում է մեր այն մեծերի թվին, որոնք իսկապես մտքի ու աշխատանքի տիտաններ էին և իրենց ստեղծագործական լարումով ու մաքառումներով նոր ուղիներ են բացել հայոց մշակույթի մեջ, մեծապես նպաստել սերունդների դաստիարակությանը: Նրա թողած գիտական ժառանգությունն այսօր հիրավի զարմանք, հիացմունք և պատկառանք է պատճառում: Առասպելական, մեկ մարդու ուժերից վեր, լայնահուն, հանրագիտական բնույթի գործունեություն է ծավալել Չամչյանը: Հատկապես նշանակալից ու անգնահատելի է նրա ավանդը հայ ժողովրդի ամբողջական ու համահավաք պատմության ստեղծման գործում: Նրա «Պատմութիւն Հայոց»-ը, XVIII–XIX դդ. հայ պատմագիտական մտքի ամենաաչքի ընկնող կոթողներից մեկը, հավերժացրեց Չամչյանի անունը հայ պատմագիտության ոսկե անդաստանում: Նա առաջինն էր, որ եռհատոր «Պատմութիւն Հայոց» երկասիրությամբ հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությունը դուրս բերեց խանձարուրային վիճակից եւ դրեց զարգացման նոր ուղեգծի վրա: Այսուհանդերձ, Մ. Չամչյանն իր պատմահայեցողության հիմնական

գծերով դեռևս կապված էր միջնադարյան հայ ավանդական պատմագրության հետ և վերջինիս շարունակողն էր: Նա չկարողացավ լիովին ազատվել սխոլաստիկ պատկերացումներից և միջնադարյան մտածողությունից: Հենց այս ի նկատի ուներ հայ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, որը, քննադատելով Չամչյանին այն բանի համար, որ վերջինս իր հաստատվող հատորներում չէր կարողացել պարզաբանել Հայաստանի պատմության իրական ընթացքը, գրում է. «Բայց մենք չենք մեղադրում Չամչյանին, նա էլ նախորդների նման մի վարդապետ էր»¹: Սակայն, ինչպես իրավացիապես նշում է Աշ. Հովհաննիսյանը, Մ. Նալբանդյանը Մ. Չամչյանի նշյալ գործին մոտենում էր «ոչ թե պատմագիտության անցյալի, այլ նրա արդիական խնդիրների տեսանկյունից»²: Ուստի պատմագիտության անցյալի տեսանկյունից գնահատելով Մ. Չամչյանին, նշենք, որ նա շատ կողմերով էր տարբերվում միջնադարի մեր մյուս պատմագիրներից: Նախ՝ մինչև Մ. Չամչյանն ստեղծված պատմագիտական բոլոր երկերը (բացառությամբ թերևս Մովսես Խորենացու «Հայոց Պատմության») սուկ ժամանակագրություններ, տոհմագրություններ և կամ որոշակի ժամանակահատվածի պատմություններ էին, իսկ Մ. Չամչյանի մշակութային-գրական գործունեության նշանակությունը, հայ պատմագիտությանը մատուցած նրա նպաստը կայանում է նրանում, որ նրա «Պատմութիւն Հայոցը» առաջին համահավաք ու ընդհանրացնող երկն էր՝ նվիրված հայ ժողովրդի պատմության անցյալին, որտեղ իմի են բերված և վերլուծված միջնադարյան հայ մատենագրություն մեջ և օտար աղբյուրներում պահպանված տեղեկությունները հայ ժողովրդի և նրա հայրենիքի մասին: Այն մեծապես օգնեց ժամանակակիցներին և սերունդ-

¹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ. Երեւան, 1940, հատ. 3, էջ 263:

² Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2-րդ, Երեւան, 1956, էջ 497:

ներին՝ ճանաչելու իրենց որպես ժողովուրդ՝ իրենց իսկ պատմության հիման վրա: Անուրանալի է նաև Չամչյանի դերը Եվրոպայի մշտնջենավոր հայագիտական կենտրոնի՝ Մխիթարյանների դպրոցի համբավի և փառքի տարածման գործում:

Միքայել Չամչյանի գիտական վստահական գնահատությունը հայագիտության մեջ սկիզբ է առնում տալկավիճի պատմաբանի մահվանից անմիջապես հետո, հատկապես Մխիթարյան միաբանության տարելիցների առնչությամբ: Պետք է նշել, որ Չամչյանին նվիրված ուսումնասիրությունների գերակշռող մասը կենսագրականներ են՝ գրված հիմնականում Մխիթարյանների կողմից: Դրանք, ըստ էության, կրկնում են միմյանց, սխեմատիկ են, հեղինակները մեծ մասամբ ծանրացել են նրա կրոնական աշխատությունների գնահատման վրա: Նման պայմաններում, հասկանալիորեն, սովերի մեջ էր մնում Չամչյան-պատմաբանի դիմագիծը, վեր չէր հանվում նրա դերը հայ պատմագիտության զարգացման գործում, չէր մատնանշվում նրա տեղը հայ պատմագիտության անընդմեջ շղթայում:

Մ. Չամչյանի գիտական ժառանգության գնահատման անդրանիկ փորձերը կատարվել են Փարիզում լույս տեսնող «Journal Asiatique» հանդեսում տպագրված նրա մահախոսականում³, Սուքիաս Սոմալյանի⁴ և գերմանացի հայագետ Կարլ Նոյմանի⁵ հայ գրականության պատմությանը նվիրված ուսումնասիրություններում: Սրանցում տրված է պատմաբանի համառոտ կենսագրականը, վերլուծության են ենթարկված նրա քերականագիտական, կրոնական և մեկնողական բնույթի երկասիրությունները: Հեղինակները համա-

³ «La mort du P.M Chamchian a Constantinople». տե՛ս "Journal Asiatique", Paris, Janvier 1824:

⁴ S.P. Somal Vuadro della storia litteraria d'Armenia, Venezia. S.Lazzaro, 1829, էջ 193-194:

⁵ G.F. Neumann, Versuch einergeschichte der armenischen literatur nach den Verken der Mechitaristen. Leipzig. Barth, 1836, էջ 295-297:

ոտու ու սեղմ գծերով տվել են նաև Չամչյանի Պատմության արժանիքները՝ ներկայացնելով այն որպես իրենց ժամանակի հայ պատմագիտական մտքի խոշորագույն նվաճում:

Չամչյանի կյանքին ու գործունեությանն անդրադարձող առաջին ընդարձակ ուսումնասիրությունը պատկանում է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Մատթեոս վարդապետ Մադաք-Թեոփիլյանցի գրչին⁶: Կաթոլիկական շեշտված մտայնությամբ տոգորված այս հեղինակի գործը մեզ հետաքրքրում է նախ և առաջ նրանով, որ լինելով Չամչյանի ժամանակակիցը և երկար տարիներ ուսանած լինելով նրա մոտ, Թեոփիլյանցը նրա մասին կենսագրական հավաստի տեղեկություններ է հաղորդում: Ի դեպ, պետք է նշել, որ Չամչյանի հետագա կենսագիրները, ուղղակիորեն կամ միջնորդավորված, նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող նյութերը քաղել են այդ աշխատությունից: Իբրև ջերմեռանդ կաթոլիկ՝ Թեոփիլյանցը հատկապես խոր ակնածանքով է շեշտում այն հանգամանքը, որ Չամչյանը «սքանչելի պատճառաբանութեամբք», չունենալով ձեռքի տակ որևէ փաստ, գուշակել է այս կամ այն հայ գործչի, այս կամ այն կաթողիկոսի ուղղափառ լինելը և մերժել նրանց հերձվածողներ համարող տեսակետները: Հենց այս տեսակետից է կենսագրողը գնահատել Չամչյանին, թե նրա «անուն մնաց ի բովանդակ ազգին մեծարեալ իբրև ճշմարիտ առաքինի և իմաստուն հոգեսեր և հոգեշահ»⁷: Մ. Չամչյանի կյանքն ու գործունեությունը թոուցիկ ակնարկի ձևով ներկայացված են Ն. Ճիվանյանի, Ա. Այվազյանի կազմած բառարաններում⁸ և Եղիշե վարդապետ Դուրյանի հայ մատենագրության պատմությանը նվիրված երկասիրության

⁶ Մ.Վ. Մադաք-Թեոփիլյանց, Կենսագրություն երեւելի արանց, հատ. Ա, Վենետիկ, 1839, էջ 811–813:

⁷ Նույն տեղում, էջ 812–813:

⁸ Ն. Ճիվանյան, Առձևոն բառարան հատուկ ամվանց, մասն 2-րդ, Կ.Պոլիս, 1879, էջ 145, Ա. Այվազյան, Շար հայ կենսագրությանց, Կ.Պոլիս, 1893, էջ 53–56:

էջերում⁹: Մեր կարծիքով առաջինը Դ.ւրյանն էր, որ Չամչյանի «Հայոց պատմության» երեք հաստափոր հատորների ճշտող ազդեցության ներքո նրանց հեղինակին պատվում է «Հայր հայոց պատմության» գերագնահատող տիտղոսով:

XVIII դարի երկրորդ կեսից սկսած Վենետիկի Մխիթարյան միաբանության կրթական, գրական, բանասիրական, պատմագիտական և կրոնական ընդհանուր գործունեությունը քննարկման առարկա է դարձել հայ հասարակական-քաղաքական հոսանքների առանձին ներկայացուցիչների համար: Նրանցից շատերը, բնականաբար, անդրադարձել են նաև Չամչյանի դերի գնահատմանը: Ի տարբերություն վերոհիշյալ հեղինակների անքննադատ ու աչառու մոտեցմանը, նախ ազգային-պահպանողական, ապա լիբերալ Ա. Երիցյանը Մխիթարյաններին նվիրված իր ուսումնասիրության¹⁰ մեջ հիմնականում ճիշտ գծերով է ներկայացնում Մխիթարյան միաբանության առաջին երեք սերունդների, այդ թվում և Չամչյանի որդեգրած «փօլիթիքա»-ի էությունը, դրական գնահատական է տալիս միաբանության հայագիտական գործունեությանը: Լինելով Մխիթարյան միաբանության պատմությունը պատկերող առաջին լուրջ և օբյեկտիվ ուսումնասիրությունը՝ Երիցյանի գիրքը մեծ դեր կատարեց Մխիթարյան հայրերի կողմից «սրբի լուսապսակով» ներկայացվող Մխիթար Աբբայի, Ստեփանոս Մելքոնյանի, Միքայել Չամչյանի և այլոց իրական նկարագիրն ու նրանց ընդհանուր մտայնությունները պատկերելու գործում: Հեղինակն ըստ արժանվույն գնահատելով հայ պատմագիտությանը Չամչյանի մատուցած ծառայությունները, միաժամանակ չի մոռանում նշել, որ նրա Պատմությունը «տիրող անձանց հաջորդության պատմությունն է, բայց ոչ ազգի ներքին կենսաց»: Երիցյանը տուրք չտվեց Հայ առաքելական եկեղեցու որոշ

⁹ Ե. Դուրյան, Պատմություն հայ մատենագրության, Կ.Պոլիս, 1885, էջ 90-91:

¹⁰ Ալ. Երիցյանց, Վենետիկի Մխիթարյանք. Թիֆլիս, 1883:

սպասավորների կողմից Չամչյանի աշխատության արժանիքներն ամբողջովին սևացնելու և անտեսելու ավանդական միտումին, այլ կարողացավ օբյեկտիվորեն ցույց տալ նրա արժանիքները և մատնանշել թերությունները: Երիցյանը յուրովի է հասկացել նաև Չամչյանի քարոզած «հայրենասիրության» բուն էությունը, երբ գրում է. «Մինչև V դարը Չամչյանը յուր պատմության մեջ կուրորեն ազգասեր է, բայց Քաղկեդոնի ժողովից հետո նա ազգային եկեղեցվո հետ թշնամությամբ վարվող մի կայսրիկ է»¹¹: Երկու դեպքերում էլ բուն ճշմարտությունը զոհ է գնում հեղինակի սխալ տեսակետին:

Լիբերալ-բուրժուական հոսանքի պարագլուխ Ստ. Նազարյանցը «Պատմություն հայոց ազգի» աշխատության մեջ նույնպես անդրադարձել է Չամչյանի գնահատականին:

Ընդհանրապես ճիշտ գնահատելով Չամչյանի երկասիրությունը որպես «Մի անօրինակ աշխատասիրության արդյունք», իրավացիորեն գրելով, թե կղերական պատմագրությունը մինչև այժմ գտնվում է «խրված աղայական կոշիկների մեջ, որովհետև դոքա հեղինակը մինչև այսօրս եղած են արեղա մարդիկ և այլն, պապական եկեղեցու արեղայք», Ստ. Նազարյանցը ընկնում է ծայրահեղության մեջ, երբ գտնում է, որ Չամչյանի հատորները կարող են «համարվիլ հավաքածո զանազան պիտանի տեղեկությունների հայոց պատմության մասին, քան թե պատմական հոգով և ոճով գրած գործ»: «Ասիացիք,- եզրակացնում է հեղինակը,- շատ անհմուտ են պատմության արվեստին, ոչինչ կարող չեն պատմել առանց ընկնելու ճարտասանական և մանրամասն նկարագրության մեջ»¹²:

Վենետիկի Մխիթարյանների, այդ թվում և Չամչյանի, գործունեության լուսաբանման, նրանց պատմահայեցողության արժևորման գործում վճռական նշանակություն ունեն հեղափոխական-դե-

¹¹ Նույն տեղում, էջ 104:

¹² Տե՛ս Ս. Նազարյանց, Երկեր, հատ. 1-ին, Թիֆլիս, 1913, էջ 166:

մոկյատական հոսանքի պարագլուխ Մ. Նալբանդյանի հիշյալ հարցերին նվիրված երկասիրությունները, դիտողություններն ու ցուցումները: Չժխտելով Մխիթարյան հայագիտական դպրոցի մի շարք նվաճումները, Նալբանդյանը չէր կարող անքննադատ աչքով նայել նրանց կողմից ստեղծված կանխակալ տեսություններին, նեղմիտ պապականությանը և կրոնա-քաղաքական այն միտումին, որը հաճախ անցնում էր նրանց պատմագիտական ուսումնասիրությունների միջով¹³: Մերժելով Չամչյանի «մեծամարմին» հատորների մեջ տեղ գտած զեղումներն ու «ապացույցները», հայ ժողովրդի ու հայոց լեզվի առաջնության մասին և մատնացույց անելով հակապատմական այլ շեղումներ ևս, Նալբանդյանը ապագա պատմաբաններին առաջարկում էր գրել նոր հայոց պատմություն, «ոչ հում ու խակ, ինչպես մինչև այժմ կատարված է այդ գործողությունը, այլ եփած կրիտիկայի կրակով»¹⁴:

Քննության առարկա խնդրում իր ներդրումն է ունեցել նաև ակաևնավոր հայագետ Անոնդ Ալիշանը: Չամչյանին նվիրված կենսագրական ակնարկում Ալիշանը սեղմ գծերով ներկայացրել է նրա գործունեության հիմնական շրջանակները, արժևորել «Պատմություն հայոցը»՝ նրա հեղինակին անվանելով «գերագույն, իսկագույն պատմիչ հայոց»¹⁵:

Չամչյանին նվիրված մի շարք ուսումնասիրություններ կան գետեղված Վենետիկի Մխիթարյան միաբանության երկհարյուրամյա գրական գործունեության առթիվ լույս տեսած հրատարակություններում¹⁶: Դրանց մի մասը կրկնում են նախորդ հետազոտողների, մաս-

¹³ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հատ. 2-րդ, Երևան, 1947, էջ 260:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Ա. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 138–139:

¹⁶ Ա. Ղազիկյան, Համառոտ գրական պատմություն նշամավոր Մխիթարյան հարց Վենետիկո, տնս «Մխիթար»-թերթ, Վենետիկ, 1901, էջ 76–86, Հովհ. Այան Մխիթարյանը գրականության հանդեպ 1701–1901, Վենետիկ, 1902, էջ 35–40, Ա.

նավթբապետ Մ. Մաղաք-Թեոփիլյանի դրույթները, մյուս մասն էլ շատ քիչ բան են ավելացնում գոյություն ունեցող ընդհանուր պատկերացման վրա: Գրականագետ Արշակ Չոպանյանը հատուկ հոդվածով¹⁷ քննության է ենթարկել Վենետիկի Մխիթարյան միաբանության, այդ թվում և Մ.Չամչյանի գործունեությունը: Պետք է նշել, որ այստեղ որոշ ճիշտ դրույթների հետ մեկտեղ տեղ են գտել նաև Մխիթար Սեբաստացուն, Մ. Չամչյանին և այլոց գերազնահատող բնութագրումներ: Նա առանց վարանման Միքայել Չամչյանին, Մկրտիչ Ավգերյանին, Արսեն Բագրատունուն դնում է Դանթեի, Պետրարկայի, Տասսոյի կողքին և զուգահեռներ անցկացնում նրանց միջև, ամենևին նկատի չառնելով այն, որ Մխիթարյան գործիչների ձգտումները, հայացքները, մտորումները ընդհանուր աղերս չունեին վերոհիշյալ ըմբոստ մտածողների հետ: Մեր կարծիքով մակերեսային ու միակողմանի է նաև անվանի գրականագետի այն պնդումը, թե Չամչյանի եռհատորը եղավ մեզանում «հայրենասիրության և գեղեցկասիրության ամենեն շքեղ ծաղիկները ասեղնագործողը»: Այա չգուցե՞լով հիացմունքը Չամչյանի նկատմամբ, Չոպանյանը անվերապահորեն հայտարարում է՝ «Արդի հայության ստեղծողն է ան»¹⁸: Մեկ այլ կապակցությամբ, դարձյալ անրադառնալով Չամչյանի բնութագրմանը, Չոպանյանը գրում է. «Չամչյան, որ միննույն հայրենասիրական ձգտումով ու ծրագրով վերսկսած է Խորենացիին գործը, անշուշտ շատ ավելի ընդարձակ, բազմատարր ու լիալիր ձևով

Ղազիկյան, Պատկեր Վենետկան Մխիթարյան հայկաբանության, տե՛ս «Գեղունի», Վենետիկ, 1903, էջ 37–40, Բ. Մարգիսյան, Երկհարյուրամյա գործունեություն և նշանավոր գործիչներ Վենետիկ Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1905, էջ 8–42, Ա. Տեր-Միքելյանց, Մխիթարյանք գրականության առջև. տե՛ս «Բիւզանդիոն». 1901, էջ 76–83, 85–88:

¹⁷ **Ա. Չոպանյան, Մխիթարյանց գործը, տե՛ս Ա. Չոպանյան, Դեմքեր, հատ 1-րև. Փարիզ, 1924, էջ 49–61, տես նաեւ նույնի՝ «Վենետիկի Մխիթարյանը», «Անահիւտ» ամսագիր, Փարիզ, 1899, N 12, էջ 357–370:**

¹⁸ **Ա. Չոպանյան, Վենետիկի Մխիթարյանները, էջ 360:**

մը կատարած է զայս և արդի հայությունը եթե խրոխտ անցյալի մը գավակն ըլլալուն գիտակցություն ունեցած է՝ առի կպարտի ոչ թե ուղղակի Խորենացիին, այլ Միքայել Չամչանին, անոր գործին եւ անկից ծնած բազմաթիվ հայոց պատմության դասագրքերուն»¹⁹:

Ամերիկահայ պրոֆեսոր Մարտիրոս Անանիկյանը, հետևելով Չոպանյանին, Չամչանի վաստակի բնութագրմանը նվիրված իր հոդվածում նույնպես առանց վարարման, նրա հայրենասիրությունն ու ազգասիրությունը որակում է որպես «վսեմագույն մոլություն, որը մեզի սորվեցուց լինել թե հայրենասեր և թե ազգասեր»²⁰:

Անշուշտ, նշված հեղինակները գերազնահատել են Չամչանի դերը: Նրանց պնդումները հեռու են Չամչանի ճշգրիտ գնահատությունից և նրա գործի օբյեկտիվ մեկնաբանությունից: «Պատմություն հայոցի» պատմաքննական վերլուծությունը ցույց է տալիս, որ Չամչանի հայրենասիրությունը կրել է չափազանց որոշակի բնույթ. այն խարսխվել է տիրասիրական գաղափարախոսության, թագավորների և եկեղեցու պաշտամունքի վրա:

Մեծավաստակ պատմաբան Լեոն իր «Հայոց պատմության» համապատասխան բաժնում բավականին ընդարձակորեն քննության է ենթարկել Չամչանի գիտական վաստակը²¹: Ի դեպ, մեր կարծիքով, Լեոյի այդ և Մխիթարյանների վերաբերյալ այլ աշխատություններում արտահայտած տեսակետները ամբողջության մեջ ճիշտ են բնութագրում և ներկայացնում Չամչանին և մյուս Մխիթարյաններին: Լեոն առաջիններից մեկն էր, որ քննական մոտեցման ենթարկեց Մխիթարյանների գաղափարախոսությունը քողարկող և նրաց դերը գերազնահատող բանասերներին և համոզիչ փաստերով

¹⁹ Նույնի, Դեմքեր, հատոր 1-ին, էջ 50:

²⁰ Մ. Անանիկյան, Քննական ուսումնասիրություններ, Նյու-Յորք, 1932, էջ 232:

²¹ Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ, Երևան, 1946, էջ 1011-1019. տե՛ս նաև Նույնի՝ «Հայոց գրականությունը 18-րդ դարում», «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1901, 1, 2, 4, 8 և այլն:

ապացուցեց, որ «իսկական հայրենասեր» համարվող Մխիթար Աբբան և Մ. Չամչյանը երբեք էլ չեն շեղվել կաթոլիցիզմի ավանդական ուղեգծից: Լենն առաջիններից մեկն էր նաև, որ չսահմանափակվեց Չամչյանի տիտանական աշխատասիրության մասին բազմիցս կրկնված հայտարարություններով, այլ հմտորեն կարողացավ մատնացույց անել Մխիթարյան այդ գործչի առաջադրած կղերական գաղափարախոսության պատգամները, պատմագիտական հայացքների ու մտորումների բնորոշ հատկանիշները:

Քննարկվող խնդրին գրեթե նույն մոտեցումն է ցուցաբերել նաև հայ պահպանողականության ինքնատիպ ներկայացուցիչ Մ. Օրմանյանը: Արտահայտելով իր վերաբերմունքը դեպի Չամչյանը և ըստ արժանավույն գնահատելով վերջինիս «մեծ գործը»՝ Օրմանյանը միաժամանակ նշում է դրանց կաթոլիկական շեշտվածությունը: «Չամչյանի Պատմությունը,- գրում է նա,- անկախաբար պատմական տեսակետով ունեցած իր արժանիքեն,- կանխամտածված եւ սևեռյալ որոշ գաղափարի ծառայող գործ մըն է, ամեն առիթի մեջ հայերը Հոռմի մոտ, Հոռմի հետևող, Հոռմի հպատակող ցուցանելու համար անխտիր ընդունելով քմահաճ մեկնություններ և թյուրիմաց տեսություններ»²²: Անհրաժեշտ է նշել նաև Մ. Պոտորյանի, Հ. Պապակյանի, Մ. Ճանաչյանի այն ուսումնասիրությունները²³, որոնցում արձածվել են Մ. Չամչյանի պատմահայեցողությանը վերաբերվող մի շարք տեսակետներ: Նշված երեք Մխիթարյան հեղինակներն էլ, չշեղվելով ավանդական ուղեգծից, անքննադատ ու միտումնավոր գույներով են պատկերել Չամչյանի վաստակը, իսկ Հովհաննես Պապակյանը այնքան է ոգևորվել, որ Չամչյանի «Հայոց Պատմությունը» հա-

²² Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. 2-րդ, Կ. Պոլիս, 1914, էջ 3161:

²³ Մ. Պոտորյան, Մխիթար և Մխիթարյանոյ, Բուխարեստ, 1922, Հ. Պապակյան, Մխիթար Աբբա եւ Մխիթարյանները, Նյու-Յորք, 1944, էջ 41-50, Մ. Ճանաչյան, Պատմություն արդի հայ գրականության, Վենետիկ, 1953, էջ 36-45:

մարում է այն ամենակատարյալն ու լավագույնը, որ երբևիցե տվել է հայ պատմագիտական միտքը: Ինչպես ակներև է, այս դեպքում ևս գործ ունենք Չամչյանի վաստակի անըննադատ հերթական գնահատականի հետ:

Մ. Չամչյանի ծառայությունները հայ պատմագիտության զարգացման ասպարեզում արժևորվել են նաև Մ. Դարբինյանի, պրոֆեսորներ Ա. Առաքելյանի և Ս. Պողոսյանի կողմից: Այս ուսումնասիրությունները խիստ համառոտ են և հեռու են Չամչյանին ամբողջականորեն ներկայացնելու որևէ միտումից²⁴:

Չամչյանագիտությանը գնահատելի և շնորհակալ նպաստ բերեց Մխիթարյան միաբան Հ. Սահակ Ճեմհեմյանն իր ուսումնասիրություններով: Հիմնվելով Ս. Ղազարի դիվանական աղբյուրների վրա, նա մանրամասն ներկայացրել է «Պատմություն հայոց» երկասիրության գաղափարի մտահաղացման, կատարված տքնաջան աղբյուրագիտական աշխատանքի և այնուհետև եռահատոր աշխատության լույս ընծայման ու արժանացած արձագանքների պատմությանը՝ համեմված կենսագրական ակնարկներով²⁵:

Առանձին հոդվածով Ճեմհեմյանը անրադարձել է նաև 1809 թ. Պոլսի միութենական շարժմանը՝ որպես աղբյուր ունենալով Մ. Չամչյանի 1810 թ. մարտի 25-ի նամակը, որն այս շարժման առաջին չորս ամիսների (սեպտ-դեկտ.) օրագրությունն է²⁶:

Մենք ևս Մ. Չամչյանի կյանքին, գործունեությանը և պատմագի-

²⁴ Մ. Դարբինյան, Հայ պատմագրությունը XIV–XVIII դարերում: Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 4-րդ, 1972, էջ 505–507: Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հատ. 3-րդ, Երևան, 1975, էջ 36–77: Ս. Պողոսյան, Միլլայեյ Չամչյան, տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչները, Երևան, 1975, էջ 536–543:

²⁵ Հ.Ս. Ճեմհեմյան, «Հ. Միլլայեյ Չամչեան եվ իր Հայոց Պատմութիւնը», Բազմալկայ, 1981, հ. 3–4, էջ 300–355:

²⁶ Հ.Ս. Ճեմհեմյան, «1809 Պոլսոյ միութենական շարժումը և Հ. Միլլայեյ Չամչեան», Հանդես ամսօրյա, 1987:

տական հայացքներին նվիրված հոդվածներով²⁷ փորձել ենք մեր համեստ ներդրումն ունենալ և սույն աշխատանքով նաև ամբողջացնել հայագիտության նվիրյալի վաստակի գնահատականը:

²⁷ **Ութուլջյան Ա.**, Պոլսահայ համայնքների միության խնդիրը և Մ. Չամչյանը, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, N3, էջ 201–213, **Նույնի՝** Միրայել Չամչյանի պատմագիտական հայացքների գնահատման հարցի շուրջ, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1981, N 2, էջ 144–151, **Նույնի՝** Միրայել Չամչյանի «Պատմություն Հայոց» աշխատությունը, տես «Երևանի համալսարան», հանդես, 1985, N 3, 38–41, **Նույնի՝** Միրայել Չամչյան (կյանքի և գործունեության համառոտ ուրվագիծ) տե՛ս, «Լուսբեր», 1988, N 9, էջ 71–85, **Նույնի՝** Միրայել Չամչյանի դերը Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի ստեղծման գործում, տես «Բամավկա», Վենետիկ, 2001, N 1–4, էջ 241–250:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԻՔԱՅԵԼ ՉԱՄՉՅԱՆ

ԿՅԱՆՔԸ

Հայ մշակույթի վերանորոգվող կյանքը XVIII դարում առաջ քաշեց նաև պատմագիրների մի ամբողջ համաստեղություն՝ Եսայի Հասան-Ջալալյան, Աբրահամ Երևանցի, Աբրահամ Կրետացի, Սիմեոն Երևանցի, Խաչատուր Ջուղայեցի և այլք: Իր գիտական ժառանգության ընդգրկման լայնությամբ և խորությամբ, տաղանդի ուժով, ինչպես նաև ազգային-մշակութային գործունեությամբ, XVIII դարի վերանորոգության շարժման գործիչների շարքում յուրահատուկ տեղ է գրավում Միքայել Չամչյանը:

Միքայել (ավագանի անունով՝ Կարապետ) Չամչյանը ծնվել է 1738 թ. դեկտեմբերի 4-ին Կոստանդնուպոլսում²⁸: Հայրը՝ Աբրահամ Չամչյանը, պոլսահայ գաղթօջախի աչքի ընկնող դեմքերից մեկն էր: Լինելով գրասեր անձնավորություն՝ նա միջոցներ չի խնայում իր գավակների դաստիարակության և կրթության համար: Չամչյանը սկզբնական կրթությունն ստացել է սոնային դաստիարակների մոտ և ծննդավայրի կաթոլիկական վարժարանում, որն ավարտելուց հետո աշակերտում է իրենց ընտանիքի հեռավոր ազգական, արքունի ոսկերիչ Տյուգյան Միքայել ամիրային: Կարճ ժամանակամիջոցում

²⁸ Տե՛ս «Մխիթար» (1701–1901), բացառիկ պատկերագրող թերթ, Վենետիկ, 1901, էջ 218:

պատանի Կարապետն այնքան է հմտանում ոսկերչության արվեստում, որ համբավը տարածվում է ամբողջ քաղաքում, իսկ ժամանակակիցը հիացմունքով նրա մասին գրում է. «Ի Կոստանդնուպոլիս մի ոք կամ ոչ ոք նման նմա գտանի»²⁹: Միքայել ամիրան մտածում է նրան դարձնել գործընկեր և անգամ ամուսնացնել իր դստեր հետ: Տասնութամյա պատանուն սպասում էր արքունի ոսկերիչ դառնալու հրապտրիչ հեռանկարը: Սակայն, հակառակ հոր ցանկության և Տյուզյան ամիրայի ակնկալությունների, Չամչյանը, հրաժարվելով աշխարհիկ կյանքից, մտնում է Վենետիկի Մխիթարյան վանքը: Չամչյանի կաթոլիկ կենսագիրը պատանու այդ քայլը բացատրում է նրանով, որ նա «վառեալ էր յաւէտ ի փոյթ փրկութեան հոգւոյն»³⁰: Սակայն դա համոզիչ չի հնչում: «Հոգու փրկության» համար կարիք չկար այդքան հեռու գնալու: Նրան Ս. Ղազար էր տանում կղզյակի ուսումնասեր մթնոլորտն ու սովորելու անհագ տենչը: Չամչյանի կյանքի այս վճռական շրջադարձում կարևոր դեր են կատարել Կ. Պոլսում գործող մխիթարյան վարդապետներ Միքայել Սեբաստացին և Մկրտիչ Անանյանը, որոնց վրա մեծ տպավորություն էին թողել պատանու արտակարգ ընդունակություններն ու բուռն հետաքրքրասիրությունը հայոց պատմության, լեզվի և մշակույթի նկատմամբ: Ուսումնատենչ պատանին նրանց օժանդակությունը խնդրեց միջնորդելու Ստ. Մելքոնյան աբբահոր առջև՝ իրեն Ս. Ղազարի վարժարանն ընդունելու համար: Եվ քանի որ այդ ժամանակ արդեն ավարտվել էր վարժարանի ընդունելությունը, ուստի Միքայել Սեբաստացին Չամչյանի վերաբերյալ հանձնարարական նամակներ է ուղարկում աբբահորը՝ խնդրելով բացառության կարգով ընդառաջել նրան: Պատանու հետ ունեցած իր զրոյցներից մեկի անմի-

²⁹ «Բազմավեպ», 1981, N 3-4, էջ 301:

³⁰ Մ. Մաղաք-Թեոփիլյանց, Կենսագրութիւն երեւելի արանց, հատ Ա., Վենետիկ. 1839, էջ 811:

10556

ջական տպավորության ներքո Միքայել Սեբաստացին Ստ. Մելքոն-
յանին հղված իր նամակում այսպես է բնութագրում նրան. «Պատա-
նին է գուարթամիտ, հոգեսէր, ջերմեռանդ և ձեռաց արհեստի զար-
մանալի», իսկ ավելի ուշ գրած իր մեկ այլ նամակում կանխատեսում
է, թե «այս պատանեակս յատուկ նշանաւոր ոմն երեւի»³¹: 1757 թ.
մարտի 27-ին զույգ վարդապետների հանձնարարական-երաշխավո-
րագրով, Չամչյանն ուղևորվում է Վենետիկ՝ Ս. Ղազար: Նույն թվա-
կանի սեպտեմբերին նա ընդունվում է տեղի Մխիթարյան վարժա-
րանը և, իր արտակարգ ընդունակությունների ու մեծ աշխատասի-
րության շնորհիվ, շուտով դառնում դպրոցի առաջին աշակերտը:
Վարժարանում ուսուցանվող առարկաները, նրանց ծրագրերը և
ուսուցման դրվածքը հստակ պատկերացում են տալիս Մխիթարյան
դպրոցի հետապնդած նպատակների մասին: Թե ինչ առարկաներ է
ուսանել Չամչյանը վարժարանում երևում է ժամանակակցի հետևյալ
վկայությունից. «Ի սկսանիլ մանկանց զուսումն՝ նախ մարզեր
(դպրոցը-Ա. Ու.) գնոսա ի քաջ վերածնութիւն գրոց, և յաւէտ Հայկա-
զուն հեղինակաց. և ապա կարգաւ ուսուցանէր նոցա զքերականու-
թիւն, զպատմութիւն, զաշխարհագրութիւն, զուսումնականութիւն,
զճարտասանութիւն, զբանաստեղծութիւն, զփիլիսոփայութիւն, զաս-
տվածաբանութիւն և զբարոյական»³²: Վարժարանում բարձր հիմքե-
րի վրա է դրված եղել ընդհանրապես «ուսումն լեզուաց» և առանձ-
նապես հայոց լեզվի դասավանդումը: Չամչյանի հայերենի ուսուցիչն
էր Վրթանես վարդապետ Ասկերյանը, որն իր աշակերտի մեջ ոչ
միայն սեր ներարկեց մայրենի լեզվի նկատմամբ³³, այլև խրախուսեց
նրա քերականագիտական հետաքրքրություններն ու հետազայում
մեծապես օգնեց հայոց լեզվի քերականական կանոնները սահմանե-

³¹ «Բազմավեպ», 1981, N 3-4, էջ 301:

³² Ավգերյան, Համառոտ նկարագիր Մխիթարեան միաբանութեան ի Վենետիկ
ի կղզիև սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1819, էջ 50-51:

³³ «Մխիթարյան հոբեյան», Վենետիկ, 1901, էջ 76:



լիս: Ասկերյանի հսկողության ներքո ապագա պատմագիրը մեծ ջանասիրությամբ ուսումնասիրում է հայերենն ու նրան նվիրված հետազոտությունները և այնքան է հմտանում գրաբարում, որ նրա նամակներից մեկի ընթերցողը «զարմացեալ ընդ խրթնութիւն նորա, ասէ թէ զայս գիր գրեալ է Նարեկացին, կամ այլոք ի նախնի հարց հայոց»³⁴:

Ուսումնառության տարիներին (1757–1762 թթ.) Չամչյանը սշակերտում է նաև վարժարանի տեսուչ Կարապետ վարդապետ Մարտիրոսյանին, որը հետևում է իր սանի պատմագիտական, փիլիսոփայական և աստվածաբանական պարապմունքներին: Տեսնելով, թե նա ինչպիսի հեշտությամբ է սովորում և ընկալում օտար լեզուներ՝ Կարապետ վարդապետը նրան մասնակից է դարձնում իր աշխատասիրած լատիներեն-հայերեն մեծ բառարանին: Փայլուն կերպով տիրապետելով հայերենին, նա հետագայում սովորում է նաև հին ու նոր հունարեն, իտալերեն, ֆրանսերեն: Արևելյան լեզուներից տիրապետում էր թուրքերենին, եբրայերենին, մասամբ նաև պարսկերենին:

Չամչյանի մտավոր զարգացման վրա հատկապես ազդել է նրա ավագ եղբայր, Մխիթարյան միաբանության անդամ Հակոբոս Չամչյանը: Ժամանակակիցների վկայությամբ նա հմուտ էր մաթեմատիկական, փիլիսոփայական և աստվածաբանական գիտությունների մեջ: Նա կրտսեր եղբոր մոտ սեր արթնացրեց դեպի հայոց պատմական անցյալն ու հայ հին գրականությունը, ճիշտ ուղու վրա դրեց նրա բացառիկ ընդունակությունները և խրախուսեց նրա առաջին պրպտումներն ու քայլերը հայագիտության բնագավառում: 1759 թ. ապիլին Չամչյանն ընդունում է մխիթարյան կրոնավորական ուխտը

³⁴ Ղ. Տայան, Մայր Դիվան Մխիթարեանց Վննեսկոյ ի ո. Դազար (1707–1773), Վննեսիկ. 1930, էջ 264:

և անդամակցում նրան՝ վերցնելով Միքայել (ի պատիվ Միքայել Սեբաստացու) անունը:

Ավարտելով Մխիթարյան դպրոցը՝ 1762 թ. մարտի 6-ին Չամչյանը ձեռննդրվում է քահանա և նշանակվում վանքի վարժարանում որպես ուսուցիչ: Այդ ժամանակվանից էլ նա սկսում է պարապել միաբանության նոր կազմակերպվող մատենադարանում, ուսումնասիրում հայ և օտար մատենագիրների ձեռագիր ու տպագիր գործերը, հրապարակի վրա եղած հետազոտությունները: Ծանոթությունն իր ժողովրդի հոգևոր մշակույթի գանձերին՝ նրա մեջ առաջացնում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը գրելու գաղափարը: Իրեն հատուկ ոգևորությամբ, Չամչյանն սկսում է ատաղձներ կուտակել ապագա երկասիրության համար³⁵: Սակայն մեծ թափով սկսված նրա աշխատանքներն ընդհատվում են. արքահայր Ստ. Մելլոնյանը 1769 թվականի ապրիլի 16-ին նրան շնորհում է վարդապետական գավազան, իսկ շուտով հանձնում է նաև քարոզիչ միսիոների և Բասրայի հայ կաթողիկական համայնքի հոգևոր առաջնորդի պաշտոնը: Այս բնագավառում ի հայտ է գալիս Չամչյանի բնատուր մի շիժ ևս՝ հոետորական ձիրքը: Թերևս չափազանցություն չի նրա կաթողիկ կենսագիրների հաղորդած այն տեղեկությունը, որ երիտասարդ քարոզչի համբավը տարածվել էր ամբողջ Արարիայում: Իր նամակներից մեկում Չամչյանը ևս գրում է, որ լսելով իր համբավը՝ Շիրազի պարսիկ իշխանավորներն էլ են ցանկացել ծանոթանալ և ունկնդրել իրեն³⁶: Չամչյանը հրավեր է ստանում անգամ հեռավոր Թիֆլիսից: 1772 թ. փետրվարի 8-ին Ստ. Մելլոնյանին գրած Չամչյանի նամակից տեղեկանում ենք, որ կովկասահայ նրա կարգակից-

³⁵ Մ. Ճանաչյան, Պատմություն արդի գրականության. հատ. Ա., Վենետիկ, 1953, էջ 36:

³⁶ Ղ. Տայան, նշվ. աշխ., էջ 354:

ներից ոմանք առաջարկել են նրան անցնել Թիֆլիս և ստանձնել տեղի կաթոլիկ համայնքի հովվի պաշտոնը³⁷:

Իբրև քարոզիչ՝ Չամչյանը հնարավորություն է ունեցել ազատորեն ճանապարհորդելու և ծանոթանալու Ալեքսանդրիա, Բեյրութ, Դամասկոս, Հալեպ, Բաղդատ, Բասրա և այլ քաղաքներում գտնվող հայ գաղթօջախներին: Չամչյանը չի բավարարվել միայն հոգևոր առաջնորդի գործունեությամբ. նրա կոչումը հնարավորություն էր տալիս ոչ միայն մտոից ծանոթանալու իր ժողովրդի վարք ու բարքին, հոգսերին, այլև նրա հոգևոր գանձերին: Երիտասարդ քարոզիչը մեծ զոհողությունների գնով կարողանում է մի քանի հազվագյուտ գրչագիր մատյաններ հավաքել և ուղարկել Ս. Ղազար³⁸: Նա հետամուտ էր այստեղ հայերեն ձեռագրերի մի ճոխ հավաքածու ստեղծելու գաղափարին, որը միայն հնարավորություն կընձեռեր հայագիտական լայն կտավի երկասիրությունների ձեռնարկմանը: Այդ նպատակով Չամչյանը սկսում է տեղեկություններ հավաքել զանազան վանքերում ցրված ձեռագրերի վերաբերյալ. «Բազում ականատեսք պատմեն, թէ բազում ձեռագիրք են ի վանս, որ ի լեառն Պշնոյ (Բջնիի – Ա.Ու.), յերկրին Երեւանոյ, եւ ի լերինն Աղբատոյ, եւ յայլ եւս տեղիս»³⁹: 1771 թ. հոկտեմբերի 1-ին Ստ. Մելքոնյանին գրած իր նամակում նա հաղորդում է. «Ստուգի տեղեկացայ աստ ի բազմաց, թէ ի գաւառն Վան բազում եւ անհամար ձեռագիրք Հայոց գտանին ի վանորայս. բայց ոչ տան, ասեն, զայն ումեք, եւ մեզ չէ հնար զնոսին ի ձեռս մեր բերել»: Ուստի նա առաջարկում էր ձեռներեց միաբաններ ուղարկել Հայաստանի վանքերը՝ տեղերում դրանց ընդօրինակության գործը կազմակերպելու համար. «Կարծեմ թէ արդիւնատր լինէր զմին կամ զերկուսն ի սփռելեաց ի կողմանս Հայաստանայ

³⁷ Նույն տեղում, էջ 277:

³⁸ Նույն տեղում, էջ 263–264:

³⁹ «Բազմավեպ», 1981, N 3–4, էջ 311:

առաքել թէ պտիլ, ուր եթէ այլ ինչ եւս ոչ շահեսցին՝ զձեռագիր գրեանս գտցեն պիտանիս»⁴⁰:

Հասկանալիորեն, Չամչյանին նախ և առաջ հետաքրքրում էին պատմագիտական բնույթի ձեռագրերը և հատկապես «Հայոց պատմություն»-ները: Իմանալով, որ Նոր Ջուղայում առկա են նման ձեռագրեր՝ նա անմիջապես նամակով դիմում է Ամենափրկիչ վանքի վանահայր Մկրտիչ վարդապետին հետևյալ թախանձագին խնդրանքով. «Լուայ ես աստ, թէ գտանին ի Ճուղայ ձեռագիր, Պատմագիրք Հայոց, բազում յարգանքք աղաչեմ զսրբութիւն Ձեր աննել մեզ զշնորհս այս մեծ, որոնել ի վանորայս կամ յայլ տեղիս, եւ գտեալ զայն առաքել առ մեզ, եւ որչափ ինչ արժանի գին խնդրի պատրաստ եմք վճարել: Իսկ եթէ որք ունին՝ ոչ կամիցին վաճառել, եթէ հնար է՝ տաջիք անսխալ օրինակել զայնս եւ զվարձս գրագրին գրեսցիք առ մեզ»⁴¹: Չամչյանը հետագայում ևս, լինել Կ.Պոլսում, Եղիսաբեթուպոլսում թե այլուր, նախ և առաջ հետաքրքրվում էր հայերեն ձեռագրերով, հնարավորության դեպքում գնում էր դրանք և ուղարկում Ս. Ղազար, այդպիսի հնարավորության բացակայության դեպքում կազմակերպում էր ձեռագրի ընդօրինակումը, կամ հորդորում էր տիրոջը՝ այն նվիրել վանքի մատենադարանին: Այս տեսակետից հատկանշական է Բաղդասար Գլիճենց (Սեպեյյան) Եվդոկացու հիշատակարանը, որ նա թողել է Մարտինոս Օպիավացու ժամանակագրության՝ Ներսես Պալիանենցի կատարած հայերեն թարգմանության ինքնագրի կազմի վրա: «Այս գիրքս պատմութեանց ըստ խնդրոյ Վ.Հ. Միքայելին Չամչեանց ետու յիշատակ ի վանս Հայոց, վոր ի Վենետիկ»⁴²:

⁴⁰ Նույն տեղում, էջ 313:

⁴¹ Նույն տեղում, էջ 309-310:

⁴² Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան. մանրածագավեն N 1011:

Բասրայում գտնվելու տարիներին Չամչյանը նաև սկսում է նյութեր հավաքել իր ապագա երկասիրությունների և, մասնավորապես, «Հայոց պատմության» համար: Ապացույց կարող է ծառայել այն, որ նրա խնդրանքով Մխիթարյան միաբանության անդամներ Գրիգոր վարդապետն ու Պետրոս վարդապետ Ջուղայեցին ձեռագրերից արտագրել և նրան են ուղարկել Քաղկեդոնի, Կարինի, Շիրակավանի, Տարսունի, Սսի, Ադանայի եկեղեցական ժողովներին վերաբերող մատենագրական նյութերը⁴³:

Աբբահորը գրած նրա 1770 թ. մայիսի 11-ի նամակից պարզվում է, որ Չամչյանը դիմել է Նոր-Ջուղայի հայոց առաջնորդ Մկրտիչ վարդապետին, որպեսզի նա «գտեալ ի ճուղայ զձեռագիր պատմագիրս առաքեսցէ այսր. քանզի բազում պատմագիրք գտանին անդ»⁴⁴: Դժվար չէ կոտակել, որ եկեղեցական ժողովներին վերաբերող մատենագրական նյութերն ու հայոց պատմագիրների երկասիրությունները նրան անհրաժեշտ էին ոչ թե իր քարոզչական գործունեության, այլ պատմագիտական ձեռնարկումների համար: Հենց դրանով պետք է բացատրել նրա բուռն հետաքրքրությունը ձեռագիր «Պատմութիւն Հայոց»-ների նկատմամբ: 1770 թ. փետրվարի 25-ին Մկրտիչ վարդապետին գրած նրա նամակից տեղեկանում ենք, որ հայոց պատմագիրների երկասիրությունները նրան անհրաժեշտ էին համապատում «Պատմութիւն հայոց»-ի ստեղծման համար. «հարկ եղև մեզ որոնել զձեռագիրս Պատմութեան Հայոց, առ ի կարգել զայն, ըստ պատշաճի, եւ ի լույս ընծայել ազգիս մերոյ արժանապատում պատմագիրք մի»⁴⁵: Այստեղից դժվար չէ կոտակել, որ արդեն Բասրայում Չամչյանը նախաքայլեր էր ձեռնարկում, իր բառերով ասած՝ «Գիրք պատմութեանց Հայոց»-ի շարադրման ուղղությամբ:

⁴³ Ղ. Տայան, նշվ. աշխ., էջ 269–270, հմմտ. էջ 278–279:

⁴⁴ Նույն տեղում, էջ 264:

⁴⁵ «Բազմավեպ», 1981, N 3–4, էջ 309:

1771/73 թվականներին Արաբիայում տարածված ահավոր ժանտախտը և տեղի անբարենպաստ կլիմայական պայմանները քայքայում են եռանդուն քարոզչի առողջությունը՝ պատճառելով սարսափելի գլխացավ, հրը նրան ուղեկցում է ամբողջ կյանքում. «Ընդ տօթոյն և խժային գիջութիւն,- գրում է Մ. Չամչանը 1771 թ. օգոստոսի 10-ին,- անաանելի և տամկութիւն ճիւթային և թուլութիւն անգօրանալի, որով այնչափ նուաղեալ եմ, մինչ գրեթե ոչ գիտեմ ուր եմ, և զինչ գրեմ, և զիարդ գրեմ...»⁴⁶: Այս պայմաններում նա գրում է իր առաջին երկասիրությունը՝ «Վահան ուղղափառութեան» խորագրով: Դա քառահատոր հսկայածավալ (յուրաքանչյուր հատորը շուրջ 800–900 էջ) դավանաբանական վիճաբանություն էր Կ. Պոլսի պատրիարք Հակոբ Նալյանի «Գիրք կոչեցեալ Վէմ հաւատոյ» (Կ. Պոլիս, 1733 թ.) և «Ճրագ ճշմարտութեան» (Կ. Պոլիս, 1756 թ.) երկասիրությունների դեմ: Այդ գրքերը լայն տարածում էին գտել ժամանակակիցների մոտ և մեծ հռչակ բերել նրանց հեղինակին: Ինչպես պրակտիկ, այնպես էլ տեսական գործունեությամբ, Հ. Նալյանը պայքարում էր կաթոլիկության գաղափարաբանության դեմ, փորձում էր դիմագրավել Վատիկանի պրոպագանդիստների՝ «հոգու այդ որսորդների» ազդեցությանը: Ահա հմուտ այդ եկեղեցականի դեմ դավանաբանական ու գաղափարական պայքարի սլաքն էր ուղղում Մ. Չամչանն՝ իր աստվածաբանական առաջին երախայրիքով: Ինչպես ջանում են ապացուցել Չամչանի կաթոլիկ կենսագիրները, նա «աստվածաբանական զորավոր փաստերով և պատճառաբանությամբ» սրբագրել ու հերքել է Հ. Նալյանի «անճիշտ գրությունները» և համոզիչ փաստերով ցույց է տվել «հայ եկեղեցվո՞ ուղղափառ վարդապետությունը»⁴⁷:

⁴⁶ Ղ. Տայան, նշվ. աշխ., էջ 268, հմմտ. նաև էջ 352–353:

⁴⁷ Մ. Մաղաք-Ռեոփիյանց, նշվ. աշխ., էջ 811, տես նաև: Մ. Ճանաչյան, նշվ. աշխ., էջ 37:

Շուտով Չամչյանի այդ աշխատությունը նրա «հակառակորդները կը գողանան սենյակեն, բայց ասով փոխանակ վնասելու իրեն՝ ընդհակառակը կը նպաստեն անոր ծավալումին»⁴⁸: Սակայն հակառակ այս պնդմանը, ինչպես Չամչյանի, այնպես էլ նրա միաբանակիցների համար խիստ անսպասելի, պապական հավատաքննության բարձրագույն ատյանը սկսում է կասկածել իր ջերմեռանդ միսիոների անկեղծությանը և կարգադրում նրան անմիջապես ներկայանալ Հոռմ՝ հարցաքննության: Չամչյանի կենսագիրները դա բացատրում են նրանով, որ նա ամբաստանվել էր իբր ժանտախտի տարիներին իր հոտը անխնամ թողնելու համար, բայց «Հոռմը լուավ և յայլոց ճշմարտութիւն իրացն, վասն որոյ ի զուր եղեն ամենայն ամբաստանութիւնքն»⁴⁹: Ավելի հավանական են հնչում Չամչյանի հակառակորդների՝ հայ լատինամետների մեղադրանքները նրա հասցեին, որ քարոզչության տարիներին նա «բազմաթիվ հերձվածոդ (իմա առաքելական) բարեկամներ ստացավ» իր քաղաքականության շնորհիվ⁵⁰: Սա բացահայտ ակնարկ է այն մասին, որ Չամչյանը, չանսալով Վատիկանի պաշտոնական ուղերձները, հոգևոր հաղորդակցության մեջ էր մտել առաքելականների հետ և, ըստ երևույթին, այնքան էլ եռանդով չէր դատափետել «լուսավորչական-հերետիկոսներին»: Անշուշտ կաթոլիկ եկեղեցու քահանայի դերն ստանձնած Չամչյանի այս քաղաքականությունն էր նրա նկատմամբ անբավականություն ստեղծում Հոռմի պաշտոնական շրջանակներում: Դրա ապացույց կարող է ծառայել այն, որ հավատաքննության սպասուլորները արգելում են նրան զբաղվել քարոզչությամբ և պահանջում են վերադառնալ:

⁴⁸ Մ. Ճանաշյան, նշվ. աշխ., էջ 37:

⁴⁹ Մ. Մաղաք-Ռեոփիյանց, նշվ. աշխ., էջ 812, հիմնո. նաև Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ, Երևան, 1946, էջ 1013:

⁵⁰ «Արշալույս Արարատյան», 1859, N 432-ի հավելվածը:

1775 թ. սկզբներին Չամչյանը նորից Ս. Ղազարում էր: Այստեղ նրան հանձնվում է կղերանոցի նորընծայարանի⁵¹ աշակերտների դաստիարակի պաշտոնը (1775–1789 թթ.): Մխիթարյան վարժարանում Չամչյանին աշակերտում են Մկրտիչ և Հարություն Ավգեբյան եղբայրները, Ղուկաս Ինճիճյանը, Մանվել Ջախջախյանը և շատ ուրիշներ, որոնք անուրանալի ավանդ ներդրեցին հայագիտության զարգացման և գրական-թարգմանական գործունեության ոլորտներում: Սերը դեպի մայրենի լեզուն, նրա գիրն ու գրականությունը, մշակույթն ու պատմությունը նրանք ժառանգեցին իրենց համբավավոր ուսուցչապետից, որն այդ ժամանակ հրապարակ էր իջեցնում իր գիտական պրպտումների նախընթացը չունեցող արդյունքները: Չամչյանի կյանքի վեներտիկյան այս երկրորդ շրջանը, գիտական-ստեղծագործական արդյունքների առումով, ամփոփվում է հայոց լեզվին ու հայոց պատմությանը նվիրված երկու կոթողային աշխատություններում: 1779 թ. լույս է տեսնում նրա քերականության դասագիրքը, որը 1801–1859 թվականներին ունեցել է տասնհինգ հրատարակություն (որոշ բարեփոխումներով) և մեծ դեր խաղացել հայոց լեզվի ուսուցման գործում՝ շուրջ մեկ հարյուրամյակ օգտագործվել որպես գրաբարի քերականության լավագույն դասագիրք⁵²:

⁵¹ Վանք մտնել ցանկացողները, նախքան միաբանության անդամ դառնալը, այսինքն մինչև կրոնական կարգ ստանալը, տեղափոխվում էին այստեղ և որևէ վարդապետի ձեռքի տակ պատրաստվում կրոնական կյանքին և ստանում աստվածաբանական ու հայագիտական կրթություն:

⁵² Մ. Չամչեան, «Ջերականություն Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1779: Նույնը ավելի պարզեցրած և համառոտած՝ «Ջերականություն Հայկազեան լեզուի: Հօրինեալ ի և. Մ.վ. Չամչեանց: Եւ այժմ նորոգ համառօտեալ աշխատասիրութեամբ նորին առ ի դիւրութիւն ուսանողաց» խորագրով լույս է տեսել 1801 թվին Վենետիկում: Այս հրատարակությունից է, որ կատարվել են հետագա բոլոր վերահրատարակությունները՝ Կաղկաթա, 1823, Թիֆլիս, 1826, Կաղկաթա, 1830, Վենետիկ, 1831, Շուշի, 1833, Շուշի, 1829, Վենետիկ, 1843, Մոսկվա, 1859, Շուշի, 1859 և Վենետիկ, 1859:

Գարրիլե քահանա Պատկանյանցի այն կարծիքը, թե իբր Չամչյանը «ծայր ի ծայր յուրացուցյալ է Պաղտասար դպիրի «ասլալալիբեա» քերականությունը» (տես Գ. Պատկանյանց, Ծաղկաբաղ, ի իսկատար կենսագրությունն սրբազան Հայրա-

Չամչյանի քերականությունը բաղկացած է երեք բաժիններից: Առաջին բաժինը նվիրված է խոսքի մասերի («մասանց բանի») քննությանը: Հեղինակը գրաբարի համար ընդունում է ութ խոսքի մաս և տասը հոլով: Այստեղ նա հիմնական տեղը հատկացրել է բայի խոնարման եղանակներին ու ժամանակներին: Երկրորդ բաժինն ունի տեսական բնույթ և նվիրված է խոսքի մասերի «որպիսութեանը»:

Այստեղ հեղինակը զարգացնում է այն ճիշտ դրույթը, թե քերականությունը մարդուն սովորեցնում է ուղիղ խոսել, քանի որ խոսքը կազմված է բառերից, բառերն էլ կարգավորվում են քերականական կանոններով: Երրորդ բաժինը նվիրված է խոսքի մասերի համաձայնությանը: Չամչյանը համաձայնություն ասելով հասկանում է խոսքի մասերի կապակցությունը և խոսքի ութ մասերին համապատասխանեցնում է ութ տեսակ կապակցություն: Իր աշխատությանը Չամչյանը կցել է նաև «Համառոտութիւն քերականութեան» բաժինը՝ որպես բուն կյուրի շարունակություն, որի մեջ ավելի համառոտ, հերթափանությամբ շարադրել է քերականության կանոնները:

Արեւելանելի է Մ. Չամչյանի սույն երկասիրության դերը հայոց լեզվի քերականության զարգացման գործում: Դեռ ավելին, գիտական խիզախություն էր այդ աշխատության հրատարակությունը: Իր քերականությամբ Չամչյանը վճռականորեն մերժեց իրեն նայտորդած լատինաբան հեղինակների քերականությունները, նրանց նորամուծությունները, որոնք, կաղապարվելով լատիներենին, չէին ներկայացնում գրաբարի քերականության իրական նկարագիրը: Այդ կապակցությամբ նա գրում է. «Յայն ժամանակի նորոգ հանդիսացեալ էին բազում քերականութիւնք բազում հեղինակաց, որք բազում

պետի Ներսիսի Ե. վեհափառ և ազգասեր կաթողիկոսի Ամենայն Հայոց, Չմյուռնիա, 1876. էջ 11) հիմնադրվել է, քանի որ համեմատությունները չեն խոսում դրա օգտին:

ինչ նոր և օտար խառնեալ էին ի լեզու մեր»⁵³։ Իր քերականությամբ Չամչյանը դուրս էր գալիս թե իրեն նախորդող հեղինակների անկատար ու անհաջող, սակայն Հոռմի կողմից խրախուսվող, քերականական փորձերի դեմ, և թե Վատիկանի կողմից պաշտպանված այն տեսակետի դեմ, թե ով որ Հակոբ Հոլովին և Վարդան Հունանյանին չի հետևում «կատարյալ ուղղափառ չէ, լավ կաթոլիկ չէ, փրկության ճամբեն դուրս է»⁵⁴։ Չամչյանը մերժում է անգամ Մխիթար Աբբայի քերականության դասագիրքը, որովհետև այն, «ոչ էր հնար հակառակ նոցին (լատինաբաններին – Ա.Ու.) աւանդել կանոնս ըստ բուն նախնի ուղղախօսութեան» և չհամարձակվելով ուղղել Հակոբ Հոլովի ու Վարդան Հունանյանի աղճատ գրաբարը, ստիպված էր «յարմարել զճառս քերականութեան՝ ի հոլովմունս ի լծորդութիւնս և ի համաձայնութիւնս մասանց բանի»⁵⁵։ Վերանայելով Մխիթար Սեբաստացու քերականական ժառանգությունը և ուղղելով այն՝ Չամչյանը միաժամանակ շատ լավ էր պատկերացնում դրա բոլոր հնարավոր հետևանքները։ Նա նաև լավ գիտեր, որ Սեբաստացին, ըստ էության, դեմ էր լատինաբանների աղքատ, գոեհիկ ու աղճատված հայերենին, սակայն գիտակցաբար, իր կամքին հակառակ ստիպված էր ընդօրինակել նրանց, քանի որ Հոռմի գիտական շրջանակներում գոյություն ունեւր այն կարծիքը, թե իբր «մաքուր գրաբարը դեպի հերձվածողություն է առաջնորդում»⁵⁶։ Այստեղից պարզ է դառնում, թե ինչու Սեբաստացին իր մերձավորագույն աշակերտներին վախվորած պատգամում էր՝ «այսպես գիտությամբ և

⁵³ Մ. Չամչեան, Քերականութիւն Հայկագեան լեզուի. Վենետիկ.1779, Առաջաբան։

⁵⁴ Գ. Այվազովսկի, Ուրուագիծ ոգույ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ. Փարիզ, 1857, էջ 35։

⁵⁵ Մ. Չամչեան, Քերականութիւն, Առաջաբան։

⁵⁶ Ա. Չամինյան, Հայոց եկեղեցու պատմություն, Նոր նախիջևան, 1909, էջ 108, հմմտ. նաև Հ. Աճառյան, Պատմություն հայոց նոր գրականության, արակ Ա. Վաղարշապատ, 1906, էջ 58։

կամավ գեշ լեզվին հետևել, որ իբրև հերձվածող չդատապարտվեն Հոռմեն, չքշվեն Իտալիայեն»⁵⁷: Չամչյանին հայտնի էր Սեբաստացու այդ մտավախությունը, հայտնի էր նաև Հոռմի դիրքորոշումը այդ հարցում, սակայն առանց վարանելու նա ձեռնամուխ եղավ լատինաբանությունից այլանդակված հայոց լեզուն մաքրելու ու նրա նախնական վիճակը վերականգնելու նվիրական . աշխատանքներին: «Կամեցաք զայս քերականութիւն,- գրում է նա,- ի լոյս ընծայել, յորինեալ ամեննին ըստ հանգամանաց ոճոյ լեզուիս մերոյ. Հուզեալ աչայրջութեամբ ի դրութիւնս նախնեաց մերոց զուղղութիւն խօսից՝ թէ ըստ հոլովման անուանց, և թէ ըստ խնդրառութեան մասանց բանի. Յամենայնի ջանալով ի նոցունց բերել զօրինակ կանոնաց արանդելոց ի սմին»⁵⁸: Այսպիսով, Չամչյանի քերականությունը վերջնական և ուժգին հարված հասցրեց լատինաբանությանը:

Ի տարբերություն ժամանակին քերականության մեջ գոյություն ունեցող տրամաբանական-ոացիոնալիստական ուղղության ներկայացուցիչների՝ Չամչյանը հանդես եկավ ընդդեմ լեզվի կառուցվածքի «բնական» փոփոխությունների տեսությանը: Նշելով լեզվի հասարակական հաղորդակցման դերը՝ նա լեզվական փոփոխությունները համարեց հետագա աղավաղումներ, քերականությանը վերապահելով այդ աղավաղումները կանխողի և կարգավորողի դեր:

Քննադատելով ու մերժելով լատինաբանների, այդ թվում և Մխիթար Սեբաստացու, քերականությունները, Չամչյանը մեծ դեր

⁵⁷ Գ. Այվազովսկի, նշվ. աշխ., էջ 37:

⁵⁸ Մ. Չամչյան, նշվ. աշխ., Առաջարան: Հայոց լեզվի ուսուցումը դպրոցներում ավելի բարձր հիմքերի վրա դնելու նպատակով, Չամչյանը կյանքի վերջին տարիներին սկսում է աշխատել քերականության նոր դասագրքի վրա, որը պետք է լիներ ավելի սլարոգ ու դյուրամատչելի ձևով կազմված ձեռնարկ: Սակայն վերահաս մահը խանգարում է նրա այդ ծրագիրը, որի մասին Է. Հյուրմյուզյանի «Դուռն քերականութեան հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1833) դասագրքի առաջապահում կարդում ենք. «Հ. Մխրայել վ. Չամչյան, որ մեր ազգի մեջը առաջին կարգաւորեալ քերականութիւն շինողը եղաւ, գիտնալով ասոր հարկաւոր ըլլալն այ՛ սկսաւ համառօտիկ քերականութիւն մը շինելու, բայց չիկրցաւ լըմընցընել, մահը վրայ հասնելով»:

խաղաց աղճատված հայերենի քերականության նախնական ու հարազատ վիճակը վերականգնելու և հայերենը խորթ ու օտար տարրերից մաքրելու գործում: Պատահական չպետք է համարել այն, որ Չամչյանն իր քերականության մեջ վկայություններ է բերում միմիայն V-VII դդ. հայ լավագույն մատենագիրներից, որով ավելի է արժեվորվում նրա երկասիրությունը:

Ճիշտ է, նրա քերականությունն ունի խոցելի կողմեր և վիճելի հարցադրումներ ևս. օրինակ, հայերենում տասը հոլովների գործածության խնդիրը և այլն, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է նշանավոր լեզվաբան պրոֆ. Է. Աղայանը, Չամչյանի քերականությունը «իր ժամանակի համար իրոք որ կատարյալ կարելի է համարել»⁵⁹:

Քերականության հրատարակությունից մեկ տարի էլ չէր անցել, երբ Չամչյանը, արբահայր Ստ. Մելքոնյանի հանձնարարությամբ, արդեն ձեռնամուխ էր եղել մեկ այլ մեծածավալ երկասիրության՝ «Պատմութիւն Հայոց»-ի շարադրման աշխատանքներին: 1784 թ. սկզբներին այն գրեթե պատրաստ էր տպագրության, որի մասին Ստ. Մելքոնյանը 1784 թ. հունվարի 24-ին գրում է. «Պատմագիրը շարադրեալ ի Հ. Միքայէլէն գրեթէ եզերեալ է եւ ոչ յետ բազմաց սկսանի տպագրութիւն նորա»⁶⁰: Չամչյանի նախնական ծրագրի համաձայն, Պատմությունը պետք է ունենար երկու հատոր, յուրաքանչյուրը 100 մամուլ ծավալով: Այդ մասին մենք իմանում ենք 1785 թ. մարտին Կ. Պոլսի մխիթարյաններին ուղղված արբահոր նամակից. «Սկսաք զտպագրութիւն Պատմութեանց գրքոյն Հայոց ազգին, շա-

⁵⁹ Է. Ա. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հատ. Ա, Երևան, 1958, էջ 134: Հայոց լեզվի քերականության զարգացման գործում Չամչյանի կատարած դերի մասին մանրամասն տե՛ս Հ. Մխիթարյան, Միքայել Չամչյանի դերը հայոց լեզվի շարահյուսության զարգացման գործում, «Բազմավեպ», 1969, նո. 8-10, 1970, նո. 9-10, Գ. Բ. Չահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 303-342:

⁶⁰ «Բազմավեպ», 1981, N 3-4, էջ 327, ծան. 71:

րադրելոյ նորոգ, որ լինի երկու հատորով, շուրջ երկու հարիւր տապաղայով (մամուլով – Ա.Ու.). յուսամ, թե ընդունելի լիցի ազգին»⁶¹: Սակայն, աշխատանքի տպագրության ընթացքում, հեղինակի կատարած հավելումների և նորամուծությունների հետևանքով (որոնք շարունակվեցին մինչև տպագրության վերջին օրը) գրքի ծավալն ընդարձակվելով հասավ 360 մամուլի, որը, նախատեսված երկու հատորի փոխարեն, ամփոփվեց երեք հատորների մեջ: Ստ. Մելքոնյանի սույն նամակը օգնում է պարզելու նաև մի այլ կարևոր իրողություն: Ինչպես ակնհայտ է նամակից, Ա հատորի տպագրությունը սկսվել է 1785 թ. մարտին, մինչդեռ հրատարակված Պատմության առաջին հատորի տիտղոսաթերթին դրոշմված է այլ թվական՝ 1784 թ.: Այսօր, շնորհիվ Ս. Շեմճեմյանի՝ Ս. Ղազարի դիվանում կատարած մանրակրկիտ պրպտումների, պարզվել է, որ «Պատմութիւն Հայոց»-ի հատորները տպագրվել են ոչ թե 1784-1785 թթ., ինչպես այդ ցուցում են տպագրված հատորների տարեթվերը, այլ 1785-1788 թթ.⁶²: Հատորների հրատարակության ձգձգումը հետևանք էր ոչ միայն տպագրական անսպառ ու բազմազան դժվարությունների, հմուտ գրաշարների բացակայության⁶³, այլև հեղինակի հաճախակի միջամտությունների, նրա ծայրաստիճան բծախնդրության: Ցանկանալով կատարյալ տեսնել իր աշխատությունը՝ Չամչյանն անընդհատ փոփոխություններ էր կատարում տպագրված ազդօրինակների վրա, երբեմն գրեթե հիմնովին վերափոխելով դրանք: Հատկապես մեծ թիվ էին կազմում հավելումները, որոնք՝ հետևանք էին նոր

⁶¹ Նույն տեղում. ծան. 72:

⁶² Առաջին հատորի տպագրությունը սկսվել է 1785 թ. մարտին և ավարտվել 1786 թ. դեկտեմբերին, երկրորդ հատորինը՝ սկսվել է 1786 թ. կեսերին և ավարտվել 1787 թ. օգոստոսին. իսկ երրորդ հատորինը՝ սկսվել է 1787 թ. սկզբներին և ավարտվել 1788 թ. դեկտեմբերին (տե՛ս «Բազմավեպ», 1981, N 3-4, էջ 327-330):

⁶³ Հատորների տպագրության ընթացքն արագացնելու համար Ս. Ազաւճայանը առաջարկում էր բազմապատկել գրաշարների թիվը, վարձել իտալացի գրաշարների և նրանց սովորեցնել հայերեն:

հայտնաբերված կամ ստացված ձեռագրերի, հիշատակարանների, գավազանագրքերի և արքայացանկերի: Քանի որ Ս. Ղազարի մատենադարանը չուներ անհրաժեշտ բոլոր սկզբնաղբյուրները, Չամչյանը 1782–85 թթ. ընթացքում տասնյակ նամակներ է գրում Հնդկաստան, Նոր Ջուղա, Բասրա, Բաղդատ, Կ. Պոլիս և այլուր գտնվող ծանոթներին, միաբանության բարեկամներին՝ իր հետապնդած այս կամ այն նյութը ձեռք բերելու համար: Դրանք ստանալու համար նա երբեմն ստիպված է եղել սպասել տարիներ շարունակ: Հասկանալիորեն, ոչ միշտ է, որ նա ստանում էր ակնկալած աղբյուրը կամ նյութը, իսկ այն տասնհինգ հայ մատենագիրների երկերը, որոնց մասին գրում է, թե, «զորս ոչ ունեմք առ մեզ», այնպես էլ նրան վիճակված չէր տեսնելու և օգտագործելու (Սերբոս, Մովսես Կաղանկատվացի, Ղևոնդ, Շապուհ Բագրատունի, Թովմա Արծրունի, Մխիթար Անեցի, Վանական Վարդապետ և այլք): Չամչյանը լավ էր հասկանում, որ առանց այդ մատենագիրների երկերի օգտագործման իր Պատմությունը դառնում է թերի և անկատար, ուստի համառորեն շարունակում էր դրանց որոնումները և դրանով իսկ հետաձգում աշխատանքի վերջնական ավարտը: Չամչյանի նման պատասխանատվությունն ու բժախնդրությունն իր ձեռնարկած գործի նկատմամբ, երբեմն տեղիք էր տալիս բացահայտ դժգոհությունների: Այսպես, Ստ. Մելքոնյանին ուղղված 1785 թ. օգոստոսի 10-ի նամակում Ս. Աղամալյանն արտահայտելով իր դժգոհությունը Պատմության տպագրության դանդաղ ընթացքի համար՝ գրում է «զի՛նչ ասացից եւ առ Հ. Միքայէլն, որ տասնիցս ասէ թէ՛ ասարտեալ է, եւ դարձեալ միսանգամ ձեռն ի գործ արկանէ, որ գրամբք աշխարհի ոչ շատանայ, որ յունջս եւ ի քունջս նորոգ ինչ յուզէ տազնապաւ, որ այսօր գրէ եւ վաղիւ եղծանէ, որ զտպագրեալն այսօր յայգուցն փոփոխէ...: Այս ունիմ ապացոյց գրքերականութիւնն, այլ եւ զումպէտ Պատմագրութիւնն Վարդապետին Թովմայի, որում զհետ պնդեալ է, կարծելով թէ՛ առանց այնր

թերիանայ եւ անկատար մնայ Պատմութիւն ազգիս հայոց»⁶⁴: Թե՛ն Չամչանը նույնպէս մտահոգ էր ու անհանգստացած հատորների տպագրության դանդաղ ընթացքի համար («ի վաղուց սկսանք տպագրել գՊատմութիւն Հայոց, բայց դեռ ոչինչ է վճարեալ եւ եթե այսպէս գնայ, ըստ ուղիղ հաշուի յետ վեց ամաց հազիւ կատարի» – գրում է նա 1785 թվականին)⁶⁵, սակայն շարունակում էր իր բժախնդիր սրբագրական-հավելագրական աշխատանքները դրանց վրա: Պատմության հատորների տպագրության համար պատասխանատու Ստ. Ապիկյանը քանիցս արտնետած բողոքում է Չամչանի նման աշխատողի դեմ: 1788 թ. օգոստոսին գրած իր նամակներից մեկում նա ուղղակի մեղադրում է Չամչանին՝ երրորդ հատորի վերջնական տպագրությունը արդեն որերորդ անգամ հետաձգելու համար «յաղագս քանի մը սրբագրութեանց, զոր հարկ եղել առնել յայնմ հատորի, յուսացուցանելով զիս հեղինակն թէ փութով եզերեսցի, յնրկարաձգեցաւ գործն մինչև ցաւուրս ցայտորիկ, եւ տակսալին յուսադրէ զիս՝ թէ ի մօտոյ վճարեսցի ամենայն ինչ»⁶⁶:

Վերջապէս, 1788 թ. կեսերին երրորդ հատորի վերջին սրբագրված մամուլներն ուղարկվում են տպարան և Չամչանը կարող էր իրեն իրավունք վերապահել գրելու, թե «ազատեցայց ի տառապանաց այսր ոգեսպառ գործոյ՝ աւարտել տպագրութեանն»⁶⁷: Այսպիսով, ինչպէս ակներև է, Պատմության շարադրման աշխատանքները սկսվել են 1780 թ. սկզբներին և շարունակվել ընդհուպ մինչև տպագրության ավարտը, այն է՝ 1788 թ.: Ինքը՝ Չամչանը, գրում է, որ Պատմության շարադրանքը տևել է ութ տարի. «յորժամ սկսայ գՊատմութիւնն՝ թողի զայս յոթ ամաց հետէ»⁶⁸:

⁶⁴ «Բազմավեպ», 1981, N 3–4, էջ 331:

⁶⁵ Նույն տեղում, էջ 325:

⁶⁶ Նույն տեղում, էջ 329–330:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Նույն տեղում:

Հայ սփռված կյանքի բոլոր հանգուցակետերում ժողովրդի պատմական ուղու բացահայտմանն ու արժևորմանը նվիրված այս գիրքն ընդունվեց մեծ խանդավառությամբ: Լինելով հայրենասիրության և ազգային ինքնաճանաչողության արտահայտություն, այն նշանակալից չափով օգնեց իր ժամանակակիցներին ու երիտասարդ ընթերցողներին, բռնելու ազգորեն ինքնորոշվելու ուղին, ճանաչելու իրենց որպես ժողովուրդ՝ իրենց իսկ սեփական պատմության հիման վրա: «Պատմութիւն Հայոց»-ի երևան գալը պայմանավորված էր ոչ միայն ազգային ինքնաճանաչման ու ազգային գիտակցության բնական թելադրանքով, այլև օտար տիրապետությունների լծի տակ հեծող հայ ժողովրդի հասարակական-քաղաքական զարթոնքով: Ազգային ինքնության կորստի վտանգը ստիպում էր հայ մշակույթի գործիչներին դիմելու այնպիսի թեմատիկայի, որը ժամանակակիցներին ծանոթացնում էր հայ ժողովրդի հերոսական անցյալին, նրանց մեջ վառ էր պահում հայրենասիրությունը և կոչ էր անում թոթափելու օտարի լուծը: Այս առումով էլ հենց պետք է բացատրել Չամչյանի աշխատության մեծ համբավը ոչ միայն իր ժամանակներում, այլև հետագայում: Վեր հանելով օտար բռնակալությունների դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պայքարն ու դրվատելով այն՝ Չամչյանը նպատակ ուներ ոգևորել իր երիտասարդ հայրենակիցներին, նրանց դաստիարակել ազգային հպարտության զգացումով, ոգեկոչել անցյալի պատմական, հերոսական ու դրամատիկ դրվագները, պատգամախոսել հերոսների ու դյուցազունների անունից: Չամչյանը լավ էր գիտակցում, որ անցյալի փառաբանումն ու իդեալականացումն համընկնում են հայ ժողովրդի հոգևոր, հասարակական-քաղաքական ու բարոյա-դաստիարակչական պահանջներին: Դա է պատճառը, որ այդ մտայնությունը կարմիր թելի պես անցնում է նրա բոլոր հատորներով: Հակադրելով հերոսական պայքարով լի անցյալի փառքը իր օրերի անհրապույր իրականությանը՝ Չամչյանը

գրում է. «Այժմ փոխանակ թագաւորութեան տիրեաց ստրկութիւն, փոխանակ իշխանութեան ժամանեաց անշքութիւն. փոխանակ յաղթութեան յաճախեաց հարուած. փոխանակ անդորր խաղաղութեան՝ որում մարթ էր ակն ունիլ, արմատացաւ անդորր խոռվութիւն և տարրացաւ անզօդելի անմիաբանութիւն»⁶⁹: Ո՛րն էր այդ իրակաւնությունից դուրս գալու ելքը: Չամյանի հատորների ընդհանուր հայրենասիրական նպատակաւացությունը ընթերցողների մոտ առաջ էր բերում խոր ատելություն օտարի լծի հանդեպ և այդ պայմաններից ազատագրվելու բռուն ձգտում: Դրանք կոչ էին անում հայերին համախմբվել ու միավորվել «ջայլեմանց ու զազանաց»⁷⁰ իշխանության տակ գտնվող հայրենիքը ազատագրելու համար:

Սակայն, Չամյանը Հայաստանի պատմության հարցերը, այդ թվում և օտար բռնակալությունների դեմ մղած հայ ժողովրդի պայքարի դրվագները, քննարկել է սուբյեկտիվ իդեալիստական դիրքերից: Չամյան-պատմաբանը կրոնական ջերմեռանդությամբ հավաստիացնում է, թե պատմության ելևէջները, թագավորական հարստությունների փոփոխվելը, օտար տիրապետություններն ու պատերազմները «ամենակալ ձեռին տեսչութեամբ կատարի», որը «կարգէ զամենայն անսահման իրող իմաստութեամբ և՛ դարմանէ և խնամէ զամենայն քաղցրութեամբ և վարէ զփոփոխականս ամենայն յանփոփոխ վախճան»⁷¹: Այսպիսով, Չամյանը պատմական իրադարձությունները դիտում է որպէս գերաշխարհիկ էակի կամքի արտահայտություն: Նրա պատմահայեցողության հենց այս կողմերի վրա էր, որ իր քննադատական շեշտը դրեց Միքայել Նալբանդյանը⁷²:

⁶⁹ Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեսուն 1784, հատ. Գ. Վենետիկ, 1786, էջ 417:

⁷⁰ Նույն տեղում, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 43:

⁷¹ Նույն տեղում:

⁷² Մ. Նալբանդյան, Միսիթաք Սևրաստացի և Միսիթարյանը, տե՛ս «Երկկրի լիակատար ժողովածու», հատ. 2, Երևան, 1948, էջ 222 և այլն:

Երկարատև ծանր աշխատանքը «Պատմութիւն Հայոց»-ի վրա, որը Չամչյանին իրավունք էր տալիս գանգատվելու, թե «զկեանս իմ կերաւ այս գործս», նորընծայարանի լարված պարապմունքները, բացասաբար են անդրադառնում նրա առողջության վրա, զգացնել է տալիս նաև հին հիվանդությունը: Մխիթարյան միաբանության վարչության որոշմամբ 1789 թ. սեպտեմբերին նա ազատվում է դաստիարակի պաշտոնից և առողջությունը վերականգնելու նպատակով ուղարկվում Ավստրիայի ու Հունգարիայի առողջարանները: Այդ մասին Ստ. Մելքոնյանն իր նամակներից մեկում գրում է. «Եւ այս տալոյ նմա (Չամչյանին – Ա.Ու.) սակաւ մի հանգիստ, քանզի ի կալն ի վանս՝ անգործ ոչ կարէ մնալ, եւ ի պարապիլն ի գործ՝ չարաչար պարապի եւ ամենայն հոգով ընկղմի ի գործ, եւ վնասի»⁷³: Նախ, նա անցնում է Տրիեստ, իսկ այնուհետև Պաշպալով (Եղիսաբեթուպոլիս) քաղաքը, որտեղ մնում է մինչև 1790 թ. ապրիլը: Այստեղ Չամչյանը ծավալում է բուռն մանկավարժական գործունեություն: Նրա անդուլ ջանքերի շնորհիվ տեղի հայկական վարժարանը ընդարձակվում և սկսում է աշխույժ գործունեություն ունենալ հայ իրականությունից կտրված գաղթօջախի նոր սերնդի հայեցի դաստիարակման գործում: Նրա օրոք Պաշպալովի վարժարանի աշակերտների թիվը հասնում է շուրջ վաթսունի: «Աշխատ եղեւ Եղիսաբեթ քաղաք, աշխատ եղեւ և աշխատանօք ծնաւ ծնունդ բարի. Ծնաւ զդպրատուն երեւելի, ծնաւ արդարեւ ցաւօք, ծնաւ և վաստակք. աշխատութիւն իւր էանց. ցաւք իւր փարատեցան, և վաստակք իւր տեսին զարգասիսն: Այլ գործ մեծ է սնուցանել, պահել և պաշտպանել»⁷⁴, - գրել է Չամչյանը քաղաքի դպրոցի մասին: Ավելորդ չէ նշել, որ Չամչյանը պաշտպանում էր նոր տիպի դպրոցներ հիմնելու գաղափարը և երագում

⁷³ «Բազմավեպ», 1981, N 3-4, էջ 352:

⁷⁴ Բ. Մարգարյան, Երկիրայութեամբ կրթական գործունեություն Վենետիկո Մխիթարյան միաբանության. հատ. Ա. Վենետիկ. 1936, էջ 12:

գոյություն ունեցող հայկական դպրոցների վերակառուցման մասին: Ժամանակի հայկական դպրոցների ծայրահեղ անմխիթար վիճակը, հասկանալիորեն չէր գոհացնում Չամչյանին, ուստի նա մտորում էր հիմնովին վերափոխել այդ դպրոցների ուսումնական ծրագրերն ու պլանները, որոնք պիտի արմատապես տարբերվեին նախորդներից: Գիշերօթիկ դպրոցների համար նրա առաջարկած ծրագիրը իր ժամանակների համար կատարյալ կարելի է համարել: Այն մի քանի անգամ քարծր էր կանգնած հայ իրականության մեջ գոյություն ունեցող ծրագրերից և հավասարվում էր ֆրանսիական ու ավստրիական միջնակարգ դպրոցների ծրագրերին: Կողմնակից լինելով դպրոցական գործի վերակառուցմանն ու աշխարհիկ կրթության գերադաս լինելու գաղափարներին, այնուհանդերձ, Չամչյանը ի վիճակի չէր և չէր էլ կարող դպրոցական այդ ծրագրերում տեղ չտալ կրոնա-բարոյական դաստիարակությանը: Նա բնական էր համարում կրոնի դասավանդման անհրաժեշտությունը հատկապես մարդու բարոյական դաստիարակության գործում: Հետաքրքիր է ծանոթանալ նաև նոր տիպի դպրոցներին առաջադրվող Չամչյանի մշակած ուսումնական ծրագրի հետ: Այստեղ առաջին պլանի վրա է գտնվում բնական ու հումանիտար առարկաների դասավանդումը: Այսպես, Չամչյանի ծրագրի համաձայն գիշերօթիկ դպրոցի (որն ինքը «աքստեմիա» է անվանում), աշակերտները ուսանելու էին լեզուներ՝ հայերեն, հունարեն, լատիներեն և այն երկրի լեզուն, որտեղ գտնվում էր դպրոցը, քերականություն, ճարտասանություն, փիլիսոփայություն, իրավագիտություն (քաղաքացիական իրավունք և եկեղեցական իրավունք), հայոց պատմություն, ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, ժամանակագրություն, տրամաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, մետաֆիզիկա, բնագնություն (բնագիտություն), աստղաբաշխություն, քաղաքավարություն, մարդավարություն (բարոյագի-

տութիւն), երաժշտութիւն, նկարչութիւն, խաղեր և վերջապէս աստ-վածաբանութիւն⁷⁵:

Հատկանշական է, որ դպրոցի նպատակը Չամչանը նախ և առաջ տեսնում էր օտար ավերում դեգերող հայության բեկորներին հայեցի պահելու և դաստիարակելու մեջ: Այդ առթիվ նա գրում է. «Օտար քաղաքներու մեջ ուսանող մանկտին՝ ավելի նորասիրութ-յուններ, ախտեր և անկարգութիւններ պիտի սորվի, մանավանդ պի-տի մոռանա հայերեն լեզուն և պիտի օտարանա հայրենի քաղաքեն և ընտանեկան հարկեն», իսկ հայկական դպրոցների առկայության պայմաններում «փոխանակ մոռացության, հայկական լեզվին՝ քաջ հայկարանության և հայկական իրերու կատարյալ տեղեկութիւններ պիտի ուսանի»⁷⁶:

Չնայած հայ գաղութի հորդորներին՝ («գի բազում մխիթարու-թիւն եղել նա մեզ և ժողովրդեան») Չամչանը փոքրիշատե վերա-կանգնելով առողջութիւնը, վերադառնում է Ս. Ղազար:

Այդ ժամանակ Չամչանը հրավեր է ստանում Կ. Պոլսից՝ այն-տեղ պաշտոնավարելու առաջարկով, սակայն նա հրաժարվում է, պատճառաբանելով, թե «ի սպառ տաղտկացեալ եմ ի ժողովրդեն՝ որոյ եւ իցէ քաղաքի. յամենայնէ ձանձրացայ՝ ի վերակացութենէ, ի դասատուութենէ, ի խոստովանահայրութենէ եւն.եւն., միայն գրու-թիւնք կարէ գիս մխիթարել»⁷⁷: Մման ծանր հոգեվիճակի և ֆիզիկա-կան տկարության բուժիչ միջոցը դարձյալ գրական աշխատանքնե-րով զբաղվելն էր, որը, Չամչանի խոստովանությամբ, իր միակ մխիթարութիւնն էր:

Նրա Վենետիկյան գործունեության երրորդ շրջանը (1790–1794 թթ.) կտրուկ տարբերակվում է երկրորդից: Այս անգամ նրա հե-

⁷⁵ Նույն տեղում, էջ 12:

⁷⁶ Նույն տեղում, էջ 13–14:

⁷⁷ Տե՛ս «Բազմավէպ», 1981, N 3–4, էջ 353:

տաքրբրասիրությունները բնեովում են կրոնական ու աստվածաբանական բնագավառների վրա: Դեռևս 1788 թ. գրած մի նամակում Չամչյանը հայտնում է, որ ինքը շուտով ձեռնարկելու է սաղմոսների մեկնությանը, մի աշխատանք, որը սկսել էր դեռևս 70-ական թվականներին և ընդմիջարկել «Պատմության» պատճառով: Եվ ահա այժմ նրա տիտանական աշխատասիրությունն ու խորը գիտելիքները գործադրվում են սաղմոսների մեկնության համար: Քանի որ Չամչյանին չէին բավարարում հրապարակի վրա գտնվող սաղմոսների հայերեն թարգմանությունները, ուստի նա, 60 տարեկան հասակում, ձեռնամուխ է լինում եբրայերենի ուսումնասիրությանը և այնքան է հմտանում այդ լեզվի իմացության մեջ, որ սկսում է ազատորեն օգտվել սաղմոսների եբրայական տեքստերից: 1793-1794 թթ. նա մի քանի անգամ այցելում է Կ.Պոլիս, տեսակցում հրեա բաբունապետների հետ⁷⁸ և ձեռք բերում հիմնավոր գիտելիքներ Թալմուդի, սաղմոսների ու հրեական կրոնական արարողությունների վերաբերյալ: Այդ աշխատանքների արդյունքը հանդիսացան սաղմոսներում տեղ գտած ավագ օրհնություններին նվիրված գիրքը⁷⁹ և սաղմոսները մեկնող տասը մեծադիր հատորները⁸⁰: Այստեղ հեղինակը սաղմոսների հայերեն տեքստերը համեմատում է դրանց լատինական, արաբական, եթովպական, ասորական և հունական թարգմանությունների հետ և ապա, եբրայական բնագրի օգնությամբ, ներկայացնում սաղմոսների հայերեն հնագույն թարգմանությունների նախնական ու հարազատ օրինակները՝ մանրամասն ծանոթագրություններով և բացատրություններով: Սա բնագրագիտական,

⁷⁸ Հ. Ալան, Մխիթարյանք գրականության հանդեպ (1701-1901), Վենետիկ, 1902, էջ 40:

⁷⁹ Մ. Չամչյանց, Նուագարան օրհնութեանց, յորում մեկնին աւագ օրհնութիւնք Սաղմոսարակին մերոյ, Վենետիկ, 1801:

⁸⁰ Մ. Չամչյանց, Մեկնութիւն սաղմոսաց, հատ. Ա-Ժ, Վենետիկ, 1815-1823 (յուրաքանչյուր հատորը 600-800 էջի սահմաններում):

ըննա-բաղդատական վիթխարի աշխատանքի արգասիք է, որն այնպես էլ իր երկրորդը չունեցավ հայ աստվածաբանական գրականության մեջ: Միայն կարելի է ափսոսալ, որ Չամչյանի բեղմնավոր գրիչն այսու ի գործ դրվեց հիմնականում աստվածաբանական-կրոնական ուսումնասիրությունների բնագավառում, ուր նա ունեցավ առատ հունձր⁸¹: Հասկանալիորեն կրոնական բնույթի նրա երկասիրություններն այժմ կորցրել են իրենց արժեքը և գիտական հետալքորթություն չեն ներկայացնում, սակայն միևնույն ժամանակ դրանք անխոս վկաներն են իրենց հեղինակի մեղվաջան աշխատասիրության և աստվածաբանական խորը գիտելիքների:

Մ. Չամչյանի առողջական վիճակի հետագա վատթարացման պատճառով⁸² միաբանության վարչությունը որոշում է նրան ուղարկել իր ծննդավայրը՝ կազդուրվելու⁸³: 1795 թ. սկզբներին նա ընդմիջու տեղափոխվում է Կ. Պոլիս և ստանձնում տեղի Մխիթարյանների մեծավորի պաշտոնը: Բացի հոգևոր-հասարակական գործունեությունից, նա այդ ժամանակ վերսկսում է նաև իր պատմագիտական աշխատանքները: Երեքամյա տքնաջան աշխատանքի արգասիք է «Համառօտ պատմութիւն Օսմանցոց» երկասիրությունը, որ 1800 թ. Նոյեմբերին արդեն պատրաստ էր տպագրության: Սույն հանգամանքը հավաստում է Ի. Փափազյանը 1800 թ. նոյեմբերի 10-ին Չամչյանին գրած իր նամակում, թե արդեն գիրքը «հնար է տպագրութեամբ անխիղճ ի լոյս ընծայել»⁸⁴: Նկատելի է, որ Չամչյանը

⁸¹ Տե՛ս Մ. Չամչեանց, Հրահանգ եօթնեկի. եօթնեակ եօթամբք դասա որևայ. Վենետիկ, 1802 (նույն տարում երկու հրատարակությամբ), «Պատկեր տօնից սուրբ Աստուածածնի», Վենետիկ, 1805, «Սեղան խնկոց», Վենետիկ, 1816 (վերահրատարակվել է 1817 թվին), «Մեկնութիւն Սևետարանին Յովիաննու» (անտիպ) և այլն:

⁸² 1792 թ. գրած իր նամակներից մեկում նա զանգատվում է «առավել եւս ի կողմանէ բնոյ, որ խողկալ է ընդ իս», տե՛ս «Բազմավէպ», 1981, N 3-4, էջ 354:

⁸³ Մ. Ավգերյան, Ժամանակագրութիւն Վանացո, հատ. 2, էջ 833ա, տե՛ս նաև «Բազմավէպ», 1981, N 3-4, էջ 355:

⁸⁴ Մ. Ճեմհեմյան, Գեորգ դպիր Տեր-Հովհաննիսյան (Պապատեցի) և Մխիթարյանները, տե՛ս «Բազմավէպ», 1982, N 1-2, էջ 134:

գրքի խմբագրումը հանձնարարում է ժամանակի աչքի ընկնող մտավորականներից մեկին՝ Գեորգ դպիր Պալատեցուն, որի հետ կապված էր տարիների բարեկամությամբ: Սակայն, ինչ-ինչ պատճառներով Չամչյանի այս երկասիրությունը մնացել է անտիպ⁸⁵: Այս շրջանում Չամչյանը վերսկսում է նաև իր մանկավարժական գործունեությունը: Նա լայն մասնակցություն է ունենում հայկական դպրոցներ հիմնադրելուն և դրանք դասագրքերով ու հմուտ ուսուցիչներով ապահովելու գործում⁸⁶: Չամչյանին հուզել է նաև հայկական բարձրագույն դպրոց ստեղծելու գաղափարը, որտեղ կարող էին իրենց ուսումը շարունակել Կ. Պոլսի և այլ քաղաքների միջնակարգ դպրոցների շրջանավարտները: Աբբահորը հղված մի շարք նամակներում նա, տեղեկացնելով այդ ուղղությամբ իր կողմից մշակված ծրագրերի մասին, շեշտում էր Եվրոպայի որևէ համալսարանական քաղաքում (նա առաջարկում էր իտալական Պադուա քաղաքը), հայկական բարձրագույն դպրոց բացելու անհրաժեշտությունը, որովհետև այդպիսի դպրոցի բացակայության պայմաններում «օր քան զօր սողօտանամք, և յարփիանալ այլոց՝ մեք ճրագանամք լուսով գրեանց և այն չէ բաւական մեզ»⁸⁷: Կ. Պոլսի Մխիթարյանները Չամչյանի գլխավորությամբ մշակում և Աբբահորն են ներկայացնում ապագա հայկական բարձրագույն դպրոցի ուսումնական ծրագիրը: Այստեղ կարևոր սեղ էր հատկացված հատկապես հայագիտական առարկաներին և լեզուների (հայերեն, հունարեն, իտալերեն, ֆրանսերեն

⁸⁵ Մ. Մաղաք-Թեոփիլանցի վկայությամբ (նշվ. աշխ., էջ 813), Չամչյանը հեղինակել է նաև լատիներեն-հայերեն մի սովորածավալ բառարան, որի ձեռագիրը պահվում է միաբանության մատենադարանում: Չեն տպագրվել նաև Չամչյանի Վենետիկից Բասրա և Բասրայից Վենետիկ կատարած ճանապարհորդության նոթերը, որոնք, նույն Թեոփիլանցի վկայությամբ, հետաքրքրական տեղեկություններն են պարունակում Չամչյանի քարոզչական գործունեության և նրա այցելած վայրերի մասին:

⁸⁶ Բ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 37-43:

⁸⁷ Նույնը, էջ 83:

և այլն) դասավանդմանը: Հատկանշական է, որ Մ. Չամչյանը հետամուտ էր նաև հայկական դպրոցներն ուսումնական անհրաժեշտ ձեռնարկներով օժտելու աշխատանքին: Անշուշտ, այդ նպատակն էր նա հետապնդում, երբ համառոտում էր իր աշխատասիրած քերականությունը՝ «առ ի դիրութիւն ուսանողաց»: Անհրաժեշտ էր դպրոցներին տրամադրել նաև հայոց պատմության վերաբերյալ որևէ դյուրըմբռնելի ձեռնարկ: Նրա ստվարածավալ եռհատորյակը չէր կարող ծառայել այդ նպատակին, ուստի 1800-ական թվականներին նա սկսում է այն «համառոտել զնոյն աստանօր, եղեալ առաջի կարճ ի կարճոյ գանցս՝ որք անցին ընդ հայս»: Նման ձեռնարկի անհրաժեշտության մտահոգությամբ է տոգորված 1808 թ. փետրվարի 10-ին Ստ. Ազոնցին հղված Չամչյանի նամակը, ուր ասված է. «Եթե հնար լինէր ի տպագրութիւն մատուցանել զհամառոտութիւն Պատմութեանն Հայոց, եթէ զհայերէնն եւ եթէ զտաճկերէնն, ի բանիլ ճանապարհաց առաքէի այդր, զի փափաքելով փափաքին ժողովուրդ յառնալ»⁸⁸: Եվ ահա, «Պատմութիւն Հայոց»-ի երեք հատորների համառոտման ու խմբագրման հաշվին, Չամչյանը ազգային դպրոցներին է տրամադրում հայոց պատմության մի ամփոփ և խնամքով կազմված ձեռնարկ⁸⁹, որը կարևոր դեր խաղաց մատաղ սերնդին ազգային

⁸⁸ Մ. Ճեմճեմյան, նշվ. աշխ., էջ 135, ծան.60:

⁸⁹ Տե՛ս Մ. Չամչեան, Խրախճան պատմութեան Հայոց, Վննետիկ, 1811, (տե՛ս նաև սույն գրքի վերահրատարակությունը՝ Կալկաթա, 1834): Նկատի ունենալով իր թղթախոս հայրենակիցներին ազգային պատմությանը ծանոթացնելու հույժ կարևորությունը, Չամչյանը, որը հույակապ տիրապետում էր թուրքերենին, այս գիրքը հրատարակում է նաև թուրքերեն՝ տե՛ս «Կիւղարի Թեվարիլի: Հայ միլլեթինե տայիր հիքեայելեի իլե տոնանմիշ: Չամչեան հայր» Միքայել վարդապետի դայրեթի իլե», Վննետիկ, 1812 (տե՛ս նաև սրա վերահրատարակությունը՝ Վննետիկ, 1850): Հայատառ թուրքերեն այս պատմությունը սուսկ հայերենի մեխանիկական թարգմանությունը չէր, այլ, ինչպես նշում է Չամչյանը՝ «Տաճկալանն ոչ է Թարգմանութիւն հայկականին, այլ առանձին յատուկ յօրինեալ» («Խրախճան պատմութեան Հայոց», Առաջաբան): Անգլիախոս հայերի համար Հովհաննես Ալիալը Խրախճանը թարգմանել է նաև անգլերեն՝ «History of Armenia from B.C. 2247 to the year of Crist 1780. Transl. from the original by J. Avdall», Կալկաթա, 1827:

ինքնագիտակցության և ինքնաճանաչողության ոգով դաստիարակելու գործում:

Ստ. Մելքոնյանի մահվանից հետո, նոր արբահոր ընտրություններին մասնակցելու համար Չամչյանը 1800 թ. նոյեմբերին մեկնում է Վենետիկ: Միաբանությունը շահագրգռված էր, որպեսզի Չամչյանը այլևս չլքեր Ս. Ղազարը ուստի նրան ընտրում են միաբանության վարչական մարմնի խորհրդաձևի և Մխիթարյան վարժարանի վերատեսուչ: Մյուս կողմից, Կ. Պոլսի հայ կաթոլիկական համայնքը կարիք ուներ նրա ներկայությանը, որովհետև Չամչյանի բազում գիտելիքներն ու մեծ հեղինակությունը խիստ անհրաժեշտ էին հայ առաքելական համայնքի և իրենց միջև գոյություն ունեցող կրոնադավանաբանական կնճիռները հարթելու և ծագած վեճերը լուծելու համար: Միաբանությունը չէր կարող չանսալ իր նյութական ու ֆինանսական հենարանի՝ Կ. Պոլսի կաթոլիկական համայնքի ձայնին և Չամչյանին հնարավորություն է տալիս նորից անցնելու իր ծննդավայրը:

Տեղին է նշել, որ 19-րդ դարի 20-30-ական թվականներին Թեյմուրազ Բագրատիոնի կողմից վրացերեն են թարգմանվել Չամչյանի Պատմության երկրորդ հատորի որոշ հատվածներ (տե՛ս Ք.Ք. Օրբելու, *Грузинские рукописи института востоковедения. АН СССР, Москва-Ленинград, 1956*, էջ 57): Անկախ սույն թարգմանությունից, գրեթե միաժամանակ Պլատոն Իոսելիանի կողմից վրացերեն են թարգմանվել նաև Չամչյանի Պատմության երկրորդ հատորի 30-40-րդ գլուխները. (բացառությամբ 34-րդ գլխի, տե՛ս Ս.Մ. Մурадян, *Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII в., Ереван, 1966*, էջ 169-170): 19-րդ դարի 40-ական թվականներին ռուսերեն են թարգմանվել Չամչյանի Պատմության մեջ տեղ գտած Հայոց եկեղեցական ժողովներին վերբերող հատվածները (այդ թարգմանությունը տես Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր նո. 1498):

//
//

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԺԱՄԱՆԱԿԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ- ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Չամչյանի կյանքի և գործունեության վերջին շրջանը (1800–1823) հատկանշական է Կ. Պոլսի հայ առաքելական և կաթոլիկ համայնքների միջև գոյություն ունեցող դավանաբանական սուր պայքարը մեղմացնելու ու վերացնելու, ինչպես նաև նրանց մերձեցման և միավորման ուղղությամբ նրա ձեռնարկած միջոցառումներով:

Մ. Չամչյանը հասարակական-քաղաքական ասպարեզ իջավ և իր հայագիտական գործունեությունն սկսեց այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը գաղթօջախներում և նույնիսկ մայր հայրենիքում տարաբաժանված էր դավանաբանական անհաշտվողականությամբ հակամարտ, միմյանց նկատմամբ կրոնական ատելությամբ աղեցուն երկու հատվածների՝ առաքելական և կաթոլիկական: Ցավով է նկարագրում ականատեսը դավանաբանական վեճերով խճողված մեր ժողովրդի դրությունը, նրա մասնատման ընթացքը ներկայացնելով որպես «տարօրինակ վիճակի և կացութեան», երբ «ոմանք հետզհետե՛ գնացեալ խառնեցան յերամս խրտուեալ ոչխարաց Մխիթարեան միաբանութեան*, եւ ոմանք ի հօրանս այժից օտարացեալ խմբին Դրիեսդեան (խոսքը հետագայի Վիեննայի Մխիթարյանների մասին է – Ա.ՈՒ.), կեսք ի վոհմակս աղուեցացն լիբանանեան (խոսքը Անտոնյան միաբանության մասին է – Ա.ՈՒ.) եւ այլք առ հասարակ ի

փղանգս արիւնոռուտ գազանացն Գալէջեան**»⁹⁰: Անգիջում և մոլեգին պայքարը հայ հատվածների միջև, հասկանալիորեն, ավելի էր մասնատում հայ ժողովրդի առանց այն էլ թույլ ու ջլատված ուժերը, դարձնում նրան անպաշտպան Հռոմի ամենակուլ ձգտումների և Օսմանյան Թուրքիայի հայաջինջ քաղաքականության հանդեպ: Ուստի պատահական չէ, որ հենց 18-րդ դարի վերջերին և 19-րդ դ. սկզբներին Կ. Պոլսի հայ գաղթօջախի առաքելական և կաթոլիկ որոշ հեռատես գործիչներ, դատափետելով իրենց այն նախորդներին, որոնք տասնամյակներ շարունակ հանդես էին գալիս երկու հայ հատվածների ազգային ու հասարակական-քաղաքական միասնության դեմ բայսվող խմբակցություններին առաջարկում էին մի կողմ դնել կրոնական-դավանաբանական վեճերն ու գաղափարական սուր մարտերը և միավորվել մեկ ընդհանուր համայնքի մեջ: Միության գաղափարը պոլսահայերին և ընդհանրապես Թուրքիայի հայությանը հուզող ամենակնճոռտ հարցերից էր նաև հետևյալ պատճառով: Օսմանյան կայսրության մեջ գործող օրենքների համաձայն, երկրում բնակվող բոլոր քրիստոնյաների մկրտությունը, ամուսնությունն ու թաղումը, մի խոսքով վիճակագրական ամենաբազմազան գործողություններն ու դրանցից բխող տնտեսական խնդիրների արծարծումը հանձնված էր պատրիարքություններին: Օսմանյան կառավարությունը պաշտոնապես ճանաչում էր միայն երկու պատրիարքություն՝ հունական և հայկական, հետևաբար կայսրության տարածքում բնակվող

* Մխիթար Աբբայի հետևորդներն էին: Ուստի կոչվում էին նաև «Աբբայեան» կամ «Աբբայի»:

** Սրանք Հռոմում գտնվող «Ժավաղոցի», կամ «Վասն Տարածման Հավատոյ» (De propaganda Fide) դպրոցի (Collegio) հայ սաներն էին, որոնք կոչվում էի «գոլնցիք»՝ քոլեժիկներ և կամ «Պրոպագանդայի ու ժավաղոցի աշակերտներ»: Տրիեստի (հետագայում Վիեննայի) Մխիթարյանները և Անտոնյան միաբանության որոշ անդամներ համախորհուրդ էին նրանց հետ:

⁹⁰ Տե՛ս Հ. Թոփճյան, Յուզակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 285:

բոլոր հայերը հպատակվում էին Կ. Պոլսի Հայոց պատրիարքությանը: Այս իրողությունը Թուրքիայում բնակվող հայ կաթոլիկների համար ստեղծել էր երկդիմի վիճակ: Դավանանքի հարցերում նրանք պետք է ենթարկվեին Կ. Պոլսի լատին եպիսկոպոսին, սակայն նրա իրավասությունները ուժ ունեին միայն Հռոմի մոտ, իսկ պետական տեսակետից գոյության իրավունք չունեին, քանի որ կաթոլիկ եպիսկոպոսներն ու նրանց վիճակները կառավարության կողմից չէին ճանաչվում: Նույն թուրքական օրենքների համաձայն՝ հայ կաթոլիկները դիտվում էին որպես Հայոց Պատրիարքարանի հպատակներ և հայ պատրիարքին ենթակա անհատներ: Հայտնի է, որ հայ կաթոլիկները չունեին ոչ պաշտոնական եկեղեցիներ և ոչ էլ հատուկ պատրիարքություն, ուստի ազգային, կենցաղային, վիճակագրական և առօրեական կրոնական բոլոր պետքերը նրանք ստիպված էին հոգալ միայն հայ եկեղեցու միջոցով: Քանի որ հայոց պատրիարքարանին տրված սուլթանների ֆերմաններով պատրիարքին հանձնված էր նաև հայ ազգաբնակչության հաշվառումը, հարկերի ու տուրքերի գանձումը, հետևաբար ամեն մի հայ, որը խուսափում էր հայ ազգային եկեղեցու հետ հաղորդակցությունից, դուրս էր ընկնում հաշվառումից ու հարկատվությունից ի վնաս և՛ պետության, և՛ հայ համայնքի: Այս առումով էլ հայ կաթոլիկները դժվարանում էին իրենց հուզող հարցերը լուծել Կ. Պոլսի լատին եպիսկոպոսի միջոցով, որովհետև դա կառավարության մոտ տեղիք կտար ոչ միայն կասկածանքների (դրանից բխող նաև հետապնդումների ու հալածանքների), այլև կընդուներ օտար հպատակության բնույթ: Նման պայմաններում, հասկանալի է, որ Արևելքի քրիստոնյաների շրջանում կաթոլիկություն տարածող լատին քարոզիչները ջանք չէին խնայում կաթոլիկ հայերին հեռացնելու հայոց պատրիարքարանի իրավասության ոլորտներից և միջոցների առջև կանգ չէին առնում նրանց ավելի ամուր կապելու Հռոմին: Կաթոլիկ քարոզիչները ապավինում էին ոչ միայն Հռոմի կղերապետությամբ

յան հեղինակությանն ու միջնորդությանը, այլև Օսմանյան Թուրքիայի հետ առևտրական, քաղաքական սերտ կապեր ունեցող արևմտյան տերությունների ամենալայն աջակցությանը: Դա պատահական չէր, քանի որ նրանք թե պապական եկեղեցու, և թե Եվրոպական տերությունների քաղաքական, առևտրական ու տնտեսական գործակալներն էին Արևելքում⁹¹: Ղեկավարվելով Վատիկանի եսակենտրոն հրահանգներով՝ Թուրքիայի հպատակ քրիստոնյաների շրջանում հոգու հունձք կատարող գործակալներն իրենց կրոնական-պրոպագանդիստական աշխատանքները հմտորեն զուգակցում էին եվրոպական առևտրական կապիտալի և գաղութային քաղաքականության ներկայացուցիչների իրենց գործունեությանը: Ինչպես հայտնի է, եվրոպական պետությունները, առաջին հերթին, Ֆրանսիան, Թուրքիայում ձեռք էին բերել մի շարք արտոնություններ, որոնք ձևակերպված էին, այսպես կոչված, կապիտուլյացիաների մեջ⁹²: Սուլթաններից կորզելով կապիտուլյացիոն իրավունքները՝ Ֆրանսիան աստիճանաբար սկսեց իր տնտեսական ու քաղաքական գերակայությունը հաստատել Թուրքիայում: Երկրի տնտեսական նվաճումը կազմակերպելու հետ զուգընթաց, Ֆրանսիան «ձեռնամուխ եղավ նաև Օսմանյան կայսրության բարոյական ու գաղափարական նվաճմանը»⁹³: Նախ նա փորձում էր իր գաղութային նպատակներին ծառայեցնել Արևելքի քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում նաև հայերի, ազատագրական պայքարն ու գաղափարախոսությունը, այնուհետև՝ լատին մի-

⁹¹ Տ.Հ. Հակոբյան, «Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (17–18-րդ դդ.)», տե՛ս «Արևելագիտական ժողովածու» Խառ. Ա. Երևան, 1960, էջ 266–283:

⁹² Կապիտուլյացիաների էության մասին տե՛ս Բ.Մ. Данинг, К вопросу о капитуляциях на Ближнем Востоке, см. «Народы Азии и Африки» 1971, N 3, D'Ohsson, Tableau general De L'Empire Ottoman. Paris, 1791, p. 271–277, G. Noradounghian, Recueil d'Actes Internationaux de L'Empire Ottoman, t. I (1300–1789), Paris, 1897 p. 70–89.

⁹³ G. Pelissie du Rausas, Le regime des capitulations dans L'Empire Ottoman. Paris. 1910, p. 47–48.

սիռներների միջոցով կաթոլիկացնել հայերին և Արևելքի մյուս ժողովուրդներին: Ահա այս ճանապարհով Թուրքիայում կատեղծվեին կաթոլիկական հենակետեր, որոնք ժամանակի ընթացքում կվերածվեին տնտեսական ու քաղաքական հենակետերի: Կապիտուլյացիաների ռեժիմը եվրոպական տերություններին շնորհելով մի շարք տնտեսական ու առևտրական արտոնություններ Թուրքիայում (նաև Պարսկաստանում) միաժամանակ հաստատում էր այդ երկրներում ընդհանրապես կաթոլիկների, և մասնավորապես՝ հայ կաթոլիկների նկատմամբ նրանց խնամակալական իրավունքները⁹⁴: Հասկանալի է, որ հայ կաթոլիկների նկատմամբ ցուցաբերած նրանց հոգածության իրական շարժառիթները առևտրական, տնտեսական ու քաղաքական շահախնդրություններ էին: Իրենց ազդեցությունը Թուրքիայում էլ ավելի ուժեղացնելու նպատակով եվրոպական կաթոլիկ միապետներն ու Հռոմի կղերապետությունը բոլոր միջոցներով խրախուսում էին լատին քարոզիչների հունձքը հայերի շրջանում, որոնք ավանդաբար նրանց համար դիտվում էին որպես տնտեսական ու քաղաքական հենակետեր Արևելքում: Հետևաբար Ֆրանսիան և մյուս կաթոլիկ տերությունները շահագրգրված էին, որպեսզի ընդարձակվեր ու ստվարանար իրենց հովանավորյալների շրջանակը: Արշտ է նկատել պրոֆ. Հ. Սիրունին՝ «քանի կաճեր կաթոլիկ դարձողներուն թիվը օսմանյան պետության սահմաններուն մեջ, այնքան Ֆրանսա հող կունենար իր իսկ ոտքին տակ, ու կբազմանային Թուրքիո գործերով հետաքրքրվելու առիթները»⁹⁵:

Հայերի շրջանում հոգեորոշությամբ զբաղվող ճիզվիտ միսիոներները՝ XVI–XVII դդ., կաթոլիկության պրոպագանդման հաջողության նպատակով, մեղմ և զգույշ քաղաքականությամբ էին առաջնորդ-

⁹⁴ Ա. Գ. Հովհաննիսյան, Դովագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. Բ, Երևան, 1959, էջ 553:

⁹⁵ Հ. Ճ. Սիրունի, Պոլիս և իր դերը, Աբաջին հատոր (1453–1800), Բեյրութ, 1965, էջ 412:

վում:

Սկզբում նրանք բավարարվում էին միայն նրանով, որ հայերն ընդունեն հոռմեական եկեղեցու դավանանքը: Տեսնելով, թե ինչպիսի ամուր թելերով են նրանք կապված իրենց սովորույթներին ու ծեսերին՝ միսիոներները գտնում էին, որ իրենց գործի տարածման հաջողության համար «հայ եկեղեցական ծեսերն ու եկեղեցական ավանդույթները պետք է թողուլ անվթար»⁹⁶: Սակայն XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբներից միսիոներները սկսում են արգելել հայ կաթոլիկներին այցելել ազգային եկեղեցիները և կատարել հայ եկեղեցու պարտավորությունները: Առաքելական եկեղեցու միջոցով կատարված մկրտության, ամուսնության ու թաղման ծեսերը նրանք համարում էին անվավեր և հոչակում ապօրինի: Առաջնորդվելով Կղեմես ԺԱ պապի այն հայտնի շրջաբերականով⁹⁷, որի համաձայն հայ կաթոլիկներին արգելվում էր շփում ունենալ առաքելականների հետ, կաթոլիկ քարոզիչներն ու նրանց գործակալ հայ լատինամուկները հայ ժողովրդի, նրա ազգային եկեղեցու դեմ հայտարարեցին բիրտ, դաժան ու անհաշտ պատերազմ, որն անհաշիվ զոհեր, անասելի նեղություններ և մեծագույն դժբախտություններ բերեց իր հետ:

Կաթոլիկ միսիոներների և նրանց հայ գաղափարակիցների գործողությունները, հասկանալիորեն, պետք է զգաստացնեին հայ ժողովրդին և նրա հոգևոր պետերին՝ կասեցնելու Հռոմի այդ համընդհանուր գրոհը: Հռոմի հայատյաց գործողությունների դեմ ծավալված պայքարում հայ հասարակական-քաղաքական, մշակութային ու կրոնական գործիչներին անսպասելիորեն օգնության ձեռք մեկնեցին նորաստեղծ հայ կաթոլիկ եղբայրություններից մեկի՝ Մխիթարյան միաբանության որոշ անդամներ: Միաբանության հիմնադիր Մխիթար

⁹⁶ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1933, նո. 2, էջ 113–114:

⁹⁷ Տե՛ս Աղ. Պլեյան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս, Վիեննա, 1878, էջ 171:

Աբբան դեռևս 1719 թ. հունվարի 12-ին եւ 1733 թ. ապրիլի 14-ին Հռոմի հավատաքննության ատյանին ներկայացրած իր ընդարձակ գեկուցագրերի մեջ թույլատրելի էր համարում հայ կաթողիկեներին առաքելական եկեղեցիներ հաճախելը և այնտեղ որոշ ծիսակատարություններ կատարելը⁹⁸: Հետևաբար, Մխիթար Սեբաստացին դեմ էր հայերի շրջանում կաթողիկ միսիոներների ծավալած հավատափոխական գործունեությանը և արտահայտվում էր իր ժողովրդի ազգային, մշակութային, կրոնական և կենցաղային ավանդույթները պահպանելու օգտին: Մխիթարի այդ քաղաքականության ջատագովներն էին հատկապես Գևորգ վարդապետ Այնթափցին, Միքայել Չամչյանը և վերջինիս աշակերտները: Մխիթարյանների այս խումբը փորձում էր որոշ զիջումներով և հավատարմության արտահայտություններով հայ ժողովրդի համար ապահովել Հռոմի կղերապետության և նրա միջոցով նաև եվրոպական միապետների հովանավորությունը: Նրանք գտնում էին, որ Վատիկանի կողմից դիտողության արժանացած դավանաբանական կնճիռները շատ հեշտությամբ կարելի է հարթել, որը չի խախտի և հայադավանության բուն էությունը և, թե մեծապես օգտակար կլինի պապության հզոր պաշտպանությունը և եվրոպական տերությունների համակրությունը շահելով: Մխիթարյանները զարգացնում էին այն թեզը, որ երկու եկեղեցիների փոխադարձ բանակցություններով, հայադավանության հիմնակետերը չխախտելով, հնարավոր է հասնել երկկողմանի համաձայնության: Իրենց տեսակետները նրանք փորձում էին հիմնավորել նրանով, որ հայկական եկեղեցին հռոմեականից հեռացած չէ և, որ Հայ եկեղեցու վարդապե-

⁹⁸ Տե՛ս Գ. Այվազովսկի, Ուրուագիծ ոգւոյ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետիոյ, Փարիզ, 1857, Ղուկաս վարդապետ Տերտերյան, Աբբա Մխիթարայ վարդապետի արարեալ պատճառք, որք առբերին ընդդեմ Լոցին, որք ասն թե ոչ երբեք պարտ է գնալ ուղղափառաց ի ժամն հայոց, Չմյուռնիս, 1879, էջ 46-47, հմմտ. Լաւս «Մուրճ-ամսագիր», Թիֆլիս 1901, նո. 2, էջ 143, Հ.Վ. Թորոսյան, Վարդ Մխիթարայ Աբբայի Սեբաստացոյ, Վենետիկ, 1901, էջ 321, Հ. Չավարյան, Մխիթարայան միաբանության բաժանումը, տես՝ «Հայրենիք» ամսագիր, 1931, նո. 12, էջ 107:

տությունը Հռոմի պապերից պաշտոնապես չի դատապարտվել իբրև հերետիկոս⁹⁹:

Վենետիկի Մխիթարյանների որդեգրած այդ սկզբունքի անուղղակի արտահայտությունն էր նաև Չամչյանի եռհատոր «Պատմություն հայոց»-ը: Այստեղ կարմիր թելի նման անցնում է այն միտքը, որ Առաքելական եկեղեցին և նրա հայրապետները երբեք էլ հերձվածողներ չեն եղել: Նա գրում է, որ դարեր շարունակ այդ «ստահող» տեսակետի հիմնավորողները եղել են ոչ թե Հռոմի պաշտոնական շրջանակները, այլ առանձին անհատների որևէ նշանակությունից զուրկ բացատրությունները: Ըստ այդմ էլ Չամչյանը սուր քննադատության է ենթարկում կաթոլիկ այն գործիչներին ու պատմագիրներին, որոնք, նրա կարծիքով, խախտելով պատմական իրողությունը, փորձել են ապացուցել, թե Հայոց եկեղեցին վաղուց ի վեր շեղվել է ուղղափառությունից: Չամչյանն իր վրդովմունքը չի կարողանում պահել նույնիսկ այնպիսի մի կաթոլիկ պատմագրի հանդեպ, ինչպիսին էր Կոնստանտին Գալանոսը, որին պապական պաշտոնական շրջանակները համարում էին «աստծո խարազան՝ Արևելքի հերետիկոսների համար»¹⁰⁰: Վերլուծելով Գալանոսի «Միաբանություն Հայոց սուրբ եկեղեցույն ընդ մեծի սուրբ եկեղեցույն Հռոմայ» (հատ. Ա-Գ, Հռոմ, 1650) աշխատության մեջ հայիոյանքների և «սուտ վարդապետների» տիտղոսին արժանացած Հովհան օձնեցուն, Անանիա Շիրակացուն, Պողոս Տարոնեցուն, Վարդան վարդապետին, Մխիթար Գոշին և այլոց ներկայացված մեղադրանքները՝ Չամչյանը հանգում է հակառակ եզրակացության և ամենայն ջերմեռանդությամբ հիմնավորում այդ վարդապետների ուղղափառությունը: Երկար բացատրություններով նա հերքում է Գալանոսի «սուտ մեղադրանքները»

⁹⁹ Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն երկրորդ, Կ.Պոլիս, 1914, էջ 2833, 2907, 3080-3081, 3161-3163:

¹⁰⁰ Տե՛ս «Բռնի միություն Հայոց Լեհաստանի ընդ կելեղեցույն Հռովմայ», հրատ. Կ. Եզյանի, Ս. Պետերբուրգ, 1884, էջ 121:

Նրանց հասցեին և հանգում այն եզրակացության, որ այդպիսի կանխակալ մոտեցմամբ հեղինակը «ոչ կարէր անաչառ մտօք զիրսն քննել»¹⁰¹: Ինչպէս տեսնում ենք, Չամչյանը չի հրապուրվում հայ ժողովրդի հանցեին անդադար հաճոյախոսություններ շտայլող Գալանոսի խոսքերից, նրա կեղծ կարեկցությունից: Դեռ ավելին, նա կասկածանքով է վերաբերվում այդ խոսքերի անկեղծությանը: Դրանով իսկ նա կասկածանքի էր ենթարկում մի գիրք, որը լույս էր տեսել Հոռմի Պրոպագանդայի դպրոցի հրատարակչությամբ, պապի անմիջական ցանկությամբ և շուրջ դար ու կես հանդիսանում էր ճիզվիտների և լատինամուլների տեսական, գաղափարական զենքը: Մինչև նույն ժամանակ Չամչյանը չի մոռանում մատնացույց անել հաշտության և մերձեցման այն եզրերը, որոնք, նրա կարծիքով, ընդհանրացնում էին «երկու քույր» եկեղեցիներին: Ի տարբերություն կաթոլիկ քարոզիչների, որոնք պնդում էին, թե հայ ժողովրդի համար անխուսափելի պահանջ է Հոռմի եկեղեցուն միանալը, Չամչյանը հավաստիացնում էր, թե դրա կարիքը չկա, քանզի հայոց եկեղեցին սկզբից և եթ ուղղափառ է եղել և մնում է այդպիսին: Չամչյանի զարգացրած վերոհիշյալ տեսության հիմնակետը հանգեցնում է հետևյալին. քանի որ հայ ժողովուրդը նույնպէս ուղղափառ է և Հոռմից հեռացած չէ, ինչ կարիք կա նրա մոտ քարոզիչներ ուղարկելով, ժողովրդի խաղաղությունը խտտորել: Դրանով նա փորձում էր դիմագրավել հայ ժողովրդին հերձվածող հորջորջող ծայրահեղ լատինամուլների և նրանց ոգեշնչող լատին քարոզիչների այն պառակտողական գործողություններին, որոնց նպատակը «մոլորյալ» հոտը Հոռմի փարախ առաջնորդելն էր: Չամչյանը այն առաջին հայ կաթոլիկ գործիչներից էր, որ ճիշտ դիրքորոշվեց ժամանակի հայության համար ստեղծված բարդ իրադրության մեջ, հասկացավ, որ այդ խառնակ հանգամանքներում հայ ժողովրդի ներքին միասնության համար անհրաժեշտ է

¹⁰¹ Մ. Չամչեան, Պատմություն Հայոց, հատ. Բ, էջ 653–670 և այլն:

նան կրոնական հաշտությունը: Մակայն այդ գաղափարի իրականացման համար մղվող պայքարում նա ստիպված էր հակադրվել մի կողմից Հոռմի կղերապետության հայատյաց գործակալներին, իսկ մյուս կողմից Առաքելական եկեղեցու այն գործիչներին, որոնք իրենց ծայրահեղ թշնամական դիրքորոշմամբ փաստորեն նպաստում էին եղբայրասպան դրամայի արյունալի իրադարձությունների ծավալմանը:

Կար նաև մի այլ հանգամանք, որն ստիպում էր Չամչյանին և նրա գաղափարակիցներին այդքան ամուր փարվել հայ-հոռմեական եկեղեցիների նույնության հիմնագուրկ գաղափարին: Նրանք ավանդաբար տուրք էին տալիս հայ ազատագրական շարժման այն գործիչների սին մտայնություններին, թե հայ ժողովրդի ազատագրությունը օտարի լծից կախում ունի միմիայն Հոռմից: Հետևաբար հայ գործիչների՝ Հոռմի հետ մշակած հարաբերությունները և քաղաքական նկատառումներով նրանց հանձն առած դավանական որոշ զիջումները Չամչյանի համար խիստ բնական էին, ուստի նա դրանք ներկայացնում է որպես հոռմեադավանության արտահայտություններ և ապացույց հայերի ուղղափառության: Կաթոլիկության տեսանկյունից մոտենալով հայ հոռմեական մերձեցումների բալոդ ու հակասական կնճիոների էությանը՝ Չամչյանը նախ և առաջ փորձում է դա վարագուրել արտաքո երևացող կրոնական միասնության ցանցառ շղարշով: Տվյալ դեպքում ևս, անկախ Չամչյանի մոտ առկա ազգասիրական անկեղծ մոտիվներից, Պոլսի հայ գաղթօջայսում նրա ծավալած այդ գործողությունները հետապնդում էին նաև երկու եկեղեցիների միասնության գաղափարը ներկայացնող նպատակ: Ինչևէ, Չամչյանի և Վենետիկի մյուս Մխիթարյանների այդօրինակ գործողությունների վերլուծությունից դժվար չէ մակաբերել, որ նրանք պայքարում էին Թուրքիայում բնակվող հայ կաթոլիկների համար տանելի կացություն ստեղծել օսմանյան տիրող օրենքների համակերպությամբ,

ազգային կաթողիկոսության և պատրիարքության հովանավորությամբ: Հասկանալի է, որ նրանց այդ ջանքերն օրեկտիվորեն նպաստում էին պապական ամենակույ ճգտումների և լատինամուկների դեմ մղվող պայքարին, ինչպես նաև հայկական համայնքը փոթորկող դավանաբանական կրքերը ինչ որ չափով հանդարտեցնելուն:

Ինչպես Չամչյանը, այնպես էլ նրա համախոհները լավ էին հասկանում, որ անհրաժեշտ է նաև իրենց որդեգրած քաղաքականությունը որոշակիորեն պաշտպանող զուտ դավանաբանական բնույթի մի աշխատություն, որը մեկընդմիջտ կհիմնավորեր հայ եկեղեցու ուղղափառությունը (փակագծերում նշենք, որ Վենետիկի Մխիթարյանները այս և նման այլ պարագաներում «ուղղափառություն» տերմինն օգտագործում են որպես հոմանիշ հոռմեադավանությանը): Դեռևս 1770-ական թվականների կեսերին, այսինքն այն ժամանակ, երբ Չամչյանը ձեռնամուխ էր եղել «Պատմութիւն Հայոց»-ի շարադրմանը, դրան զուգընթաց նա սկսում է աշխատել դավանաբանական նմանաբնույթ հարցեր շոշափող մի աշխատության վրա: Դա իր ժամանակ մեծ աղմուկ հանած «Վահան հաւատոյ, յորում հաստատի ուղղափառութիւն Հայաստանեայց եկեղեցոյ սկսեալ ի սրբոյն Գրիգորի: Հայաստանեայց Լուսատրչէ մինչև ցայսօր» խորագիրը կրող աստվածաբանական մեծածավալ (շուրջ 900 էջ) երկասիրությունն էր¹⁰²: Մոտ քառասուն տարի (1776–1815 թթ.) Չամչյանը չէր դադարեցնում աշխատանքը այդ գործի վրա: 1816 թ. փետրվարի 25-ին Մկրտիչ Ավգեյանին և Իզնատիոս Փափագյանին հղած իր նամակում նա շեշտում է, որ թեև աշխատանքը հիմնականում ավարտված է, սակայն ինքը չի շտապում այն «հանել ի վեր քանզի պատրաստեալ էի

¹⁰² Այս աշխատությունը արգելվել է Հռոմի հավատաքննության գերագույն ատյանի որոշմամբ, ուստի լույս է տեսել միայն նրա համառոտված տարբերակը, որը շատ հեռու է մայր օրինակն ամբողջականորեն ներկայացնելու որևէ միտումից: Այս համառոտված տեքստը հրատարակվել է՝ «Վահան հաւատոյ ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցոյ» (Կալկաթա, 1873) խորագրով:

ուղղագրել և կատարելագործել գնոյն»¹⁰³: Մեր կարծիքով «Վահան հաւատոյ»-ն հրապարակ չհանելու պատճառը, ոչ թե աշխատությունը «կատարելագործելու», ինչպես Չամչյանն է պնդում, ցանկությունն էր, այլ այն, որ նա չէր համաձայնվում գիրքը ներկայացնել Հռոմի գրաքննչական ատյանին, լավ հասկանալով դրա բոլոր հետևանքները ինչպես իր, այնպես էլ միաբանության համար: Եթե դա այդպես չէ, ապա ինչու քառասուն տարի շարունակ նա վախենում էր այդ գրքի մասին բարձրաձայն խոսել և «յամս բագումս առ իւր պահեր, առանց ցուցանելոյ ումեք, բաց ի կրօնակից վարդապետաց իւրոց և այլոց ըմանց սակաւաց»¹⁰⁴: «Վահան հաւատոյ»-ն, ինչպես ցույց է տալիս նրա տիտղոսաթերթին դրոշմված՝ «ինքնակամ յօժարությամբ և ստորագրութեամբ միաբանութեան իւրոյ» արտահայտությունը, ոչ միայն նրա հեղինակի, այլև Վենետիկի Մխիթարյանների մտայնություններն ամփոփող և դրանք հիմնավորող տեսական գեներ էր, ուղղված թե լատին քարոզիչների և թե նրանց քաղաքականության կառքին լծված կոլեժցիների ու Տրիեստի (Վիեննայի) Մխիթարյանների դեմ: Դա շատ պարզ էրևում է գրքի ամբողջ բովանդակությունից: Աշխատությունը, որի տասը գլուխներից յուրաքանչյուրում մեկ առ մեկ հերքվում էր Հայ եկեղեցու տասը կարծեցյալ մոլորությունները և այն ներկայացվում որպես ուղղափառ, միշտ Հռոմին միաբան, նպատակ չունեք միայն ապացուցելու Հայ եկեղեցու ուղղափառությունը և նրա կողմից Հռոմի պապի գերիշխանության ընդունումը, այլև այն կրոնական հաշտության կոչ էր դավանաբանական վեճերով խճողված հայ հատվածներին:

Չամչյանը շատ լավ էր հասկանում, որ դավանանքով բաժանված երկու հայ հատվածների անդորրն ու խաղաղությունը բզկտում են լատինամոլներն իրենց ազգատյաց գործողություններով: Ուստի

¹⁰³ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր կո. 9842, էջ 220:

¹⁰⁴ Մ. Չամչյան, Վահան Հաւատոյ, էջ 116 (ընդգծումը մերն է: – Ա.Ու.):

սույն երկասիրությամբ Չամչյանն աշխատում էր նախ և առաջ դիմակազերծել հայ ժողովրդի քաղաքական միասնությունը խոտորող, նրա ներքին ուժերը ջլատող, ազգային դիմագիծը կորցրած լատինամուլներին: Այդ կապակցությամբ նա գրում է. «Յետին ժամանակա առաքելք Հոովմայ (իմա՝ կոլեժցիներն ու նրանց արբանյակները – Ա.Ու.) տարածեալք ի Հայս սկսան չարիս խօսել զազգէն հայոց եւ պէս պէս մոլորութիւնս յօղել ի բանս հաւատոյ... եւ այսու ամենայնի որսացեալ եւ բազում ժողովրդականս հայոց ի թիկունս կոյս, յարուցին սպա շփոթութիւն մեծ ի մեջ ժողովրդեան, աղմուկ եւ կոիւ եղբօր ընդ եղբօրս, զմիմիանս կոչել հերետիկոս եւ մոլորեալս եւ հերձուածս»¹⁰⁵: Այլ առիթով պատմագիրը հատկապէս շեշտում է այն հանգամանքը, որ Հոովմի առաքյալները «բանիւք ստութեան եւ խարդախութեան զազգն ողջոյն պղտորեն երկպառակութիւն ի մեջ արկանեն, եւ խոովութեամբ լնուն, եւ զոմանս ի ծանր ծանր վնասս մատնեն»¹⁰⁶: Հասկանալով, որ լատինամուլները կույր գործիք են Հոովմի ձեռքին և նրա քաղաքականության հլու սպասավորները՝ Չամչյանն առաջարկում է վնասազերծել նրանց՝ մեկուսացնելով և ապա ընդհանուր ճակատ ստեղծել նրանց պառակտողական գործողություններին դիմագրավելու համար: Մխիթարյան միաբանության նախկին անդամ Գ. Այվազովսկին իր աշխատություններից մեկում բերում է Չամչյանի հետևյալ խոսքերը, որ նա ուղղել է գաղափարակից աշակերտներին. «Տոնկներէն (իմա՝ լատինամուլներից – Ա.Ու.) հեռո՛ւ որդեակք, հեռո՛ւ. մեր խեղճ ազգին տունը քանդողն անոնք են»¹⁰⁷: Հասկանալի է, որ Այվազովսկու պատմածը քննադատական վերաբերմանը է պահանջում: Սակայն, Չամչյանի մտքերի բուն ընթացքը, ինչպէս հաղորդում է Այվազովսկին, հետաքրքիր է ոչ միայն այն տե-

¹⁰⁵ Տե՛ս «Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին», կազմեց Հ. Թովմյան, էջ 281–282:

¹⁰⁶ Մ. Չամչյան, Վահակ իպատոյ, էջ 34:

¹⁰⁷ Գ. Այվազովսկի, նշվ. աշխ., էջ 44:

սակետից, որ դրանք համընթաց են նրա 1795–1820 թվականների գործունեության մասին պահպանված տեղեկություններին, այլև այդ կապակցությամբ մեկ ուրիշ մխիթարյան վարդապետի հայտնած դիտողությանը: Նախկին մխիթարյան Ս. Թեոդորյանը խոստովանում է. «Եթե անծանոթ էի սկզբանց պաշտոնեից ծառայոցին եւ ցարաշահութեան նոցին, եթէ չէի եւ ընթերցեալ զՎահան հաւատոյ Հ. Միքայելի եւ հաւանեալ բանից նորին»¹⁰⁸: Ս. Թեոդորյանի այս դատողություններում Չամչյանի երկասիրության նպատակները բնորոշող ինչ որ բան կա: Հեղինակը ճիշտ է նկատել, որ «Վահան հաւատոյ»-ն Պրոպագանդայի դպրոցի սաների չարաշահությունները, այսինքն հակահայկական գործողությունները դատապարտող գործ է: Եվ քանի որ այդ գործողությունները համակրանքով էին դիտվում ու քաջալերվում Վատիկանի պաշտոնական շրջանակներում, պարզ է դառնում, թե ինչու Չամչյանն ու նրան հետևող միաբանությունը այնքան խնամքով էին թաքցնում այդ գիրքը իրենց հակոտնյա կոլեժցիներից ու Հոռմի գրաքննական մարմիններից: Ճանաչելով Հայ եկեղեցին ուղղափառ և մերժելով լատինամուլների կողմից նրան ներկայացվող հերետիկոս ու հերձվածող որակումները՝ Չամչյանը դեմ էր դուրս գալիս նաև պապական պաշտոնական այն տեսակետին, որ միայն ու բացառապես հոռմեական եկեղեցին է ուղղափառ: Դա նշանակում էր, որ նա հայ ժողովրդի և՛ առաքելական, և՛ կաթոլիկ հատվածներին ճանաչում էր որպես միևնույն ուղղափառ եկեղեցու անդամներ: Դեռ ավելին, Չամչյանը պնդում էր, որ ինչպես Առաքելական եկեղեցին, այնպես էլ Կաթոլիկ եկեղեցին լիիրավ, համագոր և համահավասար անդամներ են ընդհանրական քրիստոնեական եկեղեցու: Ուստի վերջինը ոչ մի առավելություն և առաջնություն չունի առաջինի նկատմամբ: Չամչյանը որոշ վերապահությամբ է մոտենում պապի գերիշ-

¹⁰⁸ Ս. Թեոդորյան, Պատմություն Մուրատյան եւ Հայկազյան վարժարանաց և Մխիթարյան Աբբայից, հատ. Գ, Փարիզ, 1866, էջ 249: (Ընդգծումը մերն է – Ա.Ու.):

խանության հարցին: Դիմելով իր հակառակորդին՝ նա գրում է. «Ես հայ եմ, այսինքն ոչ ճանաչեմ ինձ յատուկ պատրիարք զպատրիարքն ֆռանկաց, ոչ ընդունիմ ինձ կաթողիկոս զպապն ձեր, ես իմունս ազգի պատրիարք եմ կաթողիկոս ունիմ... քանզի պապսն ոչ է կաթողիկոս ազգին մերոյ, այլ ֆռանկաց կաթողիկոս է»¹⁰⁹: Որ սա ոչ միայն Չամչյանի, այլև միաբանության տեսակետն էր, պարզ երևում է նաև նրանից, որ մխիթարյաններն իրենց զրական հրատարակությունների վրա դրոշմում էին նաև Ամենայն Հայոց հայրապետների անունները: Դրանով նրանք կարծեք ցույց էին տալիս, որ ընդունում են նաև նրանց իշխանությունը: Սակայն, միևնույն ժամանակ, Չամչյանը զանազան արհեստական բացատրություններով փորձում է հիմնավորել Հայ եկեղեցու նկատմամբ Հռոմի պապի գերիշխանությունը: Դա ինքնին խոսում է և՛ նրա տատանումների, և՛ հայացքների՝ երկվության մասին: Չամչյանը չկարողացավ կամ չհամարձակվեց հարցի ավելի արմատական լուծում առաջարկել: Եկեղեցական խոստումը, հոգևոր ուխտը և վերջապես սովորույթի ու սովանդույթի ուժը բազմաթիվ տեսանելի ու անտեսանելի թելերով նրան կապում էին Վատիկանի հետ: Այդուհանդերձ հետաքրքիր է նշել նաև այն փաստը, որ Չամչյանը պարտադիր չէր համարում պապի գերիշխանության բացարձակացումը: «Ոչ է հարկ,- գրում է նա,- իւրաքանչիւր հաւատացելոց, մանաւանդ պարզամտաց գիտել որոշակի, թե պապն է զլուխ եկեղեցոյ, կամ ի վեր քան զամենայն պատրիարքունս եւ այլն, զի այդ հովուաց կամ առաջնորդաց է անկ»¹¹⁰: Այս բոլորից հետո հասկանալի է դառնում, թե ինչու Չամչյանը մտերիմներին գրած նամակներից մեկում խոստովանում էր պարզապես, որ ինքը չի համարձակվում սույն երկաւիրությունը «երբեք հանել ի վեր»¹¹¹: Մյուս կողմից էլ նա չէր ցան-

¹⁰⁹ Մ. Չամչյան, Վահան հաւատոյ, էջ 100:

¹¹⁰ Նույն տեղում, էջ 102:

¹¹¹ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր նո. 9842, էջ 220:

կանում խնդիրը թողնել այդ վիճակում: Չցանկանալով անմիջակա-
նորեն իրենց վրա ուղղել Հռոմի զայրույթն ու ցասումը՝ Վենետիկի
մխիթարյանները փորձում են իրենց հուզող հարցերը նրան ներկա-
յացնել այլ ճանապարհով ու եղանակով:

1783 թվականին վենետիկցի հայտնի մեծատուն մարքիզ Հով-
հաննես Սեղբոսյանը (Marchese Giovanni di Serpos)¹¹² դիմում է Հռոմի
Պրոպագանդայի ատյանին և խնդրում քննարկել Թուրքիայում բնակ-
վող հայ կաթոլիկների դրության ուսումնասիրությանը նվիրված իր
աշխատությունը: Հ. Սեղբոսյանը Վատիկանին էր ներկայացրել
աստվածաբանական մի ստվարածավալ երկասիրություն, որտեղ
արծածված հարցադրումները, նրա կարծիքով, պետք է հստակությո-
ւն մտցնեին հայ առաքելական եւ կաթոլիկ համայնքների փոխհա-
րաբերությունների բարդ ոլորտում: Հեղինակն այստեղ առաջ էր քա-
շում երկու համայնքների հոգևոր հաղորդակցության անհրաժեշտությո-
ւան գաղափարը և հանգում այն եզրակացության, որ հայ կաթոլիկնե-
րը կարող են հաճախել Առաքելական եկեղեցիները՝ առանց իրենց
դավանությանը արատ բերելու: Հայտնի է, որ Սեղբոսյանը աշխար-
հիկ անձնավորություն էր և շատ հեռու էր կանգնած աստվածաբա-
նությունից: Սակայն նրա անունով ներկայացված աշխատության
առաջին իսկ թռուցիկ ծանոթությունը խոսում է նրա հեղինակի խորը
աստվածաբանական հմտության և գիտելիքների մասին: Կնճիոր
պարզելուն օգնում է հենց իր՝ Սեղբոսյանի խոստովանությունը: Աշ-
խատության առաջաբանում նա գրում է, որ «ուրիշներն են իր ձեռքից
բռնելով առաջնորդել այդ խնդիրների և եղելությունների լաբիրին-
թոսի մեջ»¹¹³: Հարց է ծագում, ո՞վ կարող էր օգնել վենետիկցի մեծա-

¹¹² Հավանաբար սա Մովսես Խորենացու Պատմության 1752 թվականի Վենե-
տիկյան հրատարակության մեկնեսա «Չքնադատարմ» Հովհաննես Չելեայի Սեղբոսն
էր:

¹¹³ Giovanni di Serpos, Dissertazione polemico-critica supra due dubbj di coscienza
concernanti gli Armeni cattolici sudditi dell'Impero Ottomano. Venezia, 1783. էջ VII:

հարուստին գրելու և Հոռմի աստվածաբանների դատին ներկայացնելու այդպիսի պատասխանատու և վտանգավոր հետևանքներով լեցուն մի աշխատանք: Հայտնի է նաև, որ մեծատուն մարքիզը սերտ կապեր է ունեցել Վենետիկի մխիթարյան հայրերի և հատկապես Մ. Չամչյանի հետ: Հետևաբար նրա խոստովանությունը անուղղակի վկայություն է այն մասին, որ ամենայն հավանականությամբ Չամչյանն է նրան առաջնորդել գրքում արձածված «խնդիրների և եղելությունների լաբիրինթոսի մեջ»: Մանավանդ, որ ինչպես նկատել է Մ. Օրմանյանը, Սեդրոսյանի գրքի ընդհանուր ոգին սերտ աղերս ուներ Չամչյանի «Վահան հաւատոյ» երկասիրության հետ: Չամչյանի և Սեդրոսյանի գրքերի ուշադիր քննությունը Օրմանյանին բերել է այն եզրակացության, որ վերջինս առաջինի համառոտ ամփոփումն է¹¹⁴: Երկու գրքերի նույնության հանգամանքը նկատել են նաև Վենետիկի մխիթարյանների հակառակորդները, որոնք գրում էին, թե Սեդրոսյանի երկասիրությունում «սուրբ Ղազարու միաբանության ոգին հայտնապես կտեսնվի»¹¹⁵: Նույն Հ. Սեդրոսյանը, 1786 թ. Վենետիկում հրատարակեց իտալերեն եռհատոր մի «Հայոց պատմություն»՝ կազմված Չամչյանի «Վահան հաւատոյ»-ի ուղղությամբ, բովանդակությամբ ու ոգով: Այդ աշխատության բոլոր վեց մասերում էլ հեղինակը մինևույն գաղափարն է ջատագովում, թե հայոց եկեղեցին Հոռմից հեռացած և նրանից դատապարտված չէ, ուստի նրան հերձված համարողները չարախոսներ են, քանի որ աղավաղել են ճշմարտությունը: Դարձյալ ելնելով թե սույն գրքի բովանդակությունից, և թե Սեդրոսյանի այն խոստովանությունից, որ «Չնայած ինքը ստանձնում է այս գրքի խմբագրության և տպագրության բոլոր ծախսերը և նրա հեղինակի պատասխանատվությունը, բայց գրվածքը իրենը չէ և

¹¹⁴ Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Բ, էջ 31–66:

¹¹⁵ Տե՛ս «Արշալոյս Արարատեան» լրագիր, 1853, նո. 432 (հավելված):

ինքը կարիք է ունեցել մի նշանավոր բարեկամի հմուտ գրչին»¹¹⁶. մնում է ենթադրել, որ այդ «նշանավոր բարեկամը» Չամչյանն էր:

Այս բուրքը մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ Չամչյանն ու նրա միաբանությունը փորձում էին օգտագործել Սեդրոսյանի դիրքն ու անունը, նրա հարստություններն իրենց որդեգրած սկզբունքի արժածման և իրականացման համար: Սակայն ի հիասթափություն նրանց, վերոհիշյալ երկու գրվածքներն էլ հավատաքննության ատյանի կողմից ճանաչվեցին իբրև մոլորական և մտցվեցին արգելված գրքերի ցուցակի մեջ¹¹⁷: Այսպիսով, արտահայտելով Վենետիկի միաթարյանների խոհերն ու ձգտումները, Չամչյանն իր երկասիրություններով և պրակտիկ գործունեությամբ ձգտում էր հայ կաթոլիկներին հեռու պահել լատինամոլ քարոզիչներից և լատինական ազդեցությունից, անկախ հայ բնիկ կաթոլիկություն ստեղծել, որը հոռմեադավան լիներ իր ներքին համոզումներով ու սկզբունքներով և որը միաժամանակ հպատակվելով Կ.Պոլսի հայոց պատրիարքարանին, չգատվեր հայադավան եկեղեցուց իր հանրական ու եկեղեցական հարաբերություններով:

Հայ ժողովրդի քաղաքական ու ներքին միասնության հայրենասիրական գաղափարը ստիպում էր Չամչյանին ու նրա գաղափարակիցներին դիմելու ավելի գործնական քայլերի: Մանավանդ, որ Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Չամաշրճյանն էլ (1800–1801, 1802–1813 թթ.) առաքելական և կաթոլիկ համայնքների միջև գոյություն ունեցող վիճաբանություններն ու գժտությունները վերացնելու միտումով համաձայն էր որոշ զիջողությունների գնով միաբանել երկու

¹¹⁶ Serpos G.di, Compendio storico di memorie cronologiche concernanti la religione e la morale della nazione armena, suddita dell'Impero Ottomano, Venezia, 1786, 3 vol., հաս. Ա, Առաջաբան, էջ VII (ընդգծումը մերն է – Ա.ՈԼ.):

¹¹⁷ Գ. Այվազովսկի, նշվ. աշխ. էջ 42:

համայնքները¹¹⁸: Չամչյանը եռանդուն մասնակցություն է ունենում այդ առթիվ հրավիրված խորհրդաժողովների կազմակերպմանը: Նրա կարծիքով եկել էր վաղուց ի վեր իր փայփայած երազանքների իրականացման պահը և երկու հայ հատվածները միավորվելու էին մեկ եղբայրական ընտանիքի մեջ: Սակայն այդ խորհրդակցություններում որևէ համաձայնություն չկայացավ և չէր էլ կարող կայանալ, որովհետև երկու կողմերից և ոչ մեկը չէր պատրաստվում հանուն միավորման՝ զոհասեղանին դնել իրենց սրբագործված ավանդույթներն ու սկզբունքները: Առաքելական որոշ գործիչների համաձայնդական միտումները դեռևս չէին նշանակում, թե ամբողջ Կ. Պոլսի և Թուրքիայի հայությունը, վերջապես Ամենայն Հայոց կաթողիկոսությունը պատրաստ էին ազգային եկեղեցու վարդապետության որոշ սկզբունքներ զոհել հանուն այդ գաղափարի: Դրան ավելացրած նաև այն, որ Վատիկանը խիստ անհանդուրժողական դիրք գրավեց այդ փորձերի հանդեպ, ուստի նա ևս զիջողության ճանապարհով գնալու որևէ միտք չուներ:

Անկախ միաբանողական այդ ճիգերի բացասական արդյունքներից, Չամչյանը Վահան Արշարունի կեղծ ստորագրությամբ շարունակում է գրել կրոնական-բանավիճական բնույթի նամակներ, որոնցում մերկացնում է հայ ազգային եկեղեցու ընդիմախոսներին և քննադատում այն լատինամոլ գործիչներին, որոնք շարունակում էին իրենց պառակտողական խոռվահույզ ընթացքը¹¹⁹: Ժամանակակիցների վկայությունների համաձայն Չամչյանը մեծ ջանքեր է գործադրում կաթողիկոսության դիմած հայերին մայրենի եկեղեցու գիրկը վերադարձնելու ուղղությամբ: Այսպես, նա բաղեջցի Սահակ քահանային,

¹¹⁸ Մանրամասնորեն տե՛ս Ա. Պերպերյան, Պատմություն Հայոց, Կոնստանդուպոլիս, 1871, էջ 67–71:

¹¹⁹ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի նո. 2586 ձեռագրում գտնվող ունն Օգոստինիոսին հովված Չամչյանի «Ի Հայաստան» վերտառությամբ նամակը, հմմտ. նաև Ադ. Երիցյան, Վենետիկի Մխիթարյանք. Թիֆլիս, 1883, էջ 56:

որը դիմել էր իր միջնորդությանը՝ կաթոլիկություն ընդունելու համար, խրատում է հավատարիմ մնալ հայրենյաց ավանդներին և իր միջոցներով նրան վերադարձնում է Բաղեշ¹²⁰: Բազմաթիվ փաստեր կան նաև այն մասին, որ Չամչյանի գաղափարակից աշակերտներ Ղ. Ինճիճյանը, Մ. Աղաչբաղյանը, Ս. Ճեվահիրճյանը և ուրիշներ, Լույսպետ ջանք չեն խնայել կաթոլիկություն ընդունած հայերին Առաքելական եկեղեցու գիրկը վերադարձնելու համար: Դիմելով «ազգի մեզ գայթակղություն» սերմանող, այսինքն կաթոլիկություն ընդունած մի խումբ մարդկանց՝ Ս. Ճեվահիրճյանը գրում է. «ճահիլություն է ըրածներդ», նախատում է նրանց և հորդորում վերադառնալ առաքելական դավանանքին¹²¹: Մեկ այլ միսիթարյան նշանավոր վարդապետ՝ Հ. Ջոհրապյանը, 1819 թ. Փարիզից իր եղբորորդիներին գրում է. «Խտելքերնիդ գլուխնիդ ժողվեցեք. դուք ազգով հայ էք. պետք է, որ մեր պատրիարքին հնազանդ ըլլաք»¹²²:

Չամչյանի և նրա աշակերտների այս գործողությունները, անշուշտ, չէին կարող աննկատ մնալ նրանց մշտարթուն հսկիչներ կոլեժցիների ամենատես աչքից: Հոռոմ ուղարկված մատնագրերում նրանք Չամչյանին որակում էին որպես «այր թշնամի», որն իր աշակերտների հետ «իբրև քարոզիչ կամ միսիոսար ընդ դիմակօք ուղղափառութեան՝ առաքեալ առ մեզ ի կողմանէ հայոց հերձուածողաց»¹²³, որսում են հայ կաթոլիկներին և նրանց վերադարձնում առաքելական եկեղեցու գիրկը: Իհարկե, ո՛չ Չամչյանը, ո՛չ էլ նրա հետևորդները կաթոլիկության դիմակով քողարկված առաքելականներ չէին, ինչպես ջանում են ներկայացնել նրանց հակառակորդները, և ինչպես կարծում են որոշ ուսումնասիրողներ: Չամչյանն ու նրա գաղափարակիցները ջերմեռանդ կաթոլիկներ էին, սակայն ոչ լատինամուլներ:

¹²⁰ Ս. Թեոդորյան, նշվ. աշխ., հատ. Ա, Փարիզ, 1866, էջ 4:

¹²¹ «Արշալոյս Արարատեան» յրագիր, Չմյուռնիա. 1852, նո. 430:

¹²² Նույնը, 1853 նո. 433 (հավելված):

¹²³ «Արարատ» ամսագիր. Վաղարշապատ, 1900, էջ 215:

Եթե վերջիններս առաջնորդվում էին այն սկզբունքով, թե առաքելական հայր մի ժանտախտ է, որից պետք է փախչել և կույր, կատաղի ու անհաշտ թշնամանք էին տածում հայության, հայոց լեզվի, հայ եկեղեցն ու ավանդույթների հանդեպ և իրենց պառակտողական գործողություններով բզկտում էին հայությանը, ապա Չամչյանն ու նրա համախոհները, երես թեքելով անմիտ լատինամոլությունից ու ազգատյատությունից՝ եղբայրության, միասնության ու սիրո առաջարկ էին անում դավանանքով բաժանված հայ հատվածներին: Հատկանշական է այն փաստը, որ երբ ծայրահեղ հակակաթոլիկական տրամադրություններով հայտնի Կ. Պոլսի հայոց պատրիարք Զաքարիա արքեպիսկոպոս Կաղզվացու (1773–1781 և 1782–1799 թթ.) ջանքերով օսմանյան կառավարությունն սկսեց լայն չափերի հասնող հալածանքներ, իսկ այնուհետև աքսորի և թիապարտության ենթարկել կաթոլիկ հայերին, Չամչյանը հատուկ գրություններով հորդորում է պատրիարքին համայնքը խաղաղեցնել և վերջ տալ անմեղ ժողովրդի հետապնդումներին¹²⁴: Ուստի հիմնագուրկ է Չամչյանի լատինամետ քննադատի զարգացրած այն տեսակետը, թե իբր նա իր գործողություններում առաջնորդվում էր «անձնական շահասիրությանը»¹²⁵: Միայն ժողովրդի միասնության շահի բարձր գիտակցությունն էր, որ ստիպում էր Չամչյանին բախվելու թե՛ իր կրոնակիցների, դրանով իսկ Հռոմի, և թե՛ առաքելական կղերի անջատողական ձգտումների դեմ: Պարզ է, որ դրանով նա «անձնական շահասիրության» չէր կարող հավակնել, քանզի իր դեմ էր հարուցում երկու կողմերի էլ բացահայտ թշնամանքը:

Չամչյանի պայքարը լատինամոլների դեմ սխալ է ընկալվել նաև Առաքելական եկեղեցու պաշտոնական շրջանակներում: Այստեղ ևս

¹²⁴ Տե՛ս Մ. Մըրմըրյան, Մասնավոր պատմություն հայ մեծատունների. (1400–1900), Կ.Պոլիս. 1909, էջ 70:

¹²⁵ «Արարատ»-ամսագիր. 1900, էջ 215:

նրա այդ գործողությունները երբեմն գնահատվել են որպես դիմակավորված առաքելականություն¹²⁶: Հայտնի է, որ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը առաջիններից մեկն էր, որ մատնացույց արեց Չամչյանի «Պատմութիւն հայոց»-ի շեշտված հոռոմեական եղջյուրաքաղությունը: Անկախ Արղությանի հարցադրման սուրբեկտիվ, անձնական մոտիվներից, պետք է նշել, որ նա ընդհանուր առմամբ ճիշտ է քննադատել Չամչյանին՝ Հռոմի առջև խնկարկելու, հայ ժողովրդի քաղաքական ու եկեղեցական պատմության որոշ հարցեր կաթոլիկության ջատագովի տեսանկյունով ներկայացնելու համար¹²⁷: Այնուհանդերձ այս ամենը չխանգարեցին, որպիսզի Չամչյանի ձեռնարկած միաբանական առաջին ճիգերն Արղությանի կողմից սխալմամբ արժեքավորվեին որպես ազգային եկեղեցու ջատագովություն, իսկ նրանց հեղինակն էլ համարվեր դիմակավորված առաքելական: Չամչյանին հղած իր նամակներից մեկում Արղությանը խորհուրդ էր տալիս նրան «ի բաց դևէ այն կեղծ դիմալակն, որ ակամայ կըկրէր, եւ գայ իւր վիճակն յԱստրախան»: Այդ նպատակով Կ.Պոլսի Չաքարիա Կաղզվանցի պատրիարքը Արղությանի հանձնարարությամբ բանակցություններ է սկսում Չամչյանի հետ՝ Սուրբ Ղազարի միաբանությունը Նոր Նախիջևան փոխադրելու վերաբերյալ: Նա մտադիր էր անգամ Մխիթարյաններին հանձնել նորակառույց Ա.Խաչ վան-

¹²⁶ Տե՛ս Գ. Պատկանյան, Ծաղկաբաղ ի յիսկատար կենսագրութենն սրբազան հայրապետի Ներսիսի Ե. վեհափառ եւ ազգասեր կաթողիկոսի Ամենայն Հայոց, հատ. Ա. Չմյուռնիա, 1876, էջ 57–63, Մատթեոս արք. Չուխանյան Հանդիսարան ուղղափառության հայոց եկեղեցվո, Կոնստանդնուպոլիս, 1854, էջ 267–270, Հ. Խաչկյան, Աղաղակ սրտի ընդդեմ վատասիրտ արանց, որք խռովին ի բարի գործս այոց, Կալկաթա, 1873, էջ 2 և այլն:

¹²⁷ «Հովսեփ արքեպիսկոպոսի Սամահնեցույ (Երկայնաբազուկ) Թուրք՝ ընդդեմ Հ. Միրայել Վ. Չամչյան Հայոց պատմութեան», տե՛ս Մ. Քեշիշյան, Յուցակ հայերեն ձեռագրաց Չմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 354–357, տե՛ս նաև Չամչյանի պատասխանը Արղությանին, նույն տեղում, էջ 357, հմմտ նաև Հ. Ռսկյան, Յուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանի ի Վիեննա, հատ. Բ, Վիեննա, 1963, էջ 463:

քը¹²⁸: Սակայն, հասկանալիորեն, այդ բանակցությունները չէին կարող որևէ դրական արդյունքի հանգել, քանի որ ազգային միության գաղափարը և դրա իրականացման ուղղությամբ Մխիթարյանների ձեռնարկած միջոցառումները դեռևս չէին նշանակում, թե նրանք պատրաստ էին հրաժարվելու կաթոլիկությունից: Նրանց հակառակորդները չէին հասկանում, որ կարելի է լինել կաթոլիկ, սակայն մնալ հայ, լինել հայրենասեր, ազգային ավանդույթների և ազգային միասնության ջատագով: Մխիթարյանների ամբողջ գործունեությունը սկզբից մինչև 19-րդ դարի երկու տասնամյակները հակոտնյա էր լատինամոլներին և ընթանում էր «ազգով հայ, կրոնով՝ կաթոլիկ»¹²⁹ սկզբունքի ներքո: Մխիթար Մեբաստացին էր նրանց ավանդել այդ. «Ջի թեպէտ սիրեմ զազգս իմ, եւ զաշխատիլն վասն օգտի նորա, բայց այնու սիրտ իմ ի յուղղափառէ դասնութենէ հաւատոյ սրբոյ եկեղեցոյն Հռովմայ ոչ երբեք մեղկանայ»¹³⁰: Չամչամը իր ամբողջ գիտական կյանքի ընթացքում հետևում էր իր մեծ ուսուցչի այս պատգամին և կրոնը ազգությանը հակադրող լատինամոլների դեմ մղվող պայքարում առաջնորդվում էր «ոչ կրոնն ազգության եւ ոչ ազգայնությունը կրոնին կը զոհեմ» ուղեգծով: Ջարգացնելով Մխիթարի հավատամքը, ընդգծելով, որ հայրենիքը, ազգն ու ժողովուրդը չպետք է շփոթել կրոնի հետ, Չամչանը կոչ էր անում բոլոր հայերին անկախ դավանանքից՝ հավատարիմ մնալ հայրենի հողին ու ջրին, նրա լեզվին ու ավանդույթներին: Ուստի պատահական չպետք է թվա այն հանգամանքը, որ նույն ժամանակ Կ. Պոլսի մխիթարիանների ամենակարկառուն դեմքերից մեկը՝ Ղ. Ինճիճյանը (Չամչանի ազգականն ու աշակերտը) ազգասիրության մասին հրատարակում է մի հատուկ երկ, որտեղ զարգացնում էր այն տեսակետը, թե կրոնից

¹²⁸ Գ. Պատկանյան, նշվ. աշխ., էջ 63:

¹²⁹ Տե՛ս «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1901, նո. 2, էջ 137:

¹³⁰ Աստվածաշունչ Գիրք, Վենետիկ. 1733, էջ 1279:

և ամեն ինչից վեր կանգնած են նախ և առաջ ազգության շահերը, նրա միասնության գաղափարը: Ինճիճյանի երկի հիմնական նպատակն էր հիշեցնել յուրաքանչյուր հայի նրա սրբազան պարտքը՝ «Իր ազգը կամ իր հայրենիքը ամենն առաջ եւ ամենն ավելի սիրել», որովհետև «Իր մենձ ծնողքը իր ազգն է», - եզրակացնում է հեղինակը: «Ազգը ամենն մենձ ընկերություն է,- շարունակում է մտորել Ինճիճյանը,- ամենն բնական ընկերություն է. անոր համար ով որ ան ազգեն է՝ պարտական է իր ազգը ամենն ուրիշ ընկերությունեն առաջ սիրել»¹³¹: Պետք է նկատել, որ Ինճիճյանի զարգացրած այս տեսակետը իր սուր ծայրով ուղղված էր լատինամուսնների առաջարկած «հայ մը, որ հայոց մեծագույն մասի կրոնը չունի, անոր ազգությունն ալ չունի»¹³² սկզբունքի դեմ: Ինչպես տեսնում ենք, Չամչյանի և Ինճիճյանի միջև գոյություն ունի սերտ գաղափարական աղերսակցություն: Եթե առաջինը դիմակազերծելով լատինամուսնների պառակտողական ճիգերը, գրում էր, թե նրանք «բանիւք ստութեան եւ խարդախութեան զազգն ողջոյն պղտորեն, երկպառակութիւն ի մէջ արանէն, եւ խոռովութեամբ լնուն»¹³³, ապա երկրորդը, նույնպես մերկացնելով նրանց, փորձում էր գտնել և բացատրել նրանց հակահայկական գործողությունների հիմնական դրդապատճառը: Ինճիճյանը գալիս է այն եզրակացության, որ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ «նուագութիւն սիրոյ առ հայրենիսն եւ առ ազգ իւր, յորմէ յառաջագայեալ ծաւալին ամենայն ախտիցն պղտորութիւնք»¹³⁴: Չամչյանը, Ինճիճյանը և Մխիթարյան հայրենասեր մյուս գործիչներն իրենց տեսական ու պրակտիկ գործունեությամբ հանդես էին գալիս Պրոպագանդայի դպրոցի սաների

¹³¹ Ղ. Ինճիճյան, Ազգասէր, ճառ ասացեալ ի փոյթ յորդորանաց յընտկութիւն սիրոյ ազգի և իր գգուշութիւն նորին ընդդիմակաց ախտիցն իսկառակաց, Վենետիկ, 1815, էջ 11-19:

¹³² «Եվրոպա» լրագիր, Վիեննա, 1853, էջ 16:

¹³³ «Ճոռարտը» ամսագիր, Մոսկվա, 1861, հատ. Բ., տետրակ ԺԲ, էջ 194:

¹³⁴ Ղ. Ինճիճյան, Ազգասէր, էջ 4:

ջանքով հետզհետե ձևավորվող այն վտանգավոր գաղափարի դեմ, որի համաձայն կաթոլիկությանը հետևող հայերը նոր ազգ են, որը ոչինչ ընդհանուր չունի «հերետիկոս և լուսավորչական հայերի հետ»: Եվ եթե Վատիկանի կողմից խրախուսվող ազգատյաց լատինամուկները «կրոնը ազգության փոխելով, սկսան իսկ օտարի նման զիրար թշնամանալ և անպատվություն համարելով հայ անունը մերժել և հեռանալ ի նման»¹³⁵, ապա Չամչյանն ու նրա քաղաքականության ջատագովները, կաթոլիկությունից չհրաժարվելով հանդերձ, կոչ էին անում բոլոր հայերին ներքին հաշտեցման եւ ազգային համախմբման: Դա համայն հայությանը մեկ միասնական ընտանիքի մեջ միավորելու անկեղծ, սրտաբուխ, սակայն, ինչպես կտեսնենք, լուրջ հենք չունեցող ուղեգիծ էր:

Այս բոլորից հետո, հասկանալիորեն, Հոռմին ցույց տրված Մխիթարյանների հավատարմական հավաստիացումներն արդեն պետք է դիտվեին որպես սոսկ արժեքազուրկ մուրհակներ: Պրոպագանդայի դպրոցի շրջանավարտները բազմաթիվ առիթներով մատնագրեր էին ուղարկում Հոռմ՝ հավատաքննության ատյանին, Մխիթարյանների ներքին տրամադրությունների, մտայնությունների, դեպի Վատիկանն ունեցած նրանց երկակի վերաբերմունքի մասին: Շուտով Հոռմը ինքն էլ է համոզվում դրանում: Որքան էլ որ մխիթարյանները փորձում էին գաղտնի պահել «Վահան հաւատոյ» երկասիրության գոյության փաստը, այնուամենայնիվ այդ մասին գիտեին նաև շատերը, այդ թվում և կոլեժցիները: Սրանք խիստ հսկողության տակ էին վերցրել «ի մահիճս ցաւագնեալ և լի հիվանդութեամբ»¹³⁶ Չամչյանի յուրաքանչյուր քայլը և ջանք չէին խնայում գիրքը ձեռք գցելու համար: Չվստահելով ոչ մեկին, հիվանդ պատմաբանը այդ գիրքը պահում էր իր մոտ՝ հատուկ արկղում: Սակայն 1815 թ. մարտի 4-ին Անտոնյան

¹³⁵ Տե՛ս «Խնդիր միութեան հայոց», Փարիզ, 1861, էջ 7:

¹³⁶ «Լուսնայ» ամսագիր. Թիֆլիս, 1899, գլխք Բ, հուլիս, էջ 257:

միաբանության անդամ Պողոս վարդապետ Փասփասյանը, Չամչյանների ընտանեկան դաստիարակի (այլ աղբյուրների համաձայն՝ հիվանդապահուհու) աջակցությամբ, երբ Չամչյանը բացակայում էր տանից, գողանում է այն և հանձնում Վատիկանի արքանյակներին: Ընդօրինակելով գրքի համառոտ բովանդակությունը¹³⁷, կոլեժցիները նույն Պողոս վարդապետի միջոցով այն ուղարկում են Հոռոմ և ներկայացնում հավատաքնության գերագույն ատյանին: Բացի այդ, անջատողական միսիթարյանների (Տրիեստի) պարագլուխ Աստվածատուր Բաբիկյանը պատրաստում է մի հատուկ ընդհմախտական շարադրանք՝ ուղղված ինչպես Չամչյանի, այնպես էլ նրա միաբանության դեմ¹³⁸: Չգուցելով չարախնդությունը «հրաշքով» իրենց ձեռքն ընկած գրքի հեղինակի նկատմամբ՝ հեղինակը հրճվանքով սկսում է մեկը մյուսի ետևից «ի հայտ բերել արբայեան պատմիչի (իմա՝ Չամչյանի – Ա.Ու.) եւ բոլոր միաբանութեան իւրոյ» հերձվածող նկարագիրը, մոլորություններն ու մյուս հանցանքները պապի հանդեպ. «Հ. Միքայել Չամչեանց,- մեղադրում է ընդդիմախոսը, -հիմն եւ բերան բոլոր արբայական միաբանութեան, ինքն կամելով զանձն ցուցանել թէ իցէ մեծ ոք, կցուցանէ զինքն ախոյեան եւ պաշտպան ուղղափա-

¹³⁷ Հարություն ամիրա Պեզդյանը 1817 թվին մի պատկառելի գումար վճարելով կոլեժցիներին, գնում է «Վահան հաւատոյ»-ի այս համառոտված տարբերակը: Ժամանակին Ավ. Պերպերյանը տեսել է այն և լայնորեն օգտագործել (տե՛ս Ա. Պերպերյան, նվժ. աշխ., էջ 106): 1823 թ. Պեզդյանի տան ուսուցիչ Պողոս սարկավագ Կոստանդնուպոլսեցին ընդօրինակում է այն և նվիրում Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանին (ձեռագիր նո. 419, տե՛ս Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հատ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 354-356): Մնացած բոլոր ձեռագրերը ծագել են այս օրինակից, այդ թվում և Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող «Վահան հաւատոյ»-ի գրչագրերը (ձեռագիր նո.նո. 1936, 2640, 2823, 2926, 3373, 4460, 9030, 9842) և Կակարթայի 1873 թ. հրատարակության համար հինգ ծառայած օրինակը: «Վահան հաւատոյ»-ի մասին տես՝ Լևոն Մ. Կարապետյան, Է. Թաջիրյան «Հայագրտական նյութերը Վատիկանի արխիվներում», ՊԲՀ, N 1, 1997, էջ 117:

¹³⁸ Տե՛ս Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Միսիթարյանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 950:

նութեան եկեղեցոյն Հայոց»¹³⁹:

«Վահան հաւատոյ»-ն Հոռոմի գիտական և աստվածաբանական շրջանակներում թողեց ռումբի պայթոյնի տպավորություն: Հեղինակին կարգադրվեց անմիջապէս ներկայանալ Վատիկան և կանգնել հավատաքննության ատյանի առջև: Ընկճված ու սարսափած Չամչյանին այլ բան չէր մնում անելու, եթէ ոչ նստել նավ՝ Հոռոմ մեկնելու նպատակով: Սակայն «պաշտպանեցին զնա (Չամչյանին – Ա.Ու.) մերքն (Վենետիկի Միսիթարյան միաբանությունը),- գրում է Ս. Թեոդորյանը,- եթէ այտի խելամուտ առնելով զբարեկամս իրեանց ճշմարտութեան, և խափանելով ի ձեռն նոցա զգնալն Հ. Միքայէլի ի Հոռովմ, թէպէտ և հրաման բացարձակ կայր առ նա ի կարդինալէ ծավալոցին, թէպէտ և նաւն վարձեալ էր և Հ. Միքայէլ յայն մտեալ՝ այլ խափանեաց ժողովորդն զգնալ նորա ի Հոռովմ»¹⁴⁰: Հոռոմում հրավիրված կարդինալների ժողովում բացատրություններ տալու համար, Չամչյանի փոխարեն, միաբանությունը ուղարկում է «զբաշ ախոյանն ճշմարտութեան»՝ Մկրտիչ Ավգերյանին: Չամչյանը բազմաթիվ նամակներով «առ սուրբ ժողովն» հավաստիացնում է Հոռոմին, որ ինքը անկեղծ ու ճշմարիտ կաթոլիկ է և պապի «հայրագութ տեսչութեան յամենայնի հնազանդ ծառայ»: Կարդինալների ժողովի պաշտպանությունը հայցող Չամչյանը փորձում էր գրքի մտահաղացման ամ-

¹³⁹ Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 536: Այս շարադրանքը տարբեր խորագրերով («Յայտնի ապացոյց նոր հերձուածող լինելոյ վերապատուելի հայր Միքայէլի Չամչեանց եւ բոլոր միաբանութեան իւրոյ», «Հերքումն Վահան հաւատոյ գրոց», «Վիճաբանութիւնը ընդդէմ Միքայէլի Չամչեան», «նոր տեսարան ապացոյց հերձուածողութեան Չամչեանի» և այլն) տեղ է գտել բազմաթիվ ձեռագրատներում՝ տն՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր նո.նո. 6469, 8946, 9843, 9924, Պողարյան, նշվ. աշխ., էջ 260–261, 596, Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ ձեռագրաց նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հատ. Ա. Վիեննա, 1970, էջ 776, Հ. Թովմյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, էջ 283, Բարկեն աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիո ազգային մատենադարանի հայոց, Անթիպաս, 1961, էջ 603–606:

¹⁴⁰ Ս. Թեոդորյան, նշվ. աշխ., հատ. Գ, էջ 279–280, հմմտ, նաև Ա. Չամիւնյան, Հայոց եկեղեցու պատմություն, Նոր Նախիջևան, 1908, էջ 201:

բողջ գաղափարը, այնտեղ զարգացրած տեսակետները վերագրել միմիայն իրեն: Դրանով նա ձգտում էր մեկուսացնել իր միաբանությանը և նրան հեռու պահել կասկածանքներից: 1816 թ. փետրվարի 25-ին Մ. Ավգերյանին և Իգ. Փափսզյանին հղած իր նամակում Չամչյանը, կեղծելով իրողությունը, գրում է. «Ի հոգալ իմում զՎահան հաւատոյ գրոց լուայ զձայն խորտակման աղեղանց. զարմացայ և զարմանամ, զի իմ էր գրուածն միայնոյ, գաղտ ի բնաւից եւ ի մեծաւորէ (արբահոր – Ա.Ու.) իմմէ և ի միաբանիցս, և որով իրաւամբ անկաւ բանն զհասարակութեամբ համայն: Եթէ դատապարտելի ինչ կայր ի նմա, իմ էր դատապարտութիւնն...», իսկ դոքա (կոլեժցիները – Ա.Ու.) զիս թողեալ արկին զդատաստանն զհասարակութեամբ (Վենետիկի Մխիթարյան միաբանության – Ա.Ու.) մերով»¹⁴¹:

Ինչ խոսք, Չամչյանի այս շինծու բացատրություններն ու Ավգերյանի անհիմն պնդումները տպավորություն չէին կարող թողնել, որովհետև բազմաթիվ փաստեր կային հակառակն ապացուցելու համար: Սակայն, մյուս կողմից էլ, կարդինալների ժողովին (նաև Վատիկանի) ձեռնտու չէր, որպիսզի հավատաքննության գերագույն ատյանի կողմից «սարսափելի աստվածաբանի» (teologo terribile)¹⁴² տիտղոսին արժանացած Չամչյանն այժմ ներկայանար որպես մոլորյալ, ուստի նրանք ևս խնդիրը կարճում են. «Արդարացավ Հ. Միքայել, թէպետ և լուելեան, քանզի չէր մարթ առաւել քան զայն շնորի առնել մեզ ծաւալոցին այլ լուել միայն»¹⁴³: 1819 թ. մայիսի 5-ին ընդհանուր

¹⁴¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր նո. 9842, էջ 218: Ի դեպ, Մ. Նալբանդյանն իր «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» (տե՛ս «Երկերի լիակատար ժողովածու», հատ. Բ. Երևան, 1948, էջ 185–231) հողվածաշարքում բերելով այս նամակի ամբողջ տեքստը. իրավացիորեն նշում է, որ այն «մի անուս և տգետ գրչի ձեռքով արտագրված լինելով, բնթգրից արճատված է» (նույն տեղում, էջ 226): Նալբանդյանի «Երկերի» սույն հրատարակության տեքստերի կազմող և ծանոթագրությունների հեղինակ Ն. Մուրադյանին անհայտ է մնացել այս նամակի աղբյուրը (նույն տեղում, էջ 426, ծմ. 21):

¹⁴² Ղ. Ալիջան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 138:

¹⁴³ Մ. Թեոդորյան, նշվ. աշխ., հատ. Գ, էջ 280:

հավատաքննության ժողովի մասնակից «վսեմապատիվ» կարդինալները երկար վիճաբանություններից հետո վճռում են «թագուցանել զՎահան հաւատոյն» որպէս «վտանգավոր ոչ անմասն գոյ ի կասկածանաց մոլորութեանց նպաստաւորաց հերետիկոսութեան և հերձվածոյ, և պարունակեալ յինքեան նախադասութիւնս սուտս յանդգնականս՝ գայթակղականս՝ և թշնամադիրս լատին եկեղեցոյ և ծայրագոյն քահանայապետաց» աշխատություն, իսկ Չամչյանին էլ չհամարել նրա հեղինակ և ճանաչել ուղղափառ: 1819 թ. հունիսի 30-ին Պիոս Ե պապը վավերացնում է այդ վճիռը¹⁴⁴: Ինչպես ճիշտ նկատել է դեռևս Ալ. Երիցյանը¹⁴⁵, Վատիկանի այս ներողամտությունը պետք է բացատրել նրանով, որ նա տեղյակ էր առաքելականների հետ Մխիթարյանների միաբանողական փորձերի մասին, ուստի հեռատեսորեն անհրաժեշտ էր համարում չգրգռել նրանց և աստիճանաբար սառեցնել Չամչյանի ու նրա հետևորդների միութենական ու ազգասիրական կրթերը:

Հոռմին ջերմեռանդությամբ հավատարմություն ու հնազանդություն հայտնող Չամչյանը այս բոլորից հետո ևս շարունակում էր իր երկակի գործունեությունը: Նրան չէր լքում երկու հայ համայնքները միաբանելու խորհուրդը: Թեև ոչ նախկին եռանդով, այդուհանդերձ նա խրախուսում է Մխիթարյանների նոր բանակցությունները հայոց պատրիարքարանի հետ և աջակցում դրանց: Սակայն Մ. Չամչյանը իր փայփայած երազանքների իրականացման ուղղությամբ ապրեց մի վերջին հուսախաբություն ևս՝ տեսնելով Կ. Պոլսի Պողոս Գրիգորյան պատրիարքի (1815–1823 թթ.) ժամանակ հրավիրված խորհրդա-ժողովների արդյունքները¹⁴⁶: Այս ձեռնարկումների գլխավոր դերա-

¹⁴⁴ Մ. Չամչյան, Վահան հաւատոյ, էջ 117:

¹⁴⁵ Ալ. Երիցյանց, նշվ. աշխ., էջ 53:

¹⁴⁶ Այս խորհրդաժողովների մասին մանրամասն տես Ա. Պերպերյան, նշվ. աշխ., էջ 82–83, 96–97, 103–106, 115–129, 131–170, «Պատմութիւն անցից որ եղև ի Կոնստանդնուպոլիս», Կ. Պոլիս, 1818, էջ 1–35, Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հատ. Գ.

կատարներն արդեն Վենետիկի Մխիթարյան միաբանության նոր՝ երիտասարդ սերնդի ներկայացուցիչներն էին: 1820 թ. հունվարի կեսերին մխիթարյան և կաթոլիկ այլ վարդապետներ Մ. Աղաչբաղյանը, Ս. Ճեվահիրճյանը, Հ. Մաքսեթյանը, Բ. Ազնավուրյանը, Գ. Գասարճյանը, Հ. Ասկերյանը մտան այն հանձնախմբի մեջ, որը Պողոս պատրիարքի կողմից առանձնացվել էր երկու համայնքների միաբանության խնդիրը լուծելու համար: Զառամյալ ու հիվանդ Չամչյանը տեսնելով դեպքերի զարգացման այդ ընթացքը, չի կարողանում թաքցնել ուրախությունը և հունվարի 18-ին գրիչ է վերցնում վերոհիշյալ վարդապետներին քաջալերելու համար, գրելով՝ «Եւ թէպէտ յամենայն սրտէ անձկայի գալ ի ժողով ձեր, բայց զի չունիմ կար ելանել յոտս, վասն որոյ այժմոս գայս գիր յանձնարարական՝ դողդողեալ ձեռօք գրեալ առ ձեզ, աղաչեմ զի մի՛ զիս պատճառ առեալ յետս կացոյիք ի հոգևոր գործոյդ. այլ միով հոգով զորացեալք ի կատարումն առաջիկայ գործոյդ փութասցեք»¹⁴⁷: Այնուհետև Չամչյանը հույս էր հայտնում, թե ինքը վերջապես կտեսնի «զխաղաղութիւն և զմիաբանութիւն ազգիս, զսէր եղբարց մերոց առ միմիեանս» և սլատրաստակամություն էր հայտնում ժողովում ընդունված որոշման տակ «յօժարակամ կամօք յանձն առնել, ստորագրել և կնքել»: Սակայն ոչ հրավիրված ժողովը (ապրիլի 2-ին) և ոչ էլ այդ ժողովի կողմից պատրաստված «Հրավեր սիրոյ» շրջաբերականը¹⁴⁸ ոչ էլ կատարած փոխզիջումները համերաշխություն չբերեցին կողմերին: Փաստորեն սպասված միության փոխարեն այն բոլորովին հակառակ արդյունք

Երուսաղեմ, 1927, էջ 3442–3471. • Լ. Ըստկարյան, Եկեղեցական պատմություն. Վինենա, 1827, էջ 400–402, «Ընդարձակ օրացույց Ս. Փրկչան հիվանդանոցի հայոց», 1901, էջ 182–184 և այլն:

¹⁴⁷ Տե՛ս «Լումայ» ամսագիր, Թիֆլիս, 1899, գիրք Բ, հուլիս, էջ 357:

¹⁴⁸ «Բան, հրավեր սիրոյ», Փարիզ, 1857: Այս շրջաբերականի ոգին նրանում արծաձված հարցերի քննությունը խոստում են Պողոս պատրիարքի՝ որա եթև ոչ հեղինակի, ապա յամբագիր լինելու ենթադրության օգտին (տե՛ս Հ. Մըրմըրյան, Ստվերք հին դեմքերու, 1635–1900), Կ. Պոլիս, 1907, էջ 43:

ունեցավ, ավելի խորացնելով գծությունները միմյանց միջև:

Խոսելով միաբանական այդ ճիգերի անհաջող արդյունքների մասին պետք է նշել, որ Չամչյանի կուսակիցները դեռևս փոքրաթիվ հետևորդներ ունեին և չէին ներկայացնում ոչ միայն Թուրքիայում բնակվող բոլոր կաթոլիկ հայերին, այլև Կ. Պոլսի կաթոլիկական համայնքը: Ստեփանոս Ազոնց արբահայրը, որը քաջալերում էր իր վարդապետների միութենական երկչոտ փորձերը, գրում է նրանց. «բարի են ձեր գործք, բայց հանցանքնիդ այն է, որ խիստ քիչ եք թվով», ուստի խորհուրդ էր տալիս «բազմացուցեք զթիւն»¹⁴⁹: Նրանց ընդիմադիր կուսակցությունը (Պրոպագանդայի դպրոցի սաները, Տրիեստի Մխիթարյանները, Անտոնյան միաբանության մեծագույն մասը և այլք) բավականին ուժեղ դիրքեր ունեին հայ կաթոլիկական համայնքում և բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, թե՛ խրախուսվում, և թե՛ մեծ օգնություն էին ստանում Վատիկանի, Եվրոպական դեսպանների և Կ. Պոլսի լատին եպիսկոպոսապետերի կողմից: Վերոնշյալ իրադարձությունների ժամանակ Կ. Պոլսի լատին եպիսկոպոս Վինչենցո Գոյրեսը ամբիոնից նզովում է միության փորձ կազմակերպողներին և նրանց համակիր ու աջակից մյուս անձանց¹⁵⁰: Դա առաջ բերեց նաև Հռոմի պապի գայրույթը, որը «անհապաղ դատապարտեց թե՛ ժողովը, և թե՛ անոր մասնակից միանձուկը»¹⁵¹: Ինչպես արդեն նշել ենք, միաբանական փորձերը չէին խրախուսվում նաև ամենայն հայոց կաթողիկոսության կողմից և Կ. Պոլսի որոշ պատրիարքներ իրենց համախոհներով չէին ներկայացնում հայ պաշտոնական եկեղեցուն: Խորհրդակցություններում արծածված հարցերը կարող էին քննարկել և դրանց շուրջը որոշումներ ընդունել միայն ընդհանրական կաթոլիկոսի նախագահությամբ հրավիրված ազգային եկեղեցական

¹⁴⁹ Տե՛ս «Արշալոյս Արարատեան», 1853, նո. 432 (հավելված):

¹⁵⁰ Նույն տեղում:

¹⁵¹ Ա. Պալճյան, նշվ. աշխ., էջ 175, հմմտ նաև Ա. Չամիսյան, նշվ. աշխ., էջ 205:

ժողովները: Ահա թե ինչու ժամանակի կաթողիկոս Եփրեմ Ա. Ձորագեղցին (1809–1835 թթ.) հատուկ նամակով հանդիմանում է Պողոս պատրիարքին իր իրավասություններից բարձր կանգնած այդ փորձերի համար: Դեռ ավելին, միաբանողական այդ գործողությունների ժամանակ միանգամայն հակառակ դիրք բռնեցին ժողովրդական լայն զանգվածները, որոնք հայ հոռմեականներին տրված յուրաքանչյուր զիջում դիտում էին որպես զիջում Հոռմին և ազգային եկեղեցու շահերը ոտնահարող ձեռնարկներ: «Մենք հայ ենք..., մեր փռանք չենք լինում»¹⁵² բացականչություններով 1820 թ. օգոստոսի 8-ին հարյուրավոր արհեստավորներ, մշակներ, գործակատարներ, մանր առևտրականներ և այլք, հավաքվել էին Կ.Պոլսի մայր եկեղեցու բակում, «Ֆռանկացեալ» պատրիարքից պահանջելով բացատրություններ տալ այդօրինակ գործողությունների համար: Չստանալով դրանք՝ ժողովուրդը ներխուժեց պատրիարքարան: Ահաբեկված պատրիարքը մի կերպ ճողոպրեց՝ թաքնվելով մոտակա թուրքական թաղամասերում: Միայն կառավարության ձեռնարկած խիստ միջոցառումները (գորքերի կենտրոնացում պատրիարքարանի շրջանում, պատրիարքարանի գրավում, ձերբակալություններ ու բանտարկություններ) կարողացան առ ժամանակ հանդարտեցնել բորբոքված կրքերը¹⁵³:

Այսպիսի պայմաններում Վենետիկի Մխիթարյանների միաբանական բոլոր ճիգերը, հասկանալիորեն, պետք է ապարդյուն անցնեին: Դրան ավելացրած նաև այն, որ հենց Մխիթարյանների մեջ

¹⁵² Տե՛ս Մ.Պ., Վարքագրություն Հարություն ամենայն Պեզնեան Խազգ անվանելոյ ազգային անգուգական բարերարի, Թեոդոսիա, 1872, էջ 50:

¹⁵³ Տե՛ս Ա. Պերպեոյան, Եզվ. աշխ., էջ 163, հմմտ նաև Մ.Պ., Եզվ. աշխ., էջ 51–55. Մտ. Պալասանյան, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1884, էջ 717–718. Հ. Մովսիսյան, Հայաստանեայց առարկական ս.եկեղեցու պատմություն, Վաղարշապատ, 1884, էջ 344–345, Ա. Ալպոնյան, Ազգային սահմանադրությունը ու իր ծագումը և կիրառությունը, տե՛ս «Ընդարձակ օրացույց ս. Փիլյան հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1910, էջ 148:

զգալի թիվ էին կազմում պահպանողական դիրք գրավածները, որոնց Չամչյանն իր նամակներից մեկում անվանում էր «թշնամի ընտանի»¹⁵⁴։ Իսկ Չամչյանի կողմնակիցներից ավելի արմատականները, օրինակ Ղ. Ինճիճյանը, վերոհիշյալ ապարդյուն փորձերից հետո առաջարկում էին հրաժարվել կաթոլիկությունից և ս.Ղազարը գլխովի միավորել Էջմիածնի հետ։ Քանի որ դրանից հետո «Հոռուից նեղություն մը տեսնելու» հետևանքով Վենետիկում մնալը կդառնար անհնարին, Ինճիճյանը առաջարկում էր միաբանությունը փոխադրել Լոնդոն կամ մեկ այլ տեղ¹⁵⁵։

Տեսնելով երկար տարիներ ի վեր փայփայած իր պատրանքների խորտակումը, հայ ժողովրդի մասնատման գործընթացի հետագա շարունակումը, ամեն ինչից վերջնականապես հիասթափված Չամչյանը հեռանում է հասարակական ասպարեզից։ Այս դեպքերից շատ չանցած, 1823 թ. նոյեմբերի 30-ին, 86 տարեկան հասակում նա վախճանվում է և թաղվում Կ.Պոլսի Բերայի գերեզմանատանը։

Այսպիսով, վերոշարադրվածը մեզ հիմք է տալիս պնդելու, որ Մ. Չամչյանը եղել է հայ հասարակական մտքի ամենաինքնատիպ ներկայացուցիչներից մեկը։ Նա այն մտածողներից էր, որոնք իրենց ողջ գործունեությամբ պայքարել են հայ ժողովրդի ինքնության պահպանման համար։ Չամչյանի պայքարը եվրոպական կաթոլիկ պետությունների և պապական եկեղեցու գործակալների դեմ հետապնդում էր ոչ միայն կրոնական, այլև քաղաքական նպատակներ։ Արևելքում տնտեսական ու քաղաքական գորեղ հենակետեր ստեղծելու համար՝ եվրոպական տերությունները հրահանգավորում էին իրենց շրջիկ լրտես-քարոզիչներին միջոցների առջև կանգ չառնել հայերին կաթոլիկացնելու ուղղությամբ։ Այդ մտայնության համար էր, որ նրանք առաջ էին քաշում հայկական եկեղեցին հոռմեականին միացնելու

¹⁵⁴ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր նո. 9842, էջ 218։

¹⁵⁵ «Արշալույս Այրարատեան», 1853, նո.432 (հավելված)։

անհրաժեշտության խնդիրը, որն էլ իր հերթին հետապնդում էր հայերի ճուլման երազապատիր նպատակ: Այս հարցում Չամչյանի ու նրա գաղափարակիցների հայրենասիրական դիրքորոշումը հանդիսանում էր քաղաքական հակակշիռ պապական միսիոներների քարոզած արևմտյան այն կողմնորոշման, որի մոլեռանդ երկրպագուներն էին նաև հայ լատինամուլները: Հետևաբար, Չամչյանի պայքարը նրանց դեմ ուներ առաջադիմական նշանակություն և օբյեկտիվորեն հանդիսանում էր պայքար հայ ժողովրդի ազգային-քաղաքական ամբողջականության համար:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄԻՔԱՅԵԼ ՉԱՄՉՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

XIV–XVI դդ. Հայաստանում տիրող աննպաստ սոցիալ-քաղաքական պայմաններն իրենց բացասական հետևանքները գտան հայ մշակութային կյանքի բոլոր բնագավառներում: Սույն ժամանակաշրջանը հատկապես դժգոյն էր հայ պատմագիտության զարգացման տեսակետից: Ժամանակի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային տեղաշարժերն իրենց արձագանքներն էին գտնում ոչ թե մեծածավալ ու բարձրարժեք պատմական երկերում, այլ շարքային գրիչների թողած հիշատակարաններում և սեղմ ու համառոտ ժամանակագրություններում:

Սակայն XVII դարի երկրորդ քառորդից սկսած Հայաստանում հաստատված համեմատաբար խաղաղ պայմանները բարերար ազդեցություն են ունենում հոգևոր զարթոնքի՝ այդ թվում և պատմագիտական մտքի զարգացման համար: Ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ հայկական գաղթօջախներում վերականգնվում են պատմագիտության ընդհատված ավանդույթները և մեկը մյուսի ետևից հրապարակ են իջնում Առաքել Դավրիժեցու, Գրիգոր Դարանաղեցու (Կամախեցի), Ջաքարիա Սարկավագ Քանաքեռցու, Հովհաննես Կամենացու, Երեմիա Չելեբի Քյումուրջանի, Ջաքարիա Ագուլեցու,

Սիմեոն Լեհացու, Հակոբ Կարնեցու (XVII դ.), Աբրահամ Կրետացու, Աբրահամ Երևանցու, Խաչատուր Ջուղայեցու, Սիմեոն Երևանցու, Եսայի Հասան-Ջալալյանի, Ստեփանոս Շահումյանի (XVIII դ.) և այլոց բարձրարժեք երկասիրությունները: Ճիշտ է, նշված հեղինակների աշխատությունները հայ միջնադարյան պատմագրության օրգանական շարունակությունն էին և նրանց մեծագույն մասը լի էր առասպելաբանությամբ, երկարաշունչ դատողություններով, դավանաբանական վիճաբանություններով և այլն, սակայն XVII–XVIII դդ. հայ պատմագիրների երկերում ի հայտ են գալիս նաև այնպիսի մտայնություններ ու գաղափարներ, որոնցով նրանք կտրուկ տարբերվում են իրենց նախորդներից: Չնայած անցյալի հետ ունեցած իր թեմատիկ, գաղափարական և ձևական աղերսակցությանը՝ XVII–XVIII դդ. հայ պատմագիտությունը ձեռք է բերում միանգամայն նոր երանգ ևս: Նախորդ պատմաշրջանների պատմագիտության լավագույն ավանդույթների վերականգնման հետ մեկտեղ այս շրջանում որոշ աշխատանք է կատարվում նաև հայ ժողովրդի պատմական դարավոր ուղու բացահայտման ու արժեքավորման ուղղությամբ: Հրապարակ եկած պատմագիտական երկերի հիմնական իմաստը դառնում է ազգային ինքնաճանաչությունն ու հայրենասիրությունը: XVII–XVIII դարերի հասարակական-քաղաքական և մշակութային բուռն տեղաշարժերը, Օսմանյան Թուրքիայի և շահական Պարսկաստանի տիրապետությունների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարը, ազատագրական շարժումները, դրանց միտքն ու գաղափարախոսությունը հայ պատմագիտությանը պարտադրեցին նոր թեմատիկա և ուղղվածություն: Հայ հասարակական կյանքի աշխուժացումը XVIII դարի կեսերին օրվա հրամայական է դարձնում նաև ժողովրդի ամբողջական պատմությունն ունենալու հարցը: Ժամանակի հասարակական-քաղաքական և պատմագիտական մտքի առաջադեմ ներկայացուցիչները լավ էին հասկանում, որ հայ երիտա-

սարդությանը մտավոր ստրկությունից ու դարավոր տգիտությունից կարող է սթափեցնել և նրա մեջ ազգային գիտակցության ոգի դաստիարակել ժողովրդի հերոսական անցյալի պատմության ուսումնասիրությունն ու տարածումը: Հետևաբար, անհրաժեշտ էր ունենալ հնագույն ժամանակներից սկսած մինչև իրենց օրերը հայոց պատմությունն ամփոփող ուսումնասիրություններ: Ուստի պատահական չէ, որ XVIII դարի երկրորդ կեսից սկսած այդ ուղղությամբ կատարվում են որոշ փորձեր: Առաջինը Կ. Պոլսի պատրիարք Հակոբ Նալյանի՝ «Յաղագս փոքրիկ ազգիս Հայոց թէ յորոց սերեցան, զինչ քաջութիւնս արարին, որքան երկիր տիրեցին, և ուր թագաւորեցին» բաւարարությունն էր¹⁵⁶, նվիրված Հայաստանի պատմությանը՝ Հայկից մինչև Կիլիկիայի հայկական թագավորության անկումը: Հետագայում մի փորձ ևս կատարվեց Մովսես Բաղրամյանի կողմից, որն իր աշխատասիրած «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»՝ քննդաքական-հրապարակախոսական գրքում¹⁵⁷ վերլուծության է ենթարկում հայ ժողովրդի պատմությունը՝ հին ժամանակներից մինչև իր օրերը: Մակայն ազգային համահավաք պատմություն ստեղծելու ուղղությամբ կատարված այս երկու անդրանիկ փորձերն էլ դեռևս շատ հեռու էին ամբողջական լինելուց: Դրանք սխեմատիկ էին, խիստ ամփոփ և ժամանակագրական ու փաստական մեծ խառնաշփոթություններով լի: Հետևաբար և՛ մեկը, և՛ մյուսը դեռևս չէին կարող բավարարել ազգային ամբողջական պատմություն ունենալու հետզհետե ուժեղացող ձգտումները: Այսուհանդերձ, Հ. Նալյանի և Մ. Բաղրամյանի այդ երկասիրությունները տոգորված էին ազգային ինքնաճանաչողության առաջին նշույլներով և հարկավոր էր դրանք ավելի ստվարացնել ու ընդարձակել:

¹⁵⁶ Տե՛ս Հակոբ Նալեան, Գանձարան ծանուցմանց, Կ. Պոլիս, 1758:

¹⁵⁷ Մաղրաս, 1772:

Հայոց պատմության բացահայտմանը նվիրված ամբողջական հետազոտության անհրաժեշտությունը դառնում էր օրակարգի խնդիր: Անհրաժեշտ էր ժամանակակիցներին ոգեկոչել անցյալի պատմության հերոսական ու դրամատիկ դրվագներով, պատգամախոսել հայոց դյուցազունների ու հերոսների անուններից, սեր արթնացնել հայրենի երկրի և նրա պատմության նկատմամբ: Հասարակական-քաղաքական զարթոնքի դրսևորման այս եղանակը ներհատուկ է եղել նաև այլ ժողովուրդների:

Բազմադարյան հայ պատմագիտության համար միանգամայն աննախընթաց երևույթ էր XVIII դարի 80-ական թվականներին հրապարակ իջած Միքայել Չամչյանի եռհատոր «Հայոց Պատմությունը»¹⁵⁸: Ինքը՝ Մ. Չամչյանը այդ գործի ձեռնարկման դրդապատճառները մեկնաբանում է հետևյալ կերպ. «Ապաքէն առ ամենեսին ցանկալի է ծանօթութիւն սկզբնատրութեան իւրեանց ազգի, և տեղեկութիւն անցից անցելոց ի նմին: Յոյր սակս յամենայն ազիւս, որք միանգամ ձեռնհաս գտան, հետամուտ ի նոյն եղեն. և կարգեցին գիրս վիպասանութեան նախնեաց իւրեանց, և գործոց նոցին: Այս փոյթ թէպէտ և յազգի մերում երևեցաւ, այլ ոչ ծաղկեցաւ...: Ի սոյն հայեցեալ՝ ի բազմաց հետէ ցանկացաք զպատմութիւն ազգիս մերոյ ըստ օրինի կարգել. զի մի յայսմ մասին ևս գտցուք նուազեալ բան զամենայն ազգս»¹⁵⁹: Ուրեմն, ուրիշ ազգերից ետ չմնալու հայրենասիրական ձգտումն է նաև դրդել Չամչյանին տասնամյակներ շարունակ «տառապանքներ կրել», որպեսզի կարողանա շարադրել հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ «սկսեալ ի սկզբանէ աշխարհի մինչև ի ժամանակս մեր» (այսինքն՝ մինչև XVIII դարի վերջերը): Սակայն, Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց» երկասիրությունը

¹⁵⁸ Մ. Չամչեան, «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784 ըստ աւանդելոց այլևայլ մատենագրաց», հատ. Ա, Վենետիկ, 1784, հատ. Բ, Վենետիկ, 1785, հատ. Գ, Վենետիկ, 1786:

¹⁵⁹ Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Յառաջաբանութիւն, էջ 3:

նակ, ինչպես իրավացիորեն նշում է Մ. Դարբինյանը, արգասիքն է հարազատ ժողովրդի պատմական անցյալի նկատմամբ ունեցած այն մեծ հետաքրքրության, որը հետևանք էր հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարթոնքի՝ XVII և մասավանդ XVIII դարերում¹⁶⁰:

Այսպիսով, հայ ժողովրդի պատմության համակարգման և ամբողջական ուսումնասիրության հիմնաքարերը հայ պատմագրության մեջ դրել է Մ. Չամչյանը: Հենվելով նախորդ պատմաշրջանների հայ պատմագիտական մտքի լավագույն սովանդույթների վրա, ծանոթանալով ժամանակի եվրոպական պատմագիտության հետ և կրելով նրա ազդեցությունը՝ Չամչյանը կարողացավ համակողմանիորեն ուսումնասիրել հայոց պատմությունը և շարադրել նրա ամբողջական ընթացքը, որով նա մեծ և անուրանալի դեր խաղաց հայ պատմագիտության հետագա զարգացման գործում: Նշեցինք, որ Չամչյանի գործը նախընթաց չունեւ: Սակայն, սիննույն ժամանակ, նա ձեռքի տակ ուներ տպագիր և մեծ մասամբ անտիպ բազմաթիվ «Պատմութիւն Հայոց»-ներ, ժամանակագրություններ, պատմական հիշատակարաններ, այլաբնույթ պատմագրական հուշարձաններ: Մեծ թիվ էին կազմում նաև օտար լեզուներով գրված պատմագիտական երկասիրությունները, ուսումնասիրությունները, վավերագրերը, որոնցում արժեքավոր վկայություններ կային պահպանված հայերի ու Հայաստանի մասին: Ուրեմն, Չամչյանը ձեռքի տակ ուներ սոսկ բավարար քանակությամբ պատմական ատաղձներ, որոնք համապատասխան մշակման ու համադրման դեպքում միայն կարող էին կտավ դառնալ ապագա երկասիրության համար: Իսկ դա հնարավոր ու շոշափելի կարող էր դառնալ միմիայն անդուլ տքնության, ջանադրության, անափ աշխատասիրության, մեծ նվիրվածության ու հայրենասիրության շնորհիվ, հատկություններ, որոնք, ինչպես տե-

¹⁶⁰ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն» հատ. 4 (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), էջ 505:

սանք, բնորոշ էին Չամչյան-մտածողին ու քաղաքացուն: Սակայն այդ ամենը բավարար չէր նման մի գործի ձեռնարկման և նրա հաջող ելքի համար: Անհրաժեշտ էր նաև հին ու նոր լեզուների գերազանց իմացություն, սկզբնաղբյուրները միմյանց համադրելու, քննելու հմտություն, պատմական երևույթներն ու փաստերը վերլուծելու, մեկնաբանելու, եզրակացությունների հանգելու կարողություն: Դժվարությունները, որոնց հետ գործ է ունեցել Չամչյանը Հայոց ամբողջական պատմությունը շարադրելիս, բամաթիվ էին ու տարաբնույթ: Այդ մասին նա գրում է. «Այլ թե քանի տառապանս կրեցաք ի կատարումս ածել զայս գործ անվթար՝ քննութեամբ ստուգութեան պատմութեանց, անհնարին է մեզ ի գիրս բովանդակել»¹⁶¹:

Հատկանշական է, որ պատմաբանը ոչ միայն հարկ է համարել շեշտել դրանցից մի քանիսը՝ «բայց սակալիկ մի ևս յիշատակել աստ զպատճառսն, յորոց ծագէր մեզ այն տառապանք», այլև կետ առ կետ մատնանշել դժվարությունների հաղթահարման ուղիները, հիշատակել իր կատարած աշխատանքի կարևորագույն արդյունքներն ու հիմնական փուլերը: Եվ քանի որ հայոց բովանդակ մատենագրությունն էր այն հենքը, որի վրա պետք է խարսխվեր Չամչյանի ապագա երկասիրությունը, ապա պատմաբանը նախ և առաջ ուշադիր քննության առարկա է դարձնում այն, ընթերցում տասնյակ հարյուրավոր մատյաններ, թերթում օտար համապատասխան սկզբնաղբյուրներ: Այդ նախապատրաստական աշխատանքների ընթացքում նա ուշադրություն է դարձնում այնպիսի կարևոր հանգամանքների վրա, ինչիսիք էին պատմիչների երկերում հանդիպող հակասական տեղեկությունները և բնագրական աղճատումները, ժամանակագրության և սկզբնաղբյուրների մատնանշման բացակայությունը, բնագրերի մեջ ներմուծված պատահական կամ գիտակցված ընդմիջարկությունները, հայ պատմիչների՝ երկերում որոշ կարևորագույն

¹⁶¹ Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, հատ. Ա, էջ 4:

տեղեկությունների բացակայությունը և այլն: Հասկանալի է, որ այս ամենը հաղթահարել կարելի էր միայն սկզբնաղբյուրների քննական մշակման և պատմական վկայությունների վերլուծության ճանապարհով: Չամօյանը հենց այդպես էլ վարվել է, նրա հետազոտական աշխատանքի բնորոշ գծերն են դրանք, որոնց մասին նա շտապում է հավաստիացնել իր ընթերցողներին:

Որոնք են Չամօյանի կրած «տառապանքների» հիմնական հանրագումարները, կատարած հետազոտական աշխատանքի հիմնական փուլերը: Նախ, «առաջինն է անհամար սխալագրություն ի պատմագիրս մեր. որոյ վասն հարկ եղև մեզ բազում ձեռագիրս գտանել մի և նոյն պատմաբանի, և ընդ միմեանս բաղդատել զնոսին. ուր թէպէտև պէսպիսութիւնք այլևայլ օրինակաց շուարեցուցանեն զմիտս, բայց նպաստ ևս լինին սրբելոյ ըստ կարի զսխալանս իրերաց» : Ուրեմն, Չամօյանը չի բավարարվել այս կամ այն պատմագրի երկի ձեռքի տակ գտվող օրինակով, այլ ընթերցել է նաև նույն երկի այլ օրինակներ ևս և ձեռագրերի համեմատության հիման վրա սրբագրել դրա բնագրական աղճատումները և ապա միայն պատմագրի հաղորդած տվյալներն օգտագործել իր երկասիրության մեջ: Իրոք որ սա մեծ տառապանքն էր պատճառող աշխատանք էր, մանավանդ եթե նկատի ունենանք այն, որ Չամօյանի ժամանակներում ոչ միայն գոյություն չունեին մեր մատենագիրների աշխատությունների քննա-համեմատական ու բաղդատական հրատարակություններ, այլ նաև այն, որ այդ ժամանակ տպագրված էին միայն հատուկենտ մատենագիրների երկեր (Ազաթանգեղոս, Ջենոբ Գլակ, Մովսես Խորենացի, Առաքել Դավրիժեցի և այլք): Այս առումով Չամօյանի երկասիրությունը արգասիք է բնագրագիտական երկարատև ու ծանր աշխատանքի:

Այնուհետև՝ «Երկրորդն է անհամաձայնութիւն պատմագրաց մերոց ընդ միմեանս. զի զոր մին այսպէս դնէ, այլ ոք այլապէս կարգէ.

որոյ վասն զօրէն յուզակաց անխոնջ աշխատեալ ի քննութիւնս իրաց՝ ընտրանօք առաք, զոր համեմատութեամբ գործոց՝ և վկայութեամբ այլոց մատենագրաց՝ ուղիղ դատեցաք. իսկ զանստոյգսն իբր զխոտելիս ի բաց եղաք»¹⁶²: Այսինքն՝ պատմական այս կամ այն եղելությունը, դէպքը, երևոյթը ստույգ շարադրելու և «զայնստոյգ»-ն մերժելու համար Չամչանը մատենագրական հուշարձաններում առկա հակասությունները պատմա-քննական վերլուծության ենթարկելու ճանապարհով փորձել է հասնել իրական փաստերի բացահայտմանը: Մակայն պատմաբանը չի բավարարվել միայն դրանով, պատմական այն վկայությունները, որոնք նա համարել է անվստահելի և զգուշացել է դրանք մուծել իր երկասիրության մեջ, մանրամասն քննության են ենթարկվել աշխատանքի հավելվածներում, որտեղ «մասնաւոր քննութիւնս ինչ կարգեցաք ի վերայ նոցա»: Այս մեթոդը հնարավորություն էր ընձեռում ընթերցողներին ծանոթանալու գոյություն ունեցող պատմական բոլոր վկայություններին և իր անձնական կարծիքը կազմել դրանց վերաբերյալ:

Դժվարությունների երրորդ խումբը, որին հանդիպել է հեղինակն իր գործը ձեռնարկելիս, նույնպես բնագրական է. «Երրորդն է յաւելուած պէսպէս օտարոտի բանից. զորս առ սակաւ սակաւ մուծեալ են յետոյ ոմանք ի պատմագիրս մեր որով ամեննին աղաւաղեալ են զկարգ և զստուգութիւն իրացն եղելոց»¹⁶³: Այստեղ խոսքը բնագրերի մեջ ներմուծված, նրանց անհարազատ ընդմիջարկությունների, բնագրերի հետագա խմբագրումների ու հավելումների մասին է: Անհրաժեշտ էր գտել դրանք, մաքրել օտար միջամտություններից, վերականգնել բնագրերի հարազատ և նախնական օրինակները: Միայն նման աշխատանքից հետո կարելի կլինէր հենվել բնագրերի հաղորդած վկայությունների վրա և դրանք օգտագործել

¹⁶² Նույն տեղում:

¹⁶³ Նույն տեղում:

որպես պատմական սկզբնաղբյուր, «վասն որոյ յանհամար գրուածս տաժանական յուզմամբ դեգերեցաք. և զիրաքանչիր բանս ի կշիռ դնելով, և զամենայն իբրև ընդ մաղ անցուցանելով, ըստ տանելոյ նիւթոյն՝ զհշմարիտն ի ստոյ որոշեցաք, և զբանսն յարմարեալ ի կարգի եղաք»¹⁶⁴:

Իր երկասիրության համար ատաղձներ հավաքելիս Չամչանն ուշադրություն դարձրեց այն կարևոր հանգամանքի վրա, որ հայրենի սկզբնաղբյուրներում բացակայում են պատմական մեծ թվով համապատասխան վկայություններ, որոնք տեղ են գտել օտար մատենագրության մեջ: Պատմական այս կամ այն իրադարձությունը շարադրելու ժամանակ առաջնորդվել միմիայն հայկական աղբյուրներով և զանց առնել օտար մատենագրության տվյալները, կնշանակեր թերի ուսումնասիրել հայ ժողովրդի պատմության հարցերը, որը կուղեկցվեր անխուսափելի վրիպումներով, բացթողնումներով և մեծ թվով հարցականներով: Ահա թե ինչու Չամչանը ստիպված էր թերթելու նաև հսկայական քանակությամբ օտարալեզու պատմական գրականություն, նախ և առաջ սկզբնաղբյուրներ, հիշատակարաններ, վավերագրեր և այլ օժանդակ նյութեր: Նա այստեղից քաղում է հայ մատենագրությունից բացակայող տեղեկությունները և դրանցով լրացնում հայոց պատմության սպիտակ էջերը: Եվ ուրեմն՝ «Չորրորդն է պակասութիւն բազում իրաց ի պատմութիւնս զի թէպէտև պատմագիրք մեր՝ զորս ունիմք ըստ կարի նպաստ մատուցանեն մեզ. բայց և ի բազումս պակասին, կամ վեր ի վերոյ խօսելով, և կամ բնաւ իսկ զանց առնելով. որոյ վասն ձեռն արկաք և ի պատմագիրս այլոց ազգաց. և ի նոցունց գատոյզն առնուլ ջանացաք»¹⁶⁵: Սակայն, պետք է նշել, որ պատմաբանը նման դեպքերում խիստ զգուշությամբ է մոտենում այլալեզու սկզբնաղբյուրների հաղորդած վկայու-

¹⁶⁴ Նույն տեղում:

¹⁶⁵ Նույնը, էջ 5:

յուններին, որովհետև հաճախ «ի գիրս նոցա վասն մեր՝ անստոյգ է և տարբեր», ուստի հեղինակը ստիպված է եղել «մխիլ աչալուրջ ընթերցանութեամբ յինչևիցէ գրուածս ազգին մերոյ, ևս և ի բազմազան ողջունագիրս նախնեաց, և ի յիշատակարանս մատենից, և յայլ բազմադիմի բանս»¹⁶⁶: Նկատելի է, որ բոլոր պարագաներում պատմաբանը նախապատվությունը տալիս է հայրենի սկզբնաղբյուրներին և միայն ծայր անհրաժեշտությունն է նրան ստիպում դիմելու այլալեզու աղբյուրների օգնությանը:

Մ. Չամչյանն առաջինն էր հայ պատմագրության մեջ, որ հարագատ ժողովրդի պատմությունը շարադրելիս այն քննեց հարևան ժողովուրդների պատմության հարցերի հետ աղերսված: Հայոց պատմությունը բազմաթիվ թելերով կապված էր պարսիկների, հույների, հռոմեացիների, արաբների և այլոց պատմության հետ: Անհրաժեշտ էր վեր հանել այդ կապը, ցույց տալ այդ ժողովուրդների խաղացած դերը մեր պատմության մեջ, համադրել հայ ժողովրդի պատմությունը այլ ժողովուրդների պատմության հետ: Սակայն այդ համադրության ընթացքում Չամչյանի ուշադրությունը գրավեց այն ներհակությունը, որ գոյություն ուներ մեր և մյուս ժողովուրդների պատմության միջև: Հետաքրքիր է Չամչյանի այն դիտողությունը, թե «գրեթե՛ իւրաքանչիւր ազգաց պատմութիւնք յորժամ առանձինն նկատին, ճշմարիտ թուին, բայց յորժամ ընդ այլոց ազգաց պատմութիւնս բաղդատին՝ ընդ որոց պատահեալ իցէ ինչ ի նոյն գործ, իբր ի բազումս սուտ երևին: Եւ գործ մեծ է զստոյգն ի նոսա գտանել՝ առանց եղծանելոյ զայլոցն»¹⁶⁷: Ուրեմն այստեղից էլ բխում է դժվարությունների մյուս խումբը՝ «Հինգերորդն է ներհակութիւն պատմութեանց ազգին մերոյ ընդ պատմութիւնս այլոց ազգաց, մանաւանդ պարսից և յունաց և լատինացոց. մինչև ոչևս կարել որոշել՝ թէ որ ի նոցանէ իցէ

¹⁶⁶ Նույն տեղում:

¹⁶⁷ Նույնը, էջ 5–6:

ստոյգ, նոցա՛յն, թէ մեր. որոյ վասն չունէաք ինչ առնել, բայց եթէ, կշռելով զերկոսին՝ հետևիլ այնմ, որ ստոյգն էր, և ի ժամանակակից մարդոյ ասանդեալ և կամ յարժանահաւատ վկայութիւնս հաստատեալ»¹⁶⁸. //

Առաջնորդվելով պատմահայր Մովսէս Խորենացու այն ցուցումով, թէ «ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան»՝ Մ. Չամչյանը հսկայական աշխատանք է կատարել հայ ժողովրդի պատմության ստոյգ ժամանակագրությունը սահմանելու գործում: Հասկանալի է, թէ դա ինչքան տաժանելի էր և աշխատատար: Սակայն պատմաբանը հստակորէն է արտահայտում իր հավատամքը ժամանակագրության հանդէպ՝ թէ ժամանակագրությունը պատմության աչքն է, առանց որի «անզէն և կոյր է պատմութիւն»¹⁶⁹: Դա է պատճառը, որ պատմաբանն այնքան մեծ ուշադրություն է դարձնում ժամանակագրության վրա: Ստոյգ ժամանակագրություն սահմանելը նա համարում է վեցերորդ և ամենամեծ դժվարությունը, որն ինքը հանդիպել է «Պատմութիւն Հայոց»-ի շարադրման ժամանակ: Այդ մասին Չամչյանը գրում է. «Վեցերորդն՝ և մեծն քան քամ զամենեսեան, է անստուգութիւն ժամանակի, թէ արդէօք այս ինչ գործ՝ որ պատմի, յորում ժամանակի գործեցաւ, զի ոմանց բնաւ ժամանակ ոչ յիշատակի. իսկ այլոց սակաւոց թէպէտն յիշատակի, բայց բազմօք անստոյգ և ներհակ»: Ուստի հեղինակը ստիպված է եղել «Վասնորոյ յայսմ մասին ծանունս տարժանեցաք յոյժ յոյժ՝ քան յայլս. որպէս զի մարթասցուք գորոշ և զստոյգ ժամանակ իրացն եղելոց գտանել»¹⁷⁰: Եվ որպէսզի կարողանա գտնել «զստոյգ ժամանակ իրացն եղելոց», Չամչյանը ստիպված է եղել մանրամասն ուսումնասիրել հին հայկական, սելևկյան, եգիպտական, պարսկա-

¹⁶⁸ Նույնը, էջ 5:

¹⁶⁹ Նույնը, էջ 6:

¹⁷⁰ Նույն տեղում:

կան, հունական, լատինական տոմարները, կատարել բազմապիսի հաշվումներ, տարբեր ժողովուրդների տոմարները համեմատել հայկականի հետ, դրանք համադրել, վերածել նախ՝ աշխարհաստեղծման, իսկ այնուհետև՝ փրկչական թվականների: Չամյանի տոմարագիտական խորը գիտելիքներն ու հմտությունը կարողացել են հաղթահարել այս բարդ ոլորտի դժվարությունների մեծ մասը: Նա հայոց նախնական պատմության ժամանակագրության հիմքում դնում է գլխավորապես զանազան աշխարհակալների գահակալության տարիները, ինչպիսիք են Կյուրոս Մեծը, Ալեքսանդր Մակեդոնացին և այլք, ու նրանց օրոք տեղի ունեցած իրադարձությունները: Իսկ արդեն մեր թվարկությունում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակագրության համար հիմք է ընդունել «ժամանակը կայսերաց, և ընդհանուր ժողովոց, և երևելի գործոց. զի այնք անվրէպ քննութեամբ ընկալեալ են յամենեցունց. որովհետև ի բազում ժամանակակից և յականատես անձանց՝ ամօք և ամսօք և աուրքք իսկ գրեալ են»: Ահա, աչքի առաջ ունենալով համաշխարհային պատմության ականավոր որևէ գործչի արդեն հայտնի տարեթվերը, պատմաբանը դրանց օգնությամբ որոշում է նաև համապատասխան պատմաշրջանի այս կամ այն հայ գործչի և հայոց պատմության տվյալ ժամանակշրջանի իրադարձությունների թվականները: Իր կիրառած ժամանակագրական սկզբունքի վերաբերյալ Չամյանը հետևյալ պատկերավոր բացատրությունն է տվել. «Ջսոցա (այսինքն՝ պատմական նշանավոր գործիչների – Ա.Ու.) ժամանակս իբր չափ և կանոն ունելով մեր առաջի, ընդ սոսին համեմատեցաք զընթացս պատմութեան մերոյ իբրև ընդ փորձաքարս. և սոքիմք չափեցաք զժամանակս անցից անցելոց յազգի մերում, մանաւանդ ի վաղնջուց իրս»¹⁷¹:

Մ. Չամյանի պատմագիտական հայացքների բնութագրման համար առանցքային նշանակություն ունի պատմական գիտության

¹⁷¹ Նույն տեղում:

խնդիրների մասին արտահայտած նրա տեսակետների քննությունը: «Պատմություն Հայոց»-ի Ա հատորի առաջաբանի վերջին՝ «Յորդոր քաղելոյ պտուղ ի պատմութեանց» գլխում նա երկարաշունչ դիտողություններ է կատարում պատմության ուսումնասիրության օգտակարության մասին: Այստեղ նա առաջադրում է պատմական գիտության ըմբռնման նոր սկզբունքներ: Չամչյանն իր պատմափիլիսոփայությունը սահմանում է հստակորեն: Նա պատմության ուսումնասիրության մեջ տեսնում է գործնական նպատակ. «ընթերցասէր լինել պատմութեանց, ոչ զի ընթերցցի, այլ շահեսցի օգուտ յընթերցմանէ անտի», որովհետև, - դիմում է նա ընթերցողին, - «...պատմութիւն անցելոց՝ լիցին քեզ յուղղութիւն վարուց»¹⁷²:

Պատմության նպատակը ոչ միայն պատմական երևույթներն ու «գեղեալսն իմացուցանել»-ն է, այլև «առիթ մատակարարել խօսելոյ զպիտանիս փոխանակ բամբասայոյզ բանից»¹⁷³: Չամչյանը յուրօրինակ պատկերացում ունի պատմության ուսումնասիրման մեթոդների մասին. եթե պատմական երկը կարդացվում է սոսկ հետաքրքրությունը բավարարելու համար, անընդունելի է՝ «ընդունայն» է: Եթե հիշողության պաշարը ճոխացնելու համար է, այդ նույնպես մերժելի է, որովհետև դա միայն ծանրաբեռնում է հիշողությունը և մարդուն հոգնեցնում, փոխանակ զվարթացնելու, իսկ եթե պատմական երկը ընթերցվում է մարդու գործունեությանը և վարքին ուղղություն տալու նպատակով, «արդյունարար է և մատակարար խաղաղութեան»: Պատմությունը, Չամչյանի կարծիքով, ներկայացնում է պատմական անցքերի փոփոխությունը, պատմական դեպքերը, դեմքերն ու երևույթները կենդանի և որոշակի գծերով: Ինչպես գունավոր ապակու՝ միջով իրերը տեսնում ենք՝ այդ ապակու գույնով, այնպես էլ պատմությունը ներկայանում է մեզ իր բազմազան հանգամանքնե-

¹⁷² Մ. Չամչյան, Պատմություն, հատ Ա, էջ 40-41:

¹⁷³ Մ. Չամչյան, Խրախճեան պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811, էջ Գ:

րով. եթե չար է՝ չար, եթե բարի է՝ բարի: Պատմության ուսումնասիրությունը օգնում է մարդուն դժվարին պահերից «ելս հնարից գտանելով. և ի զարտուղի նոցին ի յանքոյք ուղոյ՝ յանվրթար շախղ առաջնորդելով»¹⁷⁴: Չամչյանը գտնում է, որ պատմության օգնությամբ է, որ պատկերացում ենք կազմում պատմական երևույթների մեկը մյուսին հաջորդելու պրոցեսի մասին. «Ով ոք ոչ զարմացի ի նշմարել յայլևայլ աշխարհս, յորս երբեմն թագաւորութիւնք զօրացեալ էին և այժմ իշխանութիւն ջայլեմանց և գազանաց տիրէ. և ուր դատարկութիւն էր այժմ թագաւորութեամբ պանծայ» կամ «Ով ոք ոչ սքանչացի հայեցեալ գոնէ ի վիճակ հայկազանցս, զհարդ ի սկզբանէ և այսր անչափ այլափոխութիւնս յեղաշրջեալ՝ յինչ ելս արդ տեսաւ»: Չամչյան-պատմաբանի սուրբեկտիվ իդեալիստական, կղերական մտայնությունը հստակորեն շեշտվում է պատմական պրոցեսի զարգացման, պատմական երևույթների փոփոխման մասին նրա հայտնած տեսակետների ժամանակ: Մխիթարյան միաբանը կրոնական ջերմեանդությամբ գրում է, թե պատմության ելևէջները՝ թագավորական հարստությունների փոփոխվելը, օտար տիրապետություններն ու պատերազմները «ամենակալ ձեռին տեսչութամբ կատարի», և որը «կարգէ զամենայն անսահման իւրով իմաստութեամբ. և դարմանէ և խնամէ զամենայն քաղցրութեամբ և վարէ զփոփոխականս ամենայն յանփոփոխ վախճան»¹⁷⁵: Այսպիսով, Չամչյանը պատմական իրադարձությունները դիտում է որպես գերաշխարհիկ էակի կամքի արտահայտություն: Արեղայամիտ պատմահայեցողության հենց այս կողմերի վրա է, որ իր քննադատական շեշտը դրեց Մ. Նալբանդյանը: Նրա կարծիքով Չամչյանի «Հայոց պատմությունը» չէր կարող բավարարել խոհուն ուսումնասիրողին այն պատճառով, որ այնտեղ կուտակված հսկայական նյութը գիտա-

¹⁷⁴ Մ. Չամչյան, Պատմություն, էջ 43–44:

¹⁷⁵ Նույնը, էջ 43:

կանձրեն չէր մշակված, որովհետև այնտեղ «հազկերտներ, լանկթամուրներ, թաթարներ, հույներ և այլ օտար ազգեր ավերում են Հայաստանը այն պատճառով, որ աստված բարկացել էր Հայաստանի վրա, առանց մեջբերելու քաղաքական պատճառները, առանց կրիտիկանի աչքով գնահատելու որևէ իրողություն ազգային կյանքի մեջ»¹⁷⁶: Բացի շեշտված կղերական մտայնությունից, Չամչյանի «Պատմություն Հայոց»-ը ունի նաև բազմաթիվ այլ մեթոդական կարգի թերություններ ևս, որոնցից մի քանիսի մասին խոսք կլինի ստորև: Իրանցից շատերն, անշուշտ, կարելի է բացատրել պատմագիտության զարգացման այն մակարդակով, որ գոյություն ուներ XVIII դ. 70–80-ական թվականներին, մի քանիսն էլ նրա որդևգրած և նրա համար ուղենիշ հադիսացող պատմահայեցողության արմատներով: Չամչյանը լավ էր հասկանում, որ այնպիսի եզակի և հսկայածավալ գործ, ինչպիսին է իր եռհատոր «Պատմությունը» չի կարող զերծ չլինել թերություններից, ուստի դիմելով իր ապագա ընթերցողներին, նա ասում է. «Եթե՝ ուրեք ուրեք վրիպեալ իցե՝ մեզ ի կարգել գլխատմութիւնս, ինդրեմք ներողամիտ լինել, հայեցեալ յաւետ ոչ ի վրիպանսն, այլ յաշխատանսն»¹⁷⁷:

Չամչյանի պատմահայեցողության ընդհանուր հենքի վրա խարսխվում է նաև հայ ժողովրդի պատմության պարբերացման նրա հայեցակարգը, որն սկզբունքորեն քիչ է տարբերվում ավանդական պատմագրության առաջադրած հայեցակարգից: Նախ տեսնենք, թե Չամչյանն ինչպես է կատարում պատմական պրոցեսի ստորաբաժանումը. արդյո՞ք նրա մոտ պատմական պրոցեսը ներկայացված է որպես մի ամբողջություն, թե որպես միմյանց հետ կապ չունեցող զարգացման տարբեր շրջաններ: Պատմագիրը յուրովի է փորձում ստորաբաժանել պատմական անցյալը: Նրա «Պատմութ-

¹⁷⁶ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. Բ, էջ 222:

¹⁷⁷ Չամչյան, Պատմություն, հատ. Ա, էջ 33:

յան» յուրաքանչյուր հատորը ընդգրկում է պատմական երկու ժամանակաշրջան: Այսպիսով, հայ ժողովրդի ամբողջ պատմությունը, սկսած նախապատմական շրջանից մինչև իր օրերը, Չամչյանը բաժանում է պատմական վեց հիմնական շրջանների՝ հիմք ընդունելով այս կամ այն դիմաստիայի տիրապետությունը: Հայոց պատմության պարբերացման համար պատմագիրն առաջարկում է հետևյալ սկզբունքը. «Առաջինն է այն, յորում տիրեալ պայազատեցին նահապետք Հայկազինք՝ կէս մի ազգային տերութեամբ, և կէս մի արքայական շքով. և ապա կուսակալք: Երկրորդն է այն, յորում թագաւորեցին Արշակունիք ի սերնդոց Արշակայ Պարթևի: Երրորդն է այն, յորում իշխեցին մարգականք պարսից, և ոստիկանք իշխանութեան հսագարացոց, ևս և նախարարք ի հայոց: Չորրորդն է այն, յորում թագավորեալ տիրեցին Բագրատունիք: Հինգերորդն է այն, յորում զորացան Ռուբինեանք ի Կիլիկիա, մինչև ի բնաջինջ բարձումս տէրութեան հայոց: Վեցերորդն է այն, յորում կային և կան ազգ մեր յանիշխանութեան»¹⁷⁸:

Դժվար չէ նկատել, որ նման պարբերացման ելակետը հայկական թագավորական դիմաստիաների ու օտար նվաճողների քաղաքական տիրապետությունների ժամանակաշրջաններն են: Հետևաբար, ըստ Չամչյանի, պատմության շարժիչ ուժերը անհատներն են, թագավորական հարստությունները: Նրա կարծիքով Հայաստանի հզորացումն այս կամ այն պատմաշրջանում կատարվել է միմիայն «ընդ ճարտար ղեկավարութեամբ **քաջահմուտ** առաջնորդաց»¹⁷⁹:

¹⁷⁸ Մ. Չամչեան, Պատմութիւն, հատ. Ա, էջ 50: Հետաքրքիր է, որ «Պատմութիւն Հայոց»-ի համառոտված տարբերակում («Խորախնամ պատմութեան Հայոց») Չամչյանը Հայոց պատմությունը ստորաբաժանում է ոչ թե վեց, այլ յոթ հատվածների: Հայկազյան պատմաշրջանից հետո նա ավելացրել է. «Երկրորդն՝ իշխանութիւն կուսակալաց՝ որք ի բառնիլ հայկազանց իշխանութիւն, և հանկանիլ հայոց ընդ իշխանութեամբ մակեդոնացոց և սելևկիացոց» (Տե՛ս Խորախնամ, էջ 3): Այնուհետև մյուս պատմաշրջանները նա տալիս է նույնությամբ:

¹⁷⁹ Մ. Չամչեան, Պատմութիւն, հատ. Ա, էջ 50 (ընգծումը մերն է – Ա.Ու.):

Ընդհանրապես ճիշտ է Չամչյանը երբ ուշադրություն է դարձնում քաղաքական անցուդարձերի մեջ ղեկավար դեր կատարող անհատների գործունեության վրա: Հնարավոր չէ ոչ անտեսել և ոչ էլ թերագնահատել պատմական պրոցեսում անհատների դերը: Սակայն Չամչյանը գերազնահատում է այդ իրողությունը և ողջ հայոց պատմությունն ու նրա պարբերացումը հանգեցնում է դրան: Բնական է և հասկանալի, որ 18-րդ դարի 70–80 թթ. ստեղծագործող Մխիթարյան միաբանության անդամը պատմության պարբերացման այլ սկզբունք չէր կարող առաջադրել:

Չամչյանի պարբերացման սխեման քննադատության է ենթարկվել Ստ. Նազարյանցի կողմից, որը մերժելով պատմության պարբերացման Չամչյանի սկզբունքը, առաջարկում է հետևյալ եղանակը. «Ավելի հարմար է թվում համառոտել այդ մասնավորությունքը երեք գլխավոր պատմական հատվածներով. և որոշել հայոց պատմական կյանքի մեջ նույնպես երեք ժամանակամիջոց. այսինքն Հայկազունեաց իշխանություն - սկզբից մինչև մ.թ.ա 412 թ., երկրորդ ժամանակամիջոց՝ 412–1522 թթ. և երրորդ ժամանակամիջոց 1522 թ.-ից մինչև մեր օրերը»¹⁸⁰: Դժվար չէ նկատել, որ վեց ժամանակահատվածները կրճատելով երեքի, դարձյալ պարբերացման սկզբունքը մնում է Չամչյանական, որովհետև այն հենվում է քաղաքական անցուդարձերի հետնախորքի վրա:

Անշուշտ Չամչյանի պատմահայեցողությունը իդեալիստական է, առաջարկած պարբերացման սխեման էլ՝ մերժելի: Սակայն, չպետք է մոռանալ, որ նա առաջինն էր հայ պատմագիտության մեջ անդրադառնում այդ հարցերին, չպետք է մոռանալ, որ նա, իր նախորդների պես, հայոց պատմությունը չդիտեց որպես քարացած մի ամբողջություն, այլ հստակորեն պատկերացնելով թե ընդհանուրը և թե մաս-

¹⁸⁰ Ստ. Նազարյան, Պատմություն Հայոց ազգի, տե՛ս Ստ. Նազարյան, Երկեր, հատ. 1, Թիֆլիս, 1913, էջ 165, 167:

նավորը, ինչպես նաև պատմական մեկուսի պրոցեսները, փորձեց տալ յուրաքանչյուր պատմաշրջանի համար առանձնահատուկն ու յուրօրինակը: Հետաքրքիր է նշել, որ Չամչյանը վեց պատմաշրջանների բաժանելով ամբողջ հայոց պատմությունը, փորձում է դրանք ևս առանձին-առանձին տրոհել ենթաշրջանների: Այսպես, «Յաղագս իշխանութեան Արշակունեաց» (գիրք երկրորդ) պատմաշրջանը նա բաժանում է երեք ենթաշրջանների. «Մի՝ ի Վաղարշակայ մինչև ցԱբգար,... երկրորդ՝ յԱբգարէ մինչև ցՏրդատ... երրորդ՝ ի Տրդատայ մինչև ցբարձումն թագաւորութեան Արշակունեաց»¹⁸¹: Այսպես և մյուս պատմաշրջանները: Այս մեթոդը հնարավորություն է տալիս մասնավորից գնալ դեպի ընդհանուրը և պատմությունը դիտել որպես պատմական առանձին պրոցեսների ամբողջություն: Մակայն, Չամչյանը չկարողացավ ցույց տալ պատմական պրոցեսի անընդհատ զարգացումը, երևույթների փոխադարձ կապը, պատմաշրջանները մեկը մյուսին հաջորդելու ներքին օրինաչափ գործոնները: Չամչյանի առաջադրած պարբերացման սխեման երկար ժամանակ տիրապետող էր հանդիսանում հայ պատմագիտության մեջ: Գարագաշյանն ու Պալասանյանը, Պերպերյանն ու Խալաթյանցը, հետևելով նրան, առաջնորդվել են վերոհիշյալ սխեմայով: Միայն XX դարի սկզբներին պրոֆ. Ն.Ադոնցը փորձեց ավելի գիտականորեն կատարել հայ ժողովրդի պատմության պարբերացումը՝ ելնելով ժամանակի պատմական գիտության նվաճումներից:

Չամչյանի պատմագիտական հայացքներն ավելի հստակորեն են արտացոլվում, երբ նա քննարկում է հայ ժողովրդի ծագման ու կազմավորման հարցերը: Հայ ժողովրդի ծագումը Չամչյանը քննարկել է հայոց լեզվի ծագման հարցի հետ աղերսված: Այս խնդիրը հետազոտելիս Չամչյանի համար ամենահիմնական աղբյուրներն են ծառայել Ս. Գիրքը և Խորենացու «Պատմությունը»: XVІІІ դ. վերջե-

¹⁸¹ Մ. Չամչեան, Պատմութիւն, հատ. Ա, էջ 201:

րում ապրող Չամչյանն անսահմանորեն ու կուրորեն է հավատում V դարում ապրող Խորենացու ամեն մի տառին և, կրկնելով նրան, ավելի է քաջ գնում ու հայ ժողովրդի ծագման ակունքները հասցնում է մինչև աշխարհաշինությունն ու Ադամը: Վկայակոչելով Աստվածաշունչը՝ Չամչյանը ճգնում է ապացուցել, որ մարդկության նախալեզուն՝ Ադամի լեզուն եղել է հայերենը և, որ Ադամի դրախտը գտնվում է Հայաստանում, հետևաբար և այստեղ են կատարվել Ծննդոց գրքում նկարագրվող անցքերը: Այստեղից հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ Չամչյանը Հայոց Պատմությունն սկսում է ոչ թե Հայկից, ինչպես Խորենացին և մյուս պատմիչները, այլ Ադամից, որը, նրա կարծիքով, հայության իսկական նախահայրն է: Քանի որ Չամչյանը Նոյի և նրա որդիների լեզուն համարում էր «բնիկ լեզու Ադամեան», այսինքն հայերենը, հետևաբար նա առանց որևէ ճիգի հայտարարում է, որ աշխարհի մյուս բոլոր լեզուները հայերենից են առաջացել, իսկ Հայաստանը հանդիսացել է բոլոր ազգերի քաղաքակրթության մայրը: Այսպիսով, Չամչյանը մի շարք բռնագրոսիկ, շինծու ու մտացածին փաստարկներ բերելով և դրանք համադրելով, ճգնում է «ապացուցել», որ իբր մարդկությունը երկու անգամ էլ, այսինքն թե Ադամի և թե Նոյի սերնդից, առաջացել է Հայաստանում, որով և Հայաստանը եղել է մարդկության օրրանը, իսկ հայերենը՝ մարդկության նախամայր լեզուն: Հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագման չամչյանական տեսակետների մեջ կարող են հետաքրքրել հարցի հետևյալ կողմերը. . .

ա) նա հայ ժողովրդին համարում է բնիկ ժողովուրդ: Չամչյանի կարծիքով աշտարակաշինությունից և լեզուների խառնակությունից հետո Հայաստան վերադարձած Հայկն իր հետևորդներով միացավ այդտեղ մնացածների հետ և նրանց հետ խոսում էր ոչ թե իր «խառնակեալ բարբառովն», այլ «նոցա (այսինքն Հայաստանի բնակիչների) նարագատ լեզուան վարեր»: Իսկ Հայաստանում բնակվողները

«իբր հարիւրպատիկ կամ մանաւանդ հազարպատիկ և աւելի ևս բազմացեալ էին», ուստի, եզրակացնում է պատմագիրը «չէ մարթասել, թե այլ եղև լեզու հայոց, և այլ Հայաստանին, զի բնակիչքն Հայաստանի և ազգ հայոց՝ նոյն համարին, ոմանք սերեալք ի Հայկայ, և ոմանք յայլոց ծննդոց նոյի՝ բնակեալք աշխարհն Արարատայ, և անկեալք ընդ իշխանութեամբ Հայկայ»¹⁸²:

բ) Հետևելով Էտրենացուն՝ Չամչյանը ևս փորձում է Հայաստան անվանումը բացատրել նախահայր Հայկի անվամբ. «Արդ ի Հայկայ և յորդոց նորա սերեալ ազգք՝ անուանեցան Հայք... Սոյնպէս և աշխարհն ուր սփռեցան և բազմացան նոքա, անուանեցաւ յանուն Հայկայ՝ Հայք կամ Հայաստան»¹⁸³:

գ) Փորձելով բացատրել, թե ինչու օտարները հայերին անվանում են արմեն, իսկ նրանց երկիրը՝ Արմենիա, Չամչյանը մերժում է հունա-հռոմեական պատմագիրների կողմից հրամցվող հիմնազուրկ այն տեսակետը, թե մեր երկիրն Արմենիա, իսկ ժողովուրդն էլ արմեն են կոչել Յասոնի ուղեկից՝ թեսալացի արգոնավորդ Արմենոսի անվամբ: Այս կապակցությամբ նա հետևյալ պատկերավոր համեմատությունն է կատարում. «Այլ այս համարումն անչափ հեռի է ի ճշմարտութենէ, որչափ հեռի է Թեսալիա՝ յԱրամեան աշխարհէ և առաւել ևս»¹⁸⁴: Հետաքրքիր է, որ Չամչյանը ճիշտ է կռահել հունա-հռոմեական պատմագիրների ստեղծած այս տեսության հիմնական՝ քաղաքական դրոշապատճառը և քննադատել է այն: Նա իրավացիորեն գտնում է, որ այդ տեսակետները ամբողջովին հիմնվում են շինծու փաստերի վրա, «որ թէպէտ և առասպել էր, բայց բազում ժամանակօք ի գիրս անցեալ՝ ստոյգ համարյալ եղև. Մանաւանդ զի և առակաբանութեամբ էր զարդարեալ»¹⁸⁵: Պատմագիրը մատնացույց

¹⁸² Նույնը, էջ 157:

¹⁸³ Մ. Չամչեան, Պատմութիւն, հատ. Ա, էջ 66:

¹⁸⁴ Նույնը, էջ 172:

¹⁸⁵ Նույնը, էջ 172-173:

է անում նույնանման այլ տեսություններ ևս, որոնց մեջ հույն մատենագիրները փոշծել են մարերի, պարսիկների, վրացիների, ազվանների «ծագումն ու զանոանակոչութիւնը» նույնպես հիմնավորել արգոնավորդների առասպելով: Ի վերջո Չամչանը, համերաշխվելով Ներսես Շնորհալու և Մարտիրոս Ղրիմեցու հետ՝ հայերի արմեն և Հայաստանի Արմենիա անվանումը ստուգաբանում է Հայկի Արմենակ որդու անունով. «Մարթ է ասել՝ թէ գուցէ զառաջինն և յԱրմենակայ իսկ ազգ մեր ընկալեալ իցէ զայն անուն»¹⁸⁶:

Իհարկե, Չամչանի դատողությունները հայ ժողովրդի ծագման հարցի ուսումնասիրման համար այսօր առանձին գիտական արժեք ունենալ չեն կարող: Հենվելով Աստվածաշնչի վրա և առաջադրելով իր տեսակետները՝ նա փորձել է կրոնական հայրենասիրության դիրքերից քննել հայրենի երկրի անցյալի հարցերը: Ուստի պատահական չէ որ քննադատելով հայերի ծագման չամչանական ազգասիրական լեզնողը, Մ. Նալբանդյանը մերժում է նրա բոլոր «ապացույցները», հայոց լեզվի առաջնության, աստծո և Աղամի միջև տեղի ունեցած հայերեն գրուցների մասին և դրանք համարում մտացածին հեքիաթներ:

Այստեղ անհեթեթություն կլիներ վերլուծել և մերժել հայերենը նախամայր լեզու համարող չամչանական տեսակետները: Սակայն, պետք է կանգ առնել մեկ այլ հանգամանքի վրա, որն ուշադրության չի արժանացել: Իհարկե, Չամչանի վառ երևակայությունը ստեղծել է պատկերներ ու հասկացություններ, որոնց նպատակն է եղել հայ ժողովրդին ներկայացնել իբրև առաջինը, անդրանիկը մարդկային բոլոր ցեղերի մեջ, իբրև երկնքի ընտրյալ մի ժողովուրդ: Սակայն, միթե Չամչանը այդ բոլորը կատարում է ելնելով միայն ազգային սնապարծությունից ու ինքնագոհությունից և «այլ այդպիսի թթվացնող և քարացնող» հատկություններից, - ինչպես գրում է Լեն: Ան-

¹⁸⁶ Նույնը, էջ 172:

շուշտ իրավացի է մեծավաստակ պատմաբանը, երբ գրում է, թե «Ազգային պատմությունն ազգային ինքնաճանաչողության ամենազվախափոր աղբյուրն է» և, որ «Չամչյանն իր երեք խոշոր հատորներով հայի ինքնաճանաչությունը բարձրացրեց, մեծացրեց»¹⁸⁷: Մեր կարծիքով Չամչյանի միակ նպատակը այդ չէր: Նրանից դեռևս շատ առաջ եվրոպական առաջին հայագետներից մեկը՝ Իոհան Սկրոդերն իր «Արամեան լեզուի գանձ»¹⁸⁸ բառարանում, անդրադառնալով հայոց լեզվի ծագման հարցին, հավանական է համարում Նոյի, նրա որդիների և հետևորդների հայերեն խոսելու փաստը: Հետագայում այդ տեսակետը անուղղակիորեն պաշտպանություն է գտնում նաև Մխիթար Սեբաստացու «Բառագիրք Հայկազևան լեզուի» աշխատության մեջ¹⁸⁹: Թեև Սկրոդերի ու Մխիթար Սեբաստացու մոտ հայերենի նախամայր լեզու լինելու միտքը վերապահությամբ է արտահայտվել, սակայն դա արդեն հիմք է ծառայում Չամչյանի համաշ, որ ավելի որոշակի և արդեն «հիմնավորումներով» զարգացնի այդ կարծիքը: Ահա ձևավորված տեսության արժեք ստացած այս դրույթն է, որ նա հրամցնում է թե՛ իր ազգակիցներին՝ ի բավարարումն հարազատ ժողովրդի պատմական անցյալի նկատմամբ նրանց ունեցած այն հետաքրքրության, որը հետևանք էր 18-րդ դ. հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարթոնքի և, թե՛ օտարներին՝ նրանց հետաքրքրությունը բորբոքելով թուրք-պարսկական տիրապետության տակ հեծող հայ ժողովրդի նկատմանը: Չամչյանը հայ ժողովրդի և հայոց լեզվի նախամայր ժողովուրդ և նախամայր լեզու լինելու հանգամանքը, նրա անցյալի փառքը ընդգծում էր՝ անհրապույր իրականությունը շեշտելու միտումով: Հետևաբար նրա վերոհիշյալ տեսությունը հետապնդել է նաև քաղաքական նպատակներ:

¹⁸⁷ Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ, էջ 1015–1016:

¹⁸⁸ Մատենադան, 1711:

¹⁸⁹ Տե՛ս հատ. Ա, Վննետիկ, 1749, Առաջաբան, էջ 4–19:

Ադամի և Նոյի նախամայր լեզու ունեցող ժողովրդին չի կարելի անօգնական ու անպաշտպան թողնել: Դա տուրք էր օտար տիրապետությունների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին, պայքար, որը XVIII դարի ընթացքում ունեցավ շատ հերոսական դրվագներ, որոնց ականատես էր եղել պատմագիրը: Հասարակական - քաղաքական նոր մթնոլորտի ինքնահատուկ արձագանքն էր դա Չամչյանի կողմից: Եվ պատահական չէ, որ ազգային-ոճմանտիկական հայեցողությամբ տոգորված «հայկական հայրենասիրության» այդ ուրույն գաղափարախոսությունը հետագայում ելակետ է դառնում նույնիսկ հայ բուրժուազիայի գաղափարախոսությունն արտահայտող գործիչների համար: Այստեղ պետք է շեշտել մի հանգամանք էս. XVI դ. և հատկապես XVII դ. եվրոպական երկրներում գնալով աճում էր հետաքրքրությունը մուսուլմանական երկրներով շրջապատված քրիստոնեական Հայաստանի նկատմամբ: XVII–XVIII դարերում Եվրոպայում մենք արդեն տեսնում ենք հայագիտական մի քանի դպրոցներ, որոնց ներկայացուցիչները (Թեզեոս Ամբրոսիոս, Պոստելուս Գվիլիելմ, Ֆրանչեսկո Ռիվոլա, Կղեմես Գալանոս, Անդրեաս Վրատիսլավ, Իռախիմ Սկրոդեր, Մատյուրինոս Լակրոզ, Վիստոն եղբայրներ և այլք) թե՛ հայերեն և, թե՛ օտար լեզուներով կազմում են բառարաններ, լույս են ընծայում հայերենի քերականություններ, հրատարակում են հայ պատմագիրներին, ուսումնասիրում են հայ ժողովրդի անցյալը: Անշուշտ, այդ հետաքրքրությունը տարածվեց նաև կրոնական ու քաղաքական կյանքի վրա: Իսկ արդեն XVIII դարի վերջերին, Մխիթարյան միաբանը փորձում էր այն ավելի բորբոքել: Չամչյանը միաժամանակ հայրենասիրության և ազգային ինքնագիտակցության պատգամներ էր ուսուցանում իր հայ ընթերցողներին: Մեր կարծիքով, հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագման վերաբերյալ նրա առաջ քաշած տեսակետները դրա լավագույն ապացույցն են:

ՎԵՐՋԱԲԱՆ

«Հայոց Պատմության» հատորներում Մ. Չամչյանը մանրամասնորեն անդրադարձել է հայ ժողովրդի քաղաքական, կրոնական և մշակութային պատմության խնդիրներին: Նա բարձրացրել է հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի հարցերը, որոնց, սակայն, տվել է կրոնական բովանդակություն: Աշխատության ամենաարժեքավոր կողմերից մեկն այն, որ Մ. Չամչյանը 5-րդ և 6-րդ գրքերում ներկայացրել է հայկական գաղթավայրերի պատմությունը, որը նա չի կտրել ժողովրդի ամբողջական պատմությունից, այլ դիտել է որպես նրա մի մասը: Այդ տեսակետից նրա աշխատության վերջին գրքերը պահպանում են հայ ժողովրդի պատմության կարևոր սկզբնաղբյուրի նշանակությունը, մանավանդ, որ նրա օգտագործած սկզբնաղբյուրների մի մասը չի պահպանվել: Աշխատության վեց գրքերում Մ. Չամչյանը տվել է ոչ միայն հայ ժողովրդի ամբողջական պատմությունը, այլև կատարել է ընդհանրացումներ: Յուրաքանչյուր գրքին կցված են ընդարձակ մեկնաբանություններ, ծանոթագրություններ, որոնցում ներկայացված են զանազան մատենագիրների վկայություններն ու ամենատարբեր հեղինակների կարծիքները: Այդտեղ Մ. Չամչյանը մանրամասն լուսաբանել է տարբեր հարցերի վերաբերյալ իր հայեցակետը և կատարել պատմաքննական վերլուծություններ:

Խոսելով Մ. Չամչյանի և մյուս Մխիթարյանների մշակութային-գրական գործունեության նշանակության մասին՝ Ա.Գ. Հովհաննիսյանը իրավացիորեն գրում է. «Մխիթարյաններն օբեկտիվորեն

ընդառաջում էին հայերի ազգակազմության պրոցեսին և անուղղակիորեն նույնիսկ նպաստում նրանց ազգային զարթոնքին»¹⁹⁰։ Այս տեսանկյունից պետք է մոտենալ նաև ականավոր բանասեր, հասարակական գործիչ Ա. Չոպանյանի՝ Մ. Չամչյանին տրված գնահատականին. «Չամչյան եղավ բանաստեղծը, որ հարկավոր էր, որպեսզի մեռած ցեղ մը վերակենցաղի, արդի հայության ստեղծողն է ան, Աբովյանին հետ, ուրիշ ճամբով նվազ ընդարձակ, բայց ավելի կենդանի գործով մը, մինևույն դերը կատարեց»¹⁹¹։

Անուրանալի է Մ. Չամչյանի ավանդը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությունը նոր ուղու վրա դնելու գործում։ Մի ամբողջ հարյուրամյակ (և դեռ ավելի) նրա «Պատմությունը» հայ և օտար ուսումնասիրողների համար հիմնական ուղեցույց էր Հայաստանի պատմության այս կամ այն հարցը հետազոտելիս։ Մ. Չամչյանի «Պատմություն հայոց» եռհատորյակում ոչնչացումից ու անհայտության քողից փրկվել, գիտական շրջանառության մեջ են մտել բազմաթիվ աղբյուրներ՝ մանր ժամանակագրություններ, հիշատակարաններ, վկայաբանություններ, կրոնական-դավանաբանական փաստաթղթեր, վավերագրեր, կոնդակներ, պատմական ողբեր և այլն։ Դրանով իսկ նրա երկասիրությունը դարձել է յուրովի մի սկզբնաղբյուր, որն իր հերթին անսպառ փաստական և աղբյուրագիտական նյութ է մատակարարել հետագա ուսումնասիրողներին։

Ճիշտ է Չամչյանը պատմագիտական նոր հայեցակարգ չստեղծեց, բայց նրա հետևորդները առավել համակողմանիորեն ու գիտականորեն ուսումնասիրեցին ազգային պատմությունը և դրեցին հայ նոր պատմագրության հիմնաքարերը. հիմնաքարեր, որոնք

¹⁹⁰ Ա.Գ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, եր., 1956, էջ 497։

¹⁹¹ Ա. Չոպանյան, Վենետիկի մխիթարյանները («Անահիտ», Փարիզ, 1899), լջ 360։

խարսխավում էին Չամչյանի գիտական ժառանգության հենքի վրա: Ի տարբերություն նախորդների՝ Չամչյանն արդեն պատմաբան է և ոչ պատմագիր, իր մշակած ժամանակագրությամբ, պատմության պարբերացման սխեմայով և կոտ տրամաբանությամբ. սկզբնաղբյուրները համադրելու, դրանք պատմա-քննական վերլուծության ենթարկելու մեթոդով մոտենալով նոր պատմահայեցողության առաջադրած սկզբունքներին՝ նա դարձավ այն կամրջող օղակը, որը կապում էր հայ հին և նոր պատմագիտական ուղղությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

«Արարատ» - ամսագիր, Վաղարշապատ, 1900:

«Արշալոյս Արարատեան» - լրագիր, 1853, նո. 430, 432 (հավելված):

«Բազմավէպ», 1981, N 3-4:

«Բան, հրավէր սիրոյ», Փարիզ, 1857:

«Եվրոպա» - լրագիր, Վիեննա, 1853:

«Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց»;¹ 1901:

«Լումայ» - ամսագիր, Թիֆլիս, 1899, գիրք Բ, հուլիս:

«Խնդիր միութեան հայոց», Փարիզ, 1861:

«Հայ ժողովրդի պատմություն» հատ. 4 (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), 1972:

«Հայրենիք» - ամսագիր, Բոստոն, 1933, նո. 2:

«Ճոռաքաղ» - ամսագիր, Մոսկվա, 1861, հատ. Բ., տետրակ ԺԲ:

«Մխիթար» (1701-1901), բացառիկ պատկերազարդ թերթ, Վենետիկ, 1901:

«Մխիթարյան հորեղյան», Վենետիկ, 1901:

«Մուրճ» - ամսագիր, Թիֆլիս, 1901, նո. 2:

Ալան Հ., Մխիթարյանը գրականության հանդեպ 1701-1901, Վենետիկ, 1902:

Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901:

Ալպոճյան Ա., Ազգային սահմանադրությունը ու իր ծագումը և կիրառությունը, տե՛ս «Ընդարձակ օրացույց ս. Փիկյան հիվանդանոցի հայոց», Կ.Պոլիս, 1910:

Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հատ. Ա, Երևան, 1958:

Այվազյան Ա., Շար հայ կենսագրությանց, Կ.Պոլիս, 1893:

Այվազովսկի Գ., Ուրուագիծ ոգւոյ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ, Փարիզ, 1857:

Անանիկյան Մ., Քննական ուսումնասիրություններ, Նյու-Յորք, 1932:

Առաքելյան Ա., «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն», հատ. 3-րդ, Երևան 1975:

Աստվածաշունչ Գիրք, Վենետիկ, 1733:

Ավգերյան Մ., Ժամանակագրութիւն Վանացս, հատ. 2:

Ավգերյան, Համառօտ նկարագիր Մխիթարեան միաբանութեան ի Վենետիկ ի կղզին սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1819:

Բաբկեն աթոռակից կաթողիկոս, Յուցակ ձեռագրաց Ղալաթիո ազգային մատենադարանի հայոց, Անթիլիաս, 1961:

Դարբինյան Մ., Հայ պատմագրությունը XIV-XVIII դ՛արերը

Դուրյան Ե., Պատմություն հայ մատենագրության, Կ.Պոլիս, 1885:

Եզյան Կ., «Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռովայ», Ս.Պետերբուրգ, 1884

Երիցյան Ա., Վենետիկի Մխիթարյանք, Թիֆլիս, 1883:

Զամինյան Ա., Հայոց եկեղեցու պատմություն, Նոր նախիջևան, 1909

Զավարյան Հ., Մխիթարյան միաբանության բաժանումը, տես՝ «Հայրենիք» – ամսագիր, 1931, նո. 12:

Ըստկարյան Վ., Եկեղեցական պատմություն, Վիեննա, 1827:
Թեոդորյան Ս., Պատմություն Մուրատյան եւ Հայկազյան
վարժարանաց և Մխիթարյան Աբբայից, հատ. Գ, Փարիզ, 1866:

Թորոսյան Հ.Վ., Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացուդ,
Վենետիկ, 1901:՝

Թոփճյան Հ., Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենե-
տիկ, 1962:

Ինճիճյան Ղ., Ազգասէր, ճառ ասացեալ ի փոյթ յորդորանաց
յընտելութիւն սիրոյ ազգի և իր զգուշութիւն նորին ընդդիմակաց
ախտիցն հակառակաց, Վենետիկ, 1815:

Լեո, Հայոց գրականությունը 18-րդ դարում, «Մուրճ» ամսա-
գիր, Թիֆլիս, 1901, 1, 2, 4, 8:

Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ, Երեւան, 1946:

Խաչկյան Հ., Աղաղակ սրտի ընդդեմ վատասիրտ արանց, որք
խոռվին ի բարի գործս այլոց, Կալկաթա, 1873:

Հ. Աճառյան, Պատմություն հայոց նոր գրականության, պրակ
Ա, Վաղարշապատ, 1906:

Հակոբյան Տ.Հ., «Հայերի պայքարը կաթոլիկական միսիանե-
րի ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (17-18-րդ դդ.)»;
տե՛ս «Արեւելագիտական ժողովածու» հատ.Ա, Երեւան, 1960:

Հովհաննիսյան Ա., «Նալբանդյանը եւ նրա ժամանակը»,
գիրք 2-րդ, Երեւան, 1956:

Հովհաննիսյան Ա.Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի
պատմության, հատ. Բ, Երևան, 1959:

Հովհաննիսյան Ա.Գ., Նալբանդյանը և նրա ժամանակը,
գիրք երկրորդ, Եր., 1956:

Ղազիկյան Ա., Համառոտ գրական պատմություն նշանավոր
Մխիթարյան հարց Վենետիկո, տե՛ս «Մխիթար» թերթ, Վենետիկ,
1901:

Ղազիկյան Ա., Պատկեր Վենետիկյան Մխիթարյան հայկաբանության, տես «Գեղունի», Վենետիկ, 1903

Ճանաչյան Մ., Պատմություն արդի գրականության, հատ. Ա., Վենետիկ, 1953:

Ճեմճեմյան Հ.Ս., «1809 Պոլսոյ միութենական շարժումը և Հ. Միքայել Չամչեան», Հանդես ամսօրյա, 1987

Ճեմճեմյան Հ.Ս., «Հ.Միքայել Չամչեան եվ իր Հայոց Պատմութիւնը», Բազմավէպ 1981, հ. 3-4:

Ճեմճեմյան Ս., Գեորգ դպիր Տեր-Հովհաննիսյան (Պալատեցի) և Մխիթարյանները, տես «Բազմավէպ», 1982, N 1-2:

Ճիվանյան Ն., Առձեռն բառարան հատուկ անվանց, մասն 2-րդ, Կ. Պոլիս, 1879:

Մ.Պ., Վարքագրութիւն Հարություն ամենայն Պէզճեան Խազէզ անվանելոյ ազգային անզուգական բարերարի, Թեոդոսիա, 1872:

Մաղաք-Թեոփիլյանց Մ.Վ., Կենսագրութիւն երեւելի արանց, հատ. Ա, Վենետիկ, 1839:

Մաշտոցի անվան մատենադարանի «Վահան հաւատոյ»-ի գրչագրերը (ձեռագիր նո.նո. 1936, 2640, 2823, 2926, 3373, 4460, 9030, 9842, 6469, 8946, 9842, 9843, 9924):

Մատթեոս արք. Չուխաճյան Հանդիսարան ուղղափառության հայոց եկեղեցվո, Կոնստանդնուպոլիս, 1854:

Մըրմըրյան Հ., Սովերք հին դեմքերու, 1635-1900, Կ.Պոլիս, 1907:

Մըրմըրյան Մ., Մասնավոր պատմություն հայ մեծատուններու, (1400-1900), Կ.Պոլիս, 1909:

Մխիթարյան Հ., Միքայել Չամչյանի դերը հայոց լեզվի շահյուսության զարգացման գործում, «Բազմավէպ», 1969, նո. 8-10, 1970, նո. 9-10:

Մովսիսյան Հ., Հայաստանեայց անաքելական ս.եկեղեցու պատմութիւն, Վաղարշապատ, 1884:

Նազարյան Սո., Պատմութիւն Հայոց ազգի, տես Սո. Նազարյան, Երկեր, հատ.1, Թիֆլիս, 1913:

Նազարյանց Ա., Երկեր, հատ. 1-ին, Թիֆլիս, 1913:

Նալբանդյան Մ., «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք», «Երկերի լիակատար ժողովածու», հատ. Բ, Երեւան, 1948:

Նալբանդյան Մ., ԵԼԺ, հատ. 2-րդ, Երեւան, 1947:

Նալբանդյան Մ., ԵԼԺ. Երեւան 1940, հատ. 3:

Նալեան Հ., Գանձարան ծանուցմանց, Կ.Պոլիս, 1758:

Ոսկյան Հ., Յուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանի ի Վիեննա, հատ.Բ, Վիեննա, 1963:

Չամչեան Մ., Խրախնճան պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811, (տես նաև սույն գրքի վերահրատարակությունը՝ Կալկաթա, 1834):

Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, հատ. Բ:

Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հատ. Գ, Վենետիկ, 1786:

Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Յառաջարանութիւն:

Չամչեան Մ., Վահան Հաւատոյ:

Չամչեան Մ., «Քերականութիւն Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1779

Չամչեանց Մ., Մեկնութիւն սաղմոսաց, հատ. Ա-Ժ, Վենետիկ, 1815-1823 (յուրաքանչյուր հատորը 600-800 էջի սահմաններում):

Չամչեանց Մ., հրահանգ եօթնեկի, եօթնեակ եօթամբբ դասատրեալ, Վենետիկ, 1802 (նույն տարում երկու հրատարակությամբ),

«Պատկեր տօնից սուրբ Աստուածածնին», Վենետիկ, 1805, «Սեղան խնկոց», Վենետիկ, 1816 (վերահրատարակվել է 1817 թվին), «Մեկնութիւն Սետարանին Յովհաննոս» (անտիպ)

Չամչեանց Մ., Նուագարան օրհնութեանց, յորում մեկնին աւագ օրհնութիւնք Սաղմոսարանին մերոյ, Վենետիկ, 1801:

Չոպանյան Ա., Դեմքեր, հատ 1-ին, Փարիզ, 1924:

Չոպանյան Ա., Վենետիկի մխիթարչանները («Անահիտ», Փարիզ, 1899):

Պալասանյան Ստ., Պատմություն հայոց, Թիֆլիս, 1884:

Պալճյան Աղ., Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս, Վիեննա, 1878:

Պապակյան Հ., Մխիթար Աբբա եւ Մխիթարչանները, Նյու-Յորք, 1944:

Պատկանյան Գ., ծաղկաքաղ ի լիակատար կենսագրութենէ սրբազան հայրապետի Ներսիսի Ե. վեհափառ եւ ազգասեր կաթողիկոսի Ամենայն Հայոց, հատ. Ա, Զմյուռնիա, 1876:

Պերպերյան Ա., Պատմություն Հայոց, Կոնստանդնուպոլիս, 1871:

Պողարյան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հատ. Բ, Երուսաղեմ, 1967:

Պողոսյան Ս., Միքայել Չամչյան, տե՛ս հայ մշակույթի նշանավոր գործիչները, Երևան, 1975:

Պոտուրյան Մ., Մխիթար և Մխիթարյանք, Բուխարեստ, 1922:

Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974:

Սարգիսյան Բ., Երկհարյուրամյա գործունեություն և նշանավոր գործիչներ Վենետիկո Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1905:

Մարգսյան Բ., Երկհարյուրամյա կրթական գործունեություն
Վենետիկո Մխիթարյան միաբանության, հատ. Ա. Վենետիկ, 1936:

Սիրունի Հ.Ճ., Պոլիս և իր դերը, Առաջին հատոր (1453–1800),
Բեյրութ, 1965:

Տայան Ղ., Մայր Դիվան Մխիթարեանց Վենետկո ի ս. Ղա-
զար (1707–1773), Վենետիկ, 1930:

Տաշյան Հ., Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին
Մխիթարյանց ի Վիեննա, Վիեննա, 1895:

Տեր-Ավետիսյան Ա., Ցուցակ ձեռագրաց նոր Ջուղայի Ամե-
նափրկիչ վանքի, հատ. Ա. Վիեննա, 1970:

Տեր-Միքելյանց Ա., Մխիթարյանք գրականության առջև տես
«Բիւզանդիոն», 1901:

Տերտերյան Ղուկաս վարդապետ, Աբբա Մխիթարայ վարդապե-
տի արարեալ պատճառք, որք առբերին ընդդեմ նոցին, որք ասեն թե
ոչ երբեք պարտ է գնալ ուղղափառաց ի ժամն հայոց, Ջմյունիա,
1879, հմմտ. նաև «Մուրճ-ամսագիր», Թիֆլիս 1901, նո. 2:

Ութուջյան Ա., Պոլսահայ համայնքների միության խնդիրը և
Մ. Չամչյանը, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, N 3,
էջ 201–213:

Ութուջյան Ա., Միքայել Չամչյանի պատմագիտական հայացք-
ների գնահատման հարցի շուրջ, տե՛ս «Բանբեր Երևանի համալսա-
րանի» 1981, N 2, էջ 144–151:

Ութուջյան Ա., Միքայել Չամչյանի, «Պատմություն Հայոց» աշ-
խատությունը, տե՛ս «Երևանի համալսարան», հանդես, 1985, N 3,
38–41:

Ութուջյան Ա., Միքայել Չամչյան (կյանքի և գործունեության
համառոտ ուրվագիծ) տե՛ս, «Լրաբեր», 1988, N 9, էջ 71–85:

Ութուջյան Ա., Միքայել Չամչյանի դերը Վենետիկի Մխիթար-
յան միաբանության մատենադարանի ստեղծման գործում, տես

«Բամավէպ», Վենետիկ, 2001, N 1-4, էջ 241-250:

Քեչիշյան Մ., Յուզակ հայերեն ձեռագրաց Ջմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964:

Օրմանյան Մ., Ազգապատում, հատ. 2-րդ Կ.Պոլիս, 1914:

«Պատմութիւն անցից որ եղել ի Կոնստանդնուպօլիս», Կ. Պոլիս, 1818:

«Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեան 1784 ըստ աանդելոց այլևայլ մատենագրաց», հատ. Ա, Վենետիկ, 1784, հատ. Բ, Վենետիկ, 1785, հատ. Գ, Վենետիկ, 1786

D'Ohsson, Tableau general De L'Empire Ottoman, Paris, 1791.

La mort du P.M Chamchian a' Constantinopole, Journal Asiatique, Paris, Janvier 1824.

Neumann G.F.W, Versuch einergeschichte der armenischen literatur nach den Verken der Mechitaristen, Leipzig, Barth, 1836.

Noradounghian G., Recueil d'Actes Internationaux de L'Empire Ottoman, t. I (1700-1789), Paris.

Pelissie du Rausas G., Le regime des capitulations dans L'Empire Ottoman, Paris, 1910.

S.P. Somal Vuadro della storia litteraria d'Armenia, Venezia, S.Lazzaro, 1829.

Serpos G.di, Compendio storico di memorie cronologiche concernanti la religione e la morale della nazione armena, suddita dell'Impero Ottomano, Venezia, 1786, 3vol.

Serpos G.di, Dissertazione polemico-critica supra due dubbj di coscienza concernanti gli Armeni cattolici sudditi dell'Impero Ottomano, Venezia, 1783.

Б.М. Данциг, К вопросу о капитуляциях на Ближнем Востоке, см. «Народы Азии и Африки» 1971, N 3.

// **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ներածություն	3
Գլուխ առաջին	
Միքայել Չամչյան	
Կյանքը	15
Գլուխ երկրորդ	
Ժամանակը, հասարակական	
քաղաքական գործունեությունը	43
Գլուխ երրորդ	
Միքայել Չամչյանը և նրա	
«Պատմութիւն Հայոց» աշխատությունը	77
Վերջաբան	100
Օգտագործված գրականության ցանկ	103

ԱՆԻ ՈՒԹՈՒԶՅԱՆ

**ՄԻՔԱՅԵԼ ՉԱՄՉՅԱՆ
ԿՅԱՆՔԸ, ԳՈՐԾԸ**

Համակարգչային ձևավորումը՝ Նինետա Ադամյանի
Տպագրիչ՝ Լևոն Մուրադյան

Ստորագրված է տպագրության 25.02.2019 թ.
Տպաքանակը՝ 120 օրինակ

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄԻԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
ՐԱ. 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>

[1000 99]

//

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



FL0613652

π
A 105516

ISBN 078-9939-860-78-7



9 789939 860787